

4081

992
491.99-81-
2-15

918

2010

2010

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го Юня 1892 г.

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

ԻՐՐ ՅԱՌԱՋԱՐԱՆ

Սոյն գասագիրքը որ տաս տարի է ահա ծառայում է մեր գպրոցներին, լոյս է տեսնում այժմ, ինչպէս կը նկատի հետաքննին ընթերցողը, ըստ ամենայնի բարեփոխուած: Իր հիմնական ուղղութեանը հաւատարիմ մնալով հանդերձ, և բաց թողնելով նախորդ տպագրութեան մէջ պատահող քանի մի դժուարամարս նիւթերը, սոյն չորրորդ տպագրութիւնը ներկայանում է առաւել նպատակայարմար յօդուածներով լրացած: Մանուկների բնական աշխուժութիւնը վառ պահելու համար՝ վիպական հատուածները դրուած են խառը նկարագրական հատուածների հետ:

Որովհետեւ բովանդակութիւնը ծառայում է լեզուի ուսուցմանը, ուստի նրա ամենահարկաւոր, տարրական ու մեր ընտրած հասակին մատչելի լինելու չափ օրէնքների մատակարարելը անհրաժեշտ ենք համարում սկզբից իսկ սկսել: Այս նպատակով մենք այդ սկսում ենք ուղղակի առաջին դասից: Ամէն յօդուածում, ինչպէս առաջնորդում է մեզ դէպքը՝ ուշք ենք դարձնում լեզուի տարրական կանոնները բացատրող որ և իցէ բառի վրայ, և մեր կողմից էլ մի քանի օրինակներ յաւելացնելով՝ թողնում մենք, որ մանուկը ինքը իր յոգեբով մի յայտնի օրէնք եղբակացնի իր համար: Եւ այդ երկու մասն ենք բաժանում: I. մասնում են ըուն լեզուին և II. ում նրա ուղղագրութեանը վերաբերեալ հարկաւոր գիտելիքները, որ մանուկները ուսուցչի օգնութեամբ իւրացնում են: Բուն լեզուին վերաբերեալ բացատրութիւններից շատերի մասին մեր խօսքը շատ չերկարացնելու համար ոչինչ չենք ասել: Այդ բոլորը հարկաւոր դէպքում ուսուցիչն ինքը առանց դժուարութեան կ'անի ու կը լրացնի:

Ուղղագրութեան կանոնների բացատրութիւններն էլ որ
դրուած են փակագծերում, այնքան են բերուած միայն, որքան
ներում է մանկան հասկացողութեան աստիճանը: Ուղղա-
գրութեանը նպաստելու համար յօդուածների տակը ղետեղած
համանման օրինակներից եզրակացրած կանոնները մանուկների
մտքում խորը տպաւորելու նպատակով՝ քրքիս վերջը տեղ է
տրուած «Տառերի ժողովը» խորագրով զրուցատրական ձևի մի
ընդարձակ յօդուածի, որ իբրև անցածի կրկնութիւն՝ ամրոփում
է իր մէջ բոլոր սովորած կանոնները:

Լեզուի ուսուցման համար մի թէ և փոքրիկ, բայց սկզբնա-
կան պաշար ամբարեւելու նպատակով մենք դասերի վերջերումը
բերել ենք նա և նոյնանիշ (Synonyme) ու հականիշ (omonyme)
բառերը: Հականիշ բառերը, որոնք լեզուի աղքատութիւնն են
ցոյց տալիս՝ բացատրուած են: Բայց որովհետև դասագիրքը շատ
չծանրաբեռնելու համար նոյնը չենք արել նա և նոյնանիշների
վերաբերութեամբ, որոնք լեզուի հարստութիւնն են ցոյց տալիս,
ուստի դարձեալ ուսուցչին է մնում, որ՝ որքան հնարաւոր է,
ինչը բացատրի մանուկներին:

Անստորագիր յօդուածները յօրինողի ազատ փոխադրութիւն-
ներն են:

ՍԱՐԳՍԻՆԳ Թ. ՆԱԶԱՐԵԱՆՑ:

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Մ. Բ. ՆՈՒԹԻՔՆ ԵՒ ՄԱՐԳ.

1. ՀԻՆԳ ՄԱՐԳ

Մեր ձեռքի Հինգ մատները միմեանց համար եղբայր-
ներ են: Եթէ մէկը միւսին ուզում է ապտակ խփելով վա-
խեցնել՝ Հինգ աղբօրը տեսնում ես՝ առում է: Եւ ճշմարիտ
որ եղբայրներ են, այն էլ շատ սիրով ու անբաժան եղբայր-
ներ: Եթէ մարդիկ էլ միմեանց այնպէս սիրով եղբայրութիւն
անեն, էլ ի՞նչ կ'ուզէինք. այն ժամանակ աշխարհքս գրախտ
կը դառնար, և ամենքս բաղդաւոր կը լինէինք: Ինչո՞ւ: Որով-
հետև մեր Հինգ մատները միշտ պատրաստ են միմեանց օգ-
նելու, երբ մենք մի որ և իյէ գործ ենք ուզում շինել:
Սյապէս որ անենք, էլ անօգնական մարդ չի մնայ:

Ինչպէս ամէն մարդ անուն ունի, այնպէս էլ մեր մատ-
ները. և սրանք են՝ բոյթ, ցուցամատ, միջամատ, անանուն
և ճկոյթ: Ծկոյթը քաղցած և ողորմելի մարդու օրինակն է.
անանունը անյայտ և անյոյս մարդու նմանութիւնն է. մի-
ջամատը հաստատ յոյս ունեցող մարդու օրինակն է, և իբր
բարձր հասակով վերեւից նայում է ամենքի վրայ. ցուցամա-
տը կասկածոտ ու երկմիտ մարդու նմանութիւնն է, և բոյ-
թը կոպիտ մարդու օրինակն է:

Մէկ օր, երբ Հինգ մատներն էլ քաղցած էին և ուտե-
լու հաց չունէին, ճկոյթը միւսներին ասեց.

— Եղբայրներ, ինչպէս տեսնում եմ, ամենքս էլ քաղ-
ցած ենք, մանաւանդ ես, որ ամենիցդ նուազ եմ. մի բան
մտածենք:

— Բայց Հայ հրապարակ ճարենք, Հարցրեց նրան անյոյս
կերպով անանունը:

— Աստուած կը տայ. վրայ բերեց միջամատը, որ ոչ
մի նեղութիւնից չէր վախենում:

— Որ չտայ, կասկածանքով Հարցրեց ցուցամատը:

— Կը գնանք կը գողանանք, գոռաց կոպիտ բոյժը:

Աստուած բարկացաւ նրա վրայ այդ անկարգ պատաս-
խանի համար, գլխին խփեց, և նա միւսների շարքից ցած
ընկաւ:

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ.

I. ա. — Կասկածոտ, վախկոտ, երկչոտ, գլխոտ, խնա-
մոտ: — Բրդոտ, փշոտ, մազոտ, աղտոտ, ցեխոտ:

բ. — Անանուն, անտուն, անտէր, անկարգ, անխելք,
անիրաւ:

2. ՄԱՐԴՈՒՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Մի անգամ մարդուս անդամները վիճեցին միմեանց հետ
և վճռեցին որ էլ չծառայեն իրանց տիրոջը:

Ոտքերն ասեցին. «Ինչո՞ւ մենք պէտք է միշտ ման ա-
ծենք մեզ վրայ ամբողջ մարմինը. այսքան ծառայելն էլ
բաւական է: Թո՛ղ այսուհետեւ ինքն իր համար ուրիշ ոտքեր
ճարի ու ման գայ, ինչքան կամենայ»:

Ձեռքերն ասեցին. «Մենք էլ չենք ուզում ուրիշների
համար ծառայի պաշտօն կատարել. ձեզ համար ուրիշ ձեռ-
քեր ճարեցէք ու թող նրանք շինեն ձեր գործը»:

Բերանը փնթփընթաց. «Հապա ես լիմար եմ, որ չար-
չարուելով կերակուրը ծամեմ, թէ ինչ է՝ մեր տէրը իր փո-

րը լցնի ու յետոյ պարոնի նման ձգուի իր համար. ո՛չ, թող
իր համար ուրիշ բերան գտնի. այսքան ծառայելս էլ բաւա-
կան էր»:

Աչքերն էլ միւս կողմից ձայն տուին. «Մեզ էլ թող
այսուհետեւ ների մեր տէրը. բաւական է, ինչքան նրան
ծառայեցինք, վառած լաւտերների պէս գիշեր ցերեկ ճանա-
պարհ ցոյց տալով նրան»:

Սյուպէս ամէն մէկը իր դանգաճոն ասեց ու գործելուց
ձեռք վեր առաւ: Բայց գիտէ՞ք՝ ինչ պատահեցաւ: Երբ մար-
դուս բոլոր անդամները ձեռք վեր առան իրանց պաշտօնից,
այն ժամանակ մարմինն էլ անսնուհդ և անշարժ մնալով
սկսեց թուլանալ, նիւարիլ, և փոքր էր մնացել որ մեռնէր:
Եւ որովհետեւ մարմնի մեռնելովը բոլոր անդամներն էլ պէտք
է չորանային, ոչնչանային, այն ժամանակը նոր հասկացան
իրանց սխալմունքը. և առաջուայ պէս նրանցից ամէն մէկը
իր գործին կտաւ ու մարմինն էլ ուժ ստացաւ, կրկին կեն-
դանացաւ:

II. ա. — Մարդ, վարդ, դարդ. բուրդ, ժողովուրդ. (հարթ,
կարթ, զարթել):

բ. — Մեռնել, առնել, բռնել, խառնել.

«Ն» տառից առաջ «ռ» է գրւում միշտ:

գ. — Բերան, գերան, դերձան, բերդ, բերել:

դ. — Սմշոջ, ամբար, ամբարիշտ, ամբիոն, ամբար-
տաւան, համբաւ, թումբ, թմբուկ, սեպտեմբեր, աշխատու-
թեամբ, քաջութեամբ:

3. ԱՌԱՒՕՏ.

Ա.

Առաւօտ է: Ինչպէս ամէն կողմերը, այնպէս էլ Հայաս-
տանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղա-
ցիները արդէն զարթել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ

գալիս նստում է երգիկների վրայ ու կանչում: «լծէ, լծէ»: Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը: Տների մէջ մատակներն ու կովերը կթել են: Ոչխարի հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում:

Գիւղի աղջկերքն էլ խումբ խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղկներ կոխելով, ծաղկներ քաղելով և իրար վրայ ածելով, ճիծաղելով, խայտալով: Նրանք հանգիւյում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանել. դու ասա՝ աղջկէքքը թեւաւոր թռչուններին, թէ թռչունները ոտնաթուիկ աղջկանց: Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու. աղջկերքը՝ «քա՛, քա՛, կաքաւները՝ գա՛ւ, գա՛ւ»:

Բ.

Կոռնկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի բարձր տեղերովն անցնելով «կռռ, կռռ» է կանչում. — ծառայ եմ ձայնին:

Երկարասրունք Արագիլը կտուցը սրած՝ բոյնից դուրս եկել, «հօդ, հօդ» ձայնելով՝ դէպի դաշտն է վազում՝ ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու:

Հորթան-տարուկը գիւղի տանիքների վրայ ու բակերի մէջ է թագնուել որ չորթան յափշտակի:

Կոյր Բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որդնում, որ ծածկուի ալնտեղ, վերջացնելով իր «վայ, վայ»ն, որով սգում էր մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած:

Ձկնկուկը գետերի ափերն է վազում ու «ձրձ, ձրձ» կանչելով՝ ձուկ մուկ է որոնում կուլ տալու:

Բաղն ու սազը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւավարների պէս թռավրում են ու երգում:

Սանրակատար Հօպօպը անհանգիստ ուստոստում է և անդադար աղաղակում «յօպ, յօպ»:

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ձերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից, գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իր ձայնն է լըսեցնում:

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայների հետ և ամէն լսողի ուշք ու միտքը վերացնում:

Բարբարոս Բագէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառտելու:

Անգղները ձրի ալրոդ քիւրդերի պէս մի սպանուածի հոտ են առել, գնում են նրա դիակի մսերը կոդոպտելու:

Ա.հա Արծիւն էլ երևում է. նրա հօր թևերի բաղխումից օդը շառաչելով պատուում է. բոլոր թռչունները միանգամից լռում են, մինչև անցնի հեռանայ ալդ ահեղ ու փառահեղ թագաւորը:

Գ. Ա. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ.

I. Թռչնիկ, մանկիկ, առողիկ. — Տնակ, նաւակ, գետակ. — Գառնուկ, ձագուկ, հորթուկ. — Գրքոյկ:

II. Բագէ, բոպէ, կիւրակէ. — Մանէ, Նունէ, Հեղինէ. — Ոսկէ, արծաթէ, երկաթէ:

Ոչ մի բառ չէ՝ վերջանում «է» տառով:

4. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Դեռ նոր է զարթել ծերունի հայրը,
Գոմն է աւելում Սառի ժիր մայրը,
Յոգնած խաղերից, անուշ երազում
Քնած է եղբայրը, զարթել չէ ուզում:

Լուսացուեց ծերունին դստեր բերած ջրով,

Սլեզարդ մօրուքը սանրեց սանրով:

Նա խաչակնքեց դէմքն երեք անգամ,

Սառա վերարկուն, դիմեց դէպի ժամ:

Կինը սովոր էր տան մէջ աղօթել,

Սկսեց նա լետոյ կովերը կրթել:

Փրփրադէզ կաթնի անուշահոտ շոգին

Բերկրանք էր բերում տանտիկնոջ սրտին:

Բըռնել էր Սառան Հորթեր նորածին,

Որ չը խանգարեն նոքա մօր գործին:

Չոր էին նոքա և խիստ անըզգամ,

Ծըծում էին ամբողջ կաթը շատ անգամ:

Մէկին աւելի սիրում էր Սառան,

«Շուշանիկ» անուն դրել էր նորան:

Ներկել Հինայով խալտերը ճերմակ

Եւ պարանոցից կախել էր զանգակ:

Դեռ նոր նախիրը քըշում են գիւղից,

Խըրխինջ, բըռբըռոց են ամէն տեղից:

Խառն բառաշմունք, աղաղակ ճըչին

կազմում են ուրախ ներդաշնակութիւն:

Կանաչին է տալիս ընդարձակ արօտ,

Դալար խոտերին անձկանօք կարօտ

Վազում են հօտեր, տալով ճօխ տրտիկ,

Սառնորդում է նոցա հովւի սրինգ:

Սառան տաւարը հասցրեց նախիրին,

Հանեց թոնիրից վառուցքը մօխրին:

Լըցրեց կրթոցում, տարաւ դուրս ածել,

Ծուլութեան վերայ նա չէր մըտածել:

ԲԱՓՓԻ.

Ն ո յ ն ա ն ի շ բ ա ու ե ռ. — Աշխատասէր, ջանասէր, ժրա-
ջան, արիաջան. — Դուստր, աղջիկ. Ուստր, տղայ. — Բերկրանք,
ցնծութիւն, խնդութիւն, ուրախութիւն:

II. ա. — Հորթեր, կովեր, քարեր, փայտեր: —

բ. — Արօտ, կարօտ, նարօտ, առաւօտ. — Ծանօթ, ա-
մօթ, անօթ, թնդանօթ. — Տօն, պաշտօն, գործօն. — Օդ, օձ,
օթոց, օժիտ. Օրհնել, օծել, օգնել: — (Ով, ովհիանոս, Ովսաննա):

5. ԿՈՅԸ Է ԿԱԹԸ.

Կոյը ծնուած մի մարդ հարցրեց մէկին.

— Ի՞նչ գոյն ունի կաթը:

— Կաթը թղթի պէս սպիտակ է, պատասխանեց միւսը:

— Ուրեմն, թղթի պէս ձեռքումը ծալում է, հարցրեց
կոյրը:

— Ո՛չ, պատասխանեց նա, կաթը բամպակի պէս սպի-
տակ է:

— Ուրեմն, կաթն էլ բամպակի պէս փափուկ ու թե-
թեւ է:

— Ո՛չ, եղբայր, կաթի սպիտակութիւնը թէ ուզում ես
հասկանալ, քեզ օրինակ սպիտակ հաւկիթը:

— Նշանակում է՝ կաթն էլ հաւկիթի պէս շո՛ւտ է կո-
տրըռում:

— Ո՛չ, ոչ, կաթը ո՛չ կոտրուող է, ոչ պատռուող, այլ
ձեան պէս սպիտակ է:

— Ե՛, հասկացո՛յ, ասեց կոյրը, ուրեմն կաթն էլ ձեան
պէս սո՛ւն է:

Այսպէս, կաթի սպիտակութիւնը կոյրի համար անհաս-
կանալի մնաց:

ՏՈՒՍՏՈՅ.

II. ա.—Հաւ, նաւ, լաւ, եկաւ.—Աւագ, աւագան, գաւազան.—Հիւանդ, հաշիւ, անիւ, աղնիւ:—
բ.—Սրին, անկիւն, սիւն, ձիւն, աղբիւր, բիւր, հիւր:
գ.—Նաւաւար, օրավար, զօրավար, արագավար:
դ.—Այսպէս, այդպէս, այնպէս, Իսկպէս, կէս, ծէս, հանդէս, աղո՛ւէս.—Ներսէս, Մովսէս, Արիստակէս: (Նրէս, տնտէս, հեռատէս, կարճատէս).—

6. Մ Ա Յ Ի Ս.

Ահա հասաւ Մայիսը, մեղրակաթ ամիսը, տասերկու եղբայրների մէջ ամենագեղեցիկը: Մեր հայրենիքում այս ամիսը հեղիկ նազիկ պարում է բլուրներում ու հովիտներում: Նրա ձեռքն ու ծոցը, գլուխն ու գօտին լցուած է է փունջ փունջ գոյն գոյն ծաղկներով: Մայիսուայ գալովը փրփրաւորուած աղբիւրները կանչում քչքչում են. քնքշափետուր թռչնիկները երգում պարում են. թեթեւթաթիկ ուլերն ու գառնուկները ցատքում վազվզում են: Անուշահոտ հովերն ու զով գեփիւռները տարածում են ամէն կողմեր գարնան անուշահոտութիւնը, երբ բլրէ բլուր ցատքելով անցնում վազում է գեղեցիկ Մայիսը: Նրա շաղակաթ շնչից ծաղկները վառ վառ շողշողում են, պտուղները խայծ խայծ կարմրում:

Հ. Ղ ԱԼԻՀԱՆ.

Հ ա կ ա ն ի շ բ ա ու ե ր.—Ձեռքս ցաւում է:—Այս քո գրածն է. ես քո ձեռքը ճանաչում եմ:—Եղբօրս համար մի ձեռք շոր առալ:

II.—Մեղր, գեղ, տեղ, նեղ. գեղեցիկ, հեղուկ, սեղան:

7. Գ Ա Ր Ո Ւ Ն.

Շրթեղ պատկեր.	Տէս երկրագործ.
Դաշտ և արօտ	Ջուրգ եզներով
Կեանք են առել	Սկսում է գործ.
Այս առաւօտ.	Ուրախ սրտով.
Պայծառ արփին	Սուլում է երգ.
Եւ բոյս գետնին	Վարում է հերկ.
Միմեանց նայեն	Որ արար մերկ.
Առնեն կարօտ:	Ծածկէ հունձով:
Կանաչ կապերտ	Տէս ամէն տեղ
Համատարած.	Հըրճուանք և սէր,
Նըկարակերտ	Թրուչոց գեղգեղ
Դաշտն է ծածկած.	Եւ դաշնակներ.
Որի չերան	Տէս մեր մըրջիւն
Կը շողշողան	Յերեկն ողջոյն
Մեխակ, շուշան	Անվըրընջիւն
Գոյն գոյն ծաղկած:	Փողվէ սերմեր:

Այս քաղցր բոյր

Եւ տեսք զըւարթ,

Գողտրիկ համբոյր

Ծաղկանց բարդ բարդ.

Այս ծով կանաչ,

Թրուչոց աւաչ,

Դառանց բառաչ,

Շարժեն ըզմարդ:

I.—Շքեղ, ուժեղ, զօրեղ, համեղ:

II. ա.—Գործ, գորտ, մորեխ.—Խմոր, խնձոր, խոշոր, բոլոր, սալոր, կտոր, խոր, նոր, ձոր:

բ.—Ծով, կով, սով.—Սովորելով, մօտենալով, հասկանալով:

8. Ա Ր Զ Ա Գ Ա Ն Ք.

Մի երեխայ մէկ օր իրանց գիւղին կաթած անտառում ձայն տուեց. «Էհէյ», «Էհէյ», կրկնուեցաւ ձայնը և նա մնաց զարմացած: Նա աղաղակեց. «Ո՛վ ես»: «Ո՛վ ես», կրկնեց ձայնը: Երեխան նեղացած ձայն տուեց.

—Ո՛վ որ ես՝ լաւ յիմարն ես:

—Յիմարն ես, կրկնուեց անտառի միջից:

Այս անգամ երեխան սաստիկ բարկացաւ և, ինչքան վատ բառեր էր սովորել փողոցի անպիտան տղաներից, բոլորը ասեց, բոլորը կարգով ուղարկեց անտառի ամէն կողմը: Կրկնուող ձայնն էլ նրա բոլոր շնորհալի ու քաղաքավարի խօսքերը՝ ինչպէս ստացաւ, այնպէս էլ վերագարծրեց նրան:

Երեխան էլ չգիմացաւ. վաղեց ու վազվզեց անտառի բոլոր կողմերը, քրքրեց ծառերի ճիւղերն ու թփերի ոստերը. նայեց ժայռերի խողովները որ իրան ծաղրող լանդուզն տղայից վրէժը հանի: Բայց նրա ման եկած տեղերում մի թրուչուն, մի ճանճ էլ չկար. ամէն տեղ դատարկ էր և ամէն բան լուռ:

Երբ այսպէս անօգուտ փնտռելուց ոչ ոքի չգտաւ, յոգնած ու նեղացած տուն վերադարձաւ և պատմեց իր մօրը՝ թէ մի ստահակ տղայ թագնուել է անտառում ու իրան վատ խօսքեր ասում:

—Ա՛խ, սրգեակս, ասեց մայրը, դու սխալուսմ ես, դու ինքդ ես մեղաւոր: Անտառում ոչ ոք չկայ. և ինչ որ լսել ես, բոլորը քո սեպհական խօսքերն են լսել: Ինչպէս որ շատ անգամ երեսդ տեսել ես ջրի մէջը, այնպէս էլ այս անգամ քո խօսքերն են լսել անտառում կրկնուելիս: Այդ կրկնուող խօսքերին ասում են Արծազանք:

Եթէ դու մի քաղաքավարի, օրինաւոր բառ ասէիր, ինքդ էլ մի այգալիսի բառ կը լսէիր: Միշտ էլ այգալիս է պատահում. կարասին ինչ որ ձայն տաս, այն կը լսես: Եթէ

ուրիշները պատուում են մեզ, այդ նրանից է, որ մենք էլ նրանց ենք պատուել: Ուրիշների մեզ պատուելը մեր արածի, մեր պատուելու արձագանքն է:

I. ա.—Թռչուն, սողուն, փխրուն, փայլուն, սիրուն:

բ.—Որդեակ, հոգեակ, հայրիկ, մայրիկ, քոյրիկ, դստրիկ, սանիկ:

II. ա.—Որդեակ, սենեակ, մանեակ.—Ներսիսեան, Գալիանեան, Յովնանեան:

բ.—Ոստ, ոսկի, ոսկոր, որդի, ստք, սչխար, ոգի, ողկոյզ:

9. Մ Ա Յ Ի.

Ես էլ փոքր ժամանակս մայր եմ ունեցել: Գիտէ՞ք՝ ինչ է նշանակում մայր ունենալ: Մայր ունէ՞ք դուք: Գիտէ՞ք՝ ինչ է նշանակում երեխայ լինել. թոյլ, մերկ, թշուառ, քաղցած, մենակ աշխարհում: Եւ զգո՞ւմ էք որ ձեր մայրը ձեզ մօտ է, ձեր շուրջը. որ ման է գալիս, երբ դուք ման էք գալիս. կանգնում է, երբ դուք կանգնում էք. լալիս է, երբ դուք լալիս էք:

Ո՛չ, դեռ ոչ ոք չգիտէ թէ՛ ինչ բան է կինը: Նա մի հրեշտակ է, որ նայում է ձեզ. որ սովորեցնում է ձեզ խօսել. որ սովորեցնում է ձեզ ծիծաղել. որ ձեզ սովորեցնում է սիրել. որ տաքացնում է ձեր մատները իր ձեռքերում, ձեր մարմինը՝ իր ծնկներում, ձեր հոգին՝ իր սրտում: Որ տալիս է իր կաթը, երբ դուք փոքր էք. իր հացը, երբ դուք մեծ էք և իր կեանքը՝ յաւիտեան: Որին դուք ասում էք՝ «մայրիկ» և, որ ձեզ ասում է՝ «Որդեակ» մի այնպիսի քաղցր ձայնով, որ Աստուած էլ է ուրախանում:

Հ ա կ ա ն ի շ.—Հայոց աշխարհը դրախտի նման գեղե-

ցիկ է:—Աշխարհումս մարդուս լաւ ու վատ անունն է մը-
նում:—Ամբողջ աշխարհը լցուել էր ուսումնարանում:

II. ա.—Աշխարհ, ճանապարհ, խոնարհ, շնորհ:

բ.—Հայր, մայր, եղբայր. դալ սալ, քալ:

գ.—Երեխայ, քահանայ, ընծայ, ծառայ:

դ.—Թշուառ, դժուար, գուարթ, Աստուած:

ե.—Քաղցած, պառկած, կանգնած, հասած, ասած:

10. Մ Ա Յ Ր Ի Կ Ս.

Ո՞վ կերակրեց ինձ՝ տալով ծիծ անուշ,
Ո՞վ առաւ գիրկը՝ որ նընջեմ մուշ մուշ,
Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց.

Մայրիկս:

Երբ աչքերիցըս քունը փախաւ գնաց,
Ո՞վ ինձ անուշիկ օրօրներ ասաց,
Եւ թեւերի մէջ օրօրեց որ չը լամ.

Մայրիկս:

Ո՞վ գլխիս վերեւ նըստեց ու հըսկեց,
Երբ քացը քնում էի որորոցիս մէջ,
Եւ սիրոյ քաղցրիկ արցունքներ թափեց.

Մայրիկս:

Երբ սաստիկ ցաւով լալիս էի միշտ,
Ո՞վ աչքս սըրբեց, թեթեացրեց իմ վիշտ,
Ահ ու դող ըզգաց, որ ես չը մեռնեմ.

Մայրիկս:

Ո՞վ վագեց օգնել, երբ ես ընկալ վար,
Եւ պատմեց ինձ վեպ, որ լինի ինձ ճար,
Համբուրեց ցաւած տեղը՝ ինձ քնքշաբար.

Մայրիկս:

Ո՞վ աղօթք սովորեցրեց բերնիս քնքոյշ,
Որ պաշտեմ Աստուած, լինեմ միշտ զգոյշ,
Եւ խելքով շնորհքով կեանքըս անց կացնեմ.

Մայրիկս:

Եւ կարող եմ եւ մոռանալ քեզ, հոգիս,
Քեզ, որ սիրեցիր և ինձ հոգացիր,
Ու անշափ ցաւեր ոչինչ համարեցիր,

Մայրիկս:

Ո՞հ, ալիսիս բան մըտքովս չի անցնի,
Եւ դու, ով Աստուած, միմ արեւ պահիր,
Որ ես վարձատրեմ քո անշափ հոգսեր,

Մայրիկս:

Իսկ երբ կը դաւնաս տըկար պառաւուրկ,
Իմ հըզօր բազուկ քեզ կը լինի նեցուկ,
Եւ պէտք է սփռիմ քո բոլոր ցաւեր,

Մայրիկս:

Եւ երբ որ տեսնեմ՝ գլուխդ ծռուի,
Ես պէտք է հընկեմ մօտ քո սրնարի,
Եւ սրբօրս խորքից պիտ արցունք թափեմ,

Մայրիկս:

Մ. ՄԱՍՈՒՆԵԱՆ.

I.—Քնքշաբար, քաղցրաբար, բարեկամաբար, երեխայա-
բար, սովորաբար, բարեբաղդաբար՝ տալիսըզդուաբար: մօտս լի-
թոյր: II. Զգոյշ, քնքոյշ, անուշ, լիկ, բոլորովս մըտքս բոլոր,
թոյր:

11. ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՏԱՍԱՆԸ.

Հրէաների Սողոմոն անունով թագաւորին Աստուած ի-
մաստութիւնով լցուել էր: Նրա խմածաւութիւնը աշխարհքին
յայտնի եղաւ հէնց նրա թագաւորութեան առաջին օրերում:

Մէկ օր Թադաւորի մօտ եկան գանգատելու երկու կին: Նրանցից մէկն ասում է.

—Ո՛հ, տէր իմ, ես ու այս կինը բնակում ենք մի տան մէջ: Աստուած ինձ մի որդի տուեց. երեք օրից յետոյ սա էլ ունեցաւ մի որդի: Մեր տանը մեզնից աւել ոչ ոք չէ բնակում. մենք մենակ ենք: Պատահմամբ այս կինը գիշերով ընկնում է իր երեխայի վրայ և ինքը չիմանալով այդ՝ երեխան խեղդուում մեռնում է: Կէս գիշերին սա վեր է կենում, իմ երեխա գրկիցս առնում է և իր խեղդուած որդին իմ ծոցն է դնում: Առաւօտը զարթում եմ երեխայիս ծիծ տալու, տեսնում եմ որ մեռած է երեխաս: Իսկ ցերեկը ուշադրութեամբ քննելով տեսնում եմ որ իմ որդին չէ:

—Այդպէս չէ, ասում է միւս կինը. կենդանին իմ տղան է, մեռածը քոնը:

—Ո՛հ, մեռածը քո տղան է, իսկ կենդանին իմը, պատասխանում է գանգատող կինը:

Թադաւորը տեսնելով որ չկայ մի վկայ, որից կարողանար ճշմարիտն իմանալ, առանց երկար մտածելու հրամայում է սպասաւորներին. «Մի սուր բերէք այստեղ»: Երբ սուրը բերում են, Սողոմոնը հրամայում է. «Կէս արէք այս կենդանի երեխային. մի կէսը տուէք մէկին, միւս կէսը՝ միւսին»:

Կանանցից մէկն ասում է Թադաւորին. «Միք սպանի»: Իսկ միւսն ասում է. «Ո՛հ, ո՛չ ինձ լինի, ոչ քեզ. թող կտրեն»:

Թադաւորն ասում է. «Առաջին կնոջը տուէք երեխան էլ միք կտրէ» որովհետեւ նա է հարազատ մայրը:

«Աստուածաշունչ».

I.—Թադաւոր, զօրաւոր, բաղտաւոր, ձիաւոր, հազաբաւոր:

II.—Գանգատող, կարգացող, նկարող, զրող, երգող:

— 12. ԵՐԿՈՒ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ.

Գայնանային պայծառ առաւօտ էր: Ես կանգնած էի գիւղի մէջտեղը, որտեղից աջակողմեան ճանապարհը դէպի ուսումնարանն է տանում. իսկ ձախակողմեան մեծ ճանապարհը՝ դէպի մարգագետինը: Ես այնտեղ տեսայ երկու երեխայ, որոնք ունեցան հետեւեալ խօսակցութիւնը:—

—Բարի լոյս, Ս.ըշակ,

—Աստծու բարին, Բագրատ:

—Ո՞ւր ես գնում:

—Ուսումնարան:

—Է՛հ, ուսումնարանումը վատ է. այնտեղ պէտք է նստես կարգաւ: Բայց մէկ նայի՛ր այն կանաչ մարգագետինն. տես՝ ի՞նչ գեղեցիկ է: Ս.րի գնանք խաղանք այնտեղ, Ս.ըշակ:

—Երեկոյին կը խաղանք. հիմա ես գնում եմ սովորելու: Մնաս բարով:

—Լաւ, գնա. իսկ ես կը գնամ խաղալու: Մնաս բարով:

Քսան տարուց յետոյ ես կանգնած էի էլի մի և նոյն գիւղի այն ճանապարհի վրայ, որ դէպի ուսումնարանն էր տանում: Սաստիկ ցուրտ, ձմերային օր էր: Մի գունաթափ խեղճ մարդ, պատառոտած շորերով՝ բաղխում էր ուսումնարանի դուռը: Ուսուցիչը, որ մի գուարթերես մարդ էր, բաց արեց դուռը, և ես լսեցի նրանց մէջ հետեւեալ խօսակցութիւնը:

—Բարով, պարոն ուսուցիչ:

—Բարով, սիրելիս:

—Ս.ի, պարոն, խղճացէք ինձ վրայ:

—Ի՞նչ էք կամենում:

— Գործ, պարոն: Ես կ'աւելեմ ձեր ուսումնարանի սե-
նեակները, կը վառեմ ձեր վառարանները, կամ մի ուրիշ տե-
սակ ծառայութիւն կ'անեմ: Ընդունեցէք ինձ:

— Միթէ չէք կարող դրանից աւելի լաւ գործի կ'աշխատէք:

— Ո՛չ, պարոն:

— Ինչո՞ւ ո՛չ:

— Որովհետեւ ես ոչինչ չեմ սովորել:

— Ի՞նչպէս է ձեր անունը:

— Իմ անունը Բագրատ է:

— Ներս արի, Բագրատ, այսօր դուրսը վատ է, ուսում-
նարանումը լաւ է: Յոյս ունեցիր որ այստեղ մի բան կը
սովորես:

Յետոյ երկուսն էլ ներս մտան և դուռը կրկին փա-
կուեցաւ:

I. ա. — Ուսումնարան, վարժարան, տալարան, դատարան,
պաշարան, վառարան, երգարան:

բ. — Ինչո՞ւ — Որովհետեւ. այն պատճառով որ: — Որով-
հետեւ — Ուստի, այս պատճառով:

գ. — Փակուեցաւ, մեծացաւ, հասկացաւ. — Գլխացաւ,
աչքացաւ, փորացաւ:

II. — Որովհետեւ, Յովհաննէս. — Սրհետ, օրհնել, արհա-
մարհել, ճանապարհ, շնորհել:

Բաղաձայն տառից յետոյ «յ» չէ կարելի գրել:

13. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՌՈՏ.

Վառուեց արշալոյս: Ժըպտում է ելկինք,
Ոսկեզօծ գունով ներկուեցան լերինք,
Գեղազուարճ խանդով թրթռում է բնութիւն,
Տիրեց ընդհանուր կեանք, ուրախութիւն...

Նայում ես շուրջդ — բոլորը ծաղկունք,

Անուշ ցընծութեամբ երգում են թռչունք...

Գոհարով ցողած կանաչ դաշտերը

Յըրում են սրբոց խորին վըշտերը...

Ծագեց արեւը — ըսկըսւում է օր,

Դաշտում գործում է գիւղացու արօր:

Սերմերով բեռնած փոքրիկ սալալը

Դէպ արտն է վարում՝ անխոնջ մըշակը:

ԲԱԳԳԻ.

Ն ո յ ն ա ն ի շ. — Անուշ, քաղցր. — Սրե, արեգ, արեգակ,
արփի:

Հ ա կ ա ն ի շ. — Գիւղացին արօրով վարում է իր դաշտը:
Մշակը սալալը գէպի արտն է վարում:

II. Սրե, տերեւ, անձրեւ, թեւ, թէւ, թեթեւ (Լէոն,
Գէորգ):

բ. — Թրթռալ, կրկալ, մըմռալ, գըգռել:

I

14. ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԱՆԵՐԸ

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գտնւ գտան ու
բաժանեցին իրանց մէջ: Բայց որովհետեւ նրանց ճանապարհի
պաշարը պակասել էր, ուստի իրանցից փոքրիկին ուղարկե-
ցին քաղաք՝ կերակուր բերելու: Նա գնաց և ճանապարհին
այսպէս էր մտածում ինքն իրան: «Ես այժմ հարուստ եմ.
բայց աւելի հարուստ կը լինեմ, եթէ ընկերներիս մասն էլ
ես վեր առնեմ: Եւ այս մի դժուար բան չէ: Կը թունաւո-
րեմ այն կերակուրը, որ պէտք է գնեմ. իսկ իմ մասին կ'ա-
սեմ որ արդէն ճաշել եմ»:

Բայց միւս ընկերները այսպէս էին խօսում. «Ինչո՞ւ մենք
բաժին տուինք այն պատանուն. եթէ նրա բաժինն էլ մենք

վեր առնենք, աւելի կը հարստանանք: Ուրեմն, հէնց որ նա-
գայ, իսկոյն սպանենք:»

Պատանին տարաւ թունաւորած կերակուրը: Ընկեր-
ները իսկոյն հանեցին սրերը և սպանեցին նրան: Իսկ յետոյ
կերակուրն ուտելով՝ իրանք էլ մեռան: Դանձը մնաց անտէր:

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ.

I. Մանուկ, պատանի, երիտասարդ, ծերունի, պառաւ:

15. ՀՕՐՈՒՏ—ՄՕՐՈՒՏ.

(Գարուն հայոց աշխարհի)

Ես Հօրուտիկ—Մօրուտիկ,

Դրախտի հիւսած նարօտիկ,

Նախշուն սիրուն խատուտիկ,

Կանաչ դաշտաց գիցուհիկ:

Ես Հօրուտիկ—գարնան դիք,

Ձեռքումս դրախտի բանուլիք,

Դրախտի գըռներ բաց արի,

Դարուն տամ ձեր աշխարհի:

Ես արտիկ նարօտիկ,

Ծոցըս կանաչ գորգ մախմրիկ

Գորգըս փըռեմ նախ ծածկի—

Գետին բոլոր աշխարհի:

Վըրէն ցանեմ մանուշակ

Նորերը մոյգ կապուտակ.

Դաղեմ թագչի խոտի տակ,

Զառնի հոտ գոյն արեգակ:

Մէջտեղ վարեմ վարդ կարմիր,

Ծալ ծալ հողին ծիրանի.

Բերան բացած կենսաբեր՝

Կեանք տալ բոլոր աշխարհի:

Կողքին ցանեմ ես ոռնան,

Կանաչ բազմի ի սեղան.

Անուշ հոտըն և իր համ

Ամէն բանի համադամ:

Բոլորք շարեմ արեգակ,

Ոսկէ փսէ բոլորակ.

Սև աչք ձըգած արեհին

Միշտ նայի իր երեսին:

* *

Ծաղիկ ես տամ ելակի,

Փըշիբընուտ մոր և մոշի.

Տան սև, կարմիր մարսական

Պըտուղ նըման սև թըթի:

Ծաղիկ ես տամ և թըթի,

Պըտուղ շաքար, ջուրն օղի.

տերև—սընունդ շերամի,

Նողուն շորեր տալ մարդի:

Ծաղիկ ունեմ ըսպիտակ,

Շարան տափակ մարգարիտ.

Շաղ տամ ծառին՝ ոնց վերմակ,

Բալ տալ կարմիր թըթուշիկ:

Ծաղիկ ունեմ բոլորակ,

Յառաջ կարմիր, յետ սպիտակ.

Կը տալ ծիրան անուշակ

Մի թուշ կարմիր, միևս ոսկեակ:

Ծաղիկ ունեմ էլ ճերմակ,

Խիտ խիտ շարած անհամար,

Սալար կը տալ կարմրորակ,

Քաղցրը, չրոտ՝ ոնց շաքար:

Ծաղիկ ես տամ բաց կարմիր,

Մէջտեղ ոսկի փուռն թելեր.

Դեղձ տայ անուշ թըթուշիկ,

Կարմրաթըշիկ թաւիշիկ:

Ծաղիկ ես տամ խընձորի,

Խառն կարմիր ու ճերմակ.

Խընձոր ձեզ տայ նայն գոյնի՝

Սպիտակ, կարմիր անուշակ:

Ծաղիկ ունեմ փուռն մի խիտ,

Մանր մանր մարգարիտ.

Կը տայ խաղող՝ ոնց մեղրիկ,

Մէն մին գինու փոքրիկ տիկ:

Ծաղիկ ունեմ մոլդ կարմիր,

Պտուղը խառտ քար է պինդ.

Հէնց որ դեղնեց՝ իմացիր—

Ել սերկելիլ չէ տըտիպ:

Ծակիկ ունեմ նըռան է,

Կարմիր բարակ բաժակ է.

Մէջ կայ կարմիր շարակներ,

Սրին կաթում երակներ:

Ծաղիկ ես տամ փուռն սպիտակ,

Տանձ տայ դեղին գուտ ոսկի.

Քաղցրը՝ ոնց մեղր ու կարագ,

Հալուի բերնումս ուտողի:

Ծաղիկ ես տամ գուտ արծաթ,

Պըտուղ քարից էլ պինդ փայտ.

Կոտրի կեր մէջը,—դա նուշ է,

Միջուկը լի կաթն ու ուղ է:

Ծաղիկ ունեմ գրկեռ է,

Պտուղը չուտես՝ մինչ խակ է.

Բերանդ բաց կը մնայ,

Բերնիդ ջրերը կը գնայ:

Մի ծառ էլ տամ անձաղիկ,

Ուռած աչքի մէն մի բեր.

Գառնայ կանաչ՝ սև թըղիկ,

Մէն մի՝ մեղրի փոքրիկ տիկ (*):

ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼՉԱԴԵԱՆՅ.

16. Մ Օ Ր Ա Չ Գ Ե Ր Ը

Մի երիտասարդ՝ փող աշխատելու համար ճանապարհորդում էր: Նա անց կացաւ շատ քաղաքներ ու գիւղեր, որտեղ շատ բան էր տեսել ու շատ բանի վրայ զարմացել: Նա գեռ տասնուհինգ տարեկան պատանի էր, երբ դուրս գնաց իրանց տնից: Տաս տարի ճանապարհորդութեան մէջ անց կացնելով՝ նա շատ էր փոխուել: Նա հասակ էր առել մեծացել ու մօրուքաւորուել, այնպէս որ դժուարութեամբ կարող էր ճանաչուիլ:

Բաւական համարելով երկարատեւ պանդխտութիւնը՝ նա վճռեց վերադառնալ իր ծնողների մօտ, որոնց նա շատ կարօտով ցանկանում էր տեսնել: Մի քանի շաբաթից լետով նա հասաւ իրանց գիւղը: «Տեսնենք՝ ո՞վ առաջ կը ճանաչի ինձ, ասում էր նա ինքն իրան: Կարելի է, ո՞չ ոք էլ չճանաչի»: Այսպէս մտածելով՝ նա մօտեցաւ իրանց տանը:

Առաջին մարդը, որին նա հանդիպեց, իր նախկին ուսուցիչն էր: Սա գեռ ևս հեռուից տեսնելով անձանոթին՝ ձեռքը տարաւ գրպանը և փող էր որոնում, մտածելով որ, կարելի է, ճանապարհորդը ողորմութիւն խնդրի իրանից: Բայց երիտասարդը ողորմութիւն չխնդրեց. ուսուցիչն էլ չը

*) Մանուկներին սոյն գեղեցիկ յօդուածը դիւրամատչելի անելու համար՝ ստիպուեցայ համառօտել, որի վրայ հրաւիրում եմ յարգելի հեղինակի ներողամտութիւնը:

ճանաչեց նրան: Անց կացաւ իր հօրաքրոջ տան առաջևից-
նրա պառաւ մօրաքորը կանգնած էր դռան մօտ: Ճանա-
պարհորդը գլխարկը վեր առնելով բարեւեց նրան. բայց նա
չճանաչեց: Երիտասարդը մի փոքր առաջ գնալով տեսաւ մի
մանկահաս աղջիկ, որ դէպի իր կողմն էր գալիս, և իսկոյն
ճանաչեց որ նա իր քույրն է: «Սա կը փաթաթուի պարանո-
ցովս», ասեց երիտասարդը ինքն իրան և շտապեցրեց քայլե-
րը: Բայց աղջիկը սառնութեամբ նայեց նրան, միմեանց բա-
րովեցին ու հեռացան իրարից:

Վերջապէս նա հասաւ իրանց տուն: Մայրը պարտիզում
կանաչեղէն էր քաղում: Նա լսեց որ մէկը գալիս է, և
բարձրացաւ տեղից: Հէնց որ խեղճ կինը տեսաւ ճանապար-
հորդի դէմքը, իսկոյն դէն ձգեց ձեռքի կանաչին և ընկաւ
նրա պարանոցը, ասելով. «Սմբատ ջան, աչքիս լոյս»: Եւ ան-
դադար փաթաթուում էր նրան ու համբուրում: Մօր սիրտն
ու աչքերը իսկոյն ճանաչեցին որդուն:

Ն ո յ ն ա ն ի շ. — Հանգիպել, պատահել:
I. ա. — Վերադառնալ, վերանորոգել, վերաստուգել, վե-
րականգնել:
Բ. — Կանաչեղէն, ոսկեղէն, խմորեղէն, մոմեղէն, քաղց-
րեղէն:

Գ. — Երկարատեւ, կարճատեւ, մշտատեւ, տեղական:
Հ ա կ ա ն ի շ. — Զուր բեր՝ երեսու լուսանամ: Այս հոցի
երեսին հաւկիթ է քսած: Վերարկուի երեսը հնացել է: —
«Երես տան» աստու կուգես:

II. — Սա, դա, նա. որա, դրա, նրա. — Քո.
Սոքա, գոքա, նոքա. սոցա, գոցա, նոցա. —

17. ԲԱՆԸ ԱՍԵՂԸ 2Է. ԲԱՆԸ ԱՆԵՂՆ Է:

Մէկ տան մէջ կար մէկ մեծ կատու՝ խիստ կատաղած
և ահարկու. խեղճ մկներին միշտ անգաղար՝ տանջում էր

նա խիստ չարաչար: Բընից ո՛վ որ գալիս էր դուռս՝ կատուին
լինում էր համեղ որս. իսկ ո՛վ բընի մէջը մնար՝ քաղցած
ծարաւ կը թուլանար:

Երբ մկները տեսան այս բան՝ ասին. «Այս չէ մի լաւ
նշան. եկէք, եղբարք, խորհուրդ անենք՝ այս չար կատուից
մէկ աղատուենք»: Հաւաքուեցան մկներ մի տեղ՝ որ այս ցա-
ւին գտնեն մի գեղ:

Նրանք տրտում նստան շարքով՝ մէկը ասեց բարձր ձայ-
նով. «Ի՞նչ էք ասում, ո՛վ բարեկամք. մինչ երբ կստուն
տայ մեզ տանջանք: Միթէ չկա՞յ այս ցաւին ճար՝ կամ աղա-
տուելու հընար»:

Յանկարծ խելօք մի ծեր մուկ՝ ասեց. «Լսէք դուք իմ
ձագուկ. աշխարհիս մէջ չկայ մի բան՝ որ չունենայ դեղ ու
դարման: Գնացէք բերէք դուք մի զանգակ՝ մի քիչ էլ թել,
հաստ կամ բարակ: Կապենք այդ չար կատուի վրդից՝ որ
աղատուենք նրա ձեռքից: Այն ժամանակ անահ անվախ
մենք կը գնանք մեր եղբարց թաղ: Իսկ երբ լսենք զանգի
հնչիւն՝ իսկոյն մտնենք մեր խաւար բուն»:

Տխուր մկներ ծիծաղեցին՝ «Տեսէք, ասին, խելքը ծերին՝
ինքն ալեւոր, կարճահասակ՝ խօսքը կտրուկ, քան սուր դա-
նակ»: — Ծերը ասեց. «Անտրենք, եղբարք՝ մի ճարպիկ մուկ
բարձրահասակ՝ որ անց կացնի այն զանգակը՝ այդ անիծեալ
կատուի վիզը»:

Խեղճ մկները երբ լսեցին՝ ամենք մի կողմը քաշուեցին.
մէկն ասեց. «Ես հիւանդ եմ», միւսը՝ «Սփոս», որ ճարպիկ
չեմ». մէկ ուրիշը թէ «Ես ծեր եմ». մէկն էլ թէ «Շատ որ-
դոց տէր եմ»: Պոչը կտրած մէկն այն տեղից՝ «Ի՞նչ էք
անում», ասեց հեռուից. ես այդ գործը յանձն կ'առնեմ՝ և
յոյս ունեմ, որ գլուխ բերեմ: Բայց թող մէկը գա՛յ ձեր մի-
ջից՝ որ պինդ բռնի կատուի վրից. այն զանգակը ես կը կա-
խեմ՝ այդ լիբը կատուի հաստ շլընքից»:

Խեղճ մկները շատ խնդային՝ «Զան», ասեցին ու ծափ

տուին, իսկ երբ տեսան գազան կատուն՝ փախան մտան
խրանց խոր բուն:

Ն ո յ ն ա ն ի շ. — Ալլուր, ծեր: — Տխուր, տրտում:

II. — Խեղճ, դեղճ, մեղք, աղջիկ, բաղտ, պղտոր, քաղցր,
աղքատ:

18. ԷՇԸ ԴԱԴԻ, ՉԻՆ ՈՒՏԻ:

Ելը գոմում մըռութ արաւ:

Իր վիճակից դանգատուեցաւ: —

«Մեզ նման էլ աշխարհքումը

Ո՛վ կայ գործին հալալ մըշակ,

Բայց մեր տիրոջ լիմար խելքով

Մենք եղել ենք միշտ խայտառակ:

Մեր տէրը մեզ բեռն է բարձում,

Ինքն էլ վըրէն նըստում, քըշում:

Ծանրութեան տակ մենք տընքալով՝

Կամաց քայլում ենք անվըրդով:

Եւ նա դարձեալ հայհոյում է,

Նա գոռում է և թակում է,

Անխիղճ կերպով նա մեր կաշին

Ծակծրկում է բեզը ձեռքին:

Ե՛հ, մի խօսքով աշխարհքումը

Չը կայ մեզի հանգիստ, դադար:

Միշտ բեռան տակ, ո՛չ տօն, ո՛չ կեանք,

Ոչ կիրակի կայ մեզ համար: —

Գործը մենք ենք միշտ կատարում,

Նըրա հետ էլ ջարդում, թակում:

Խօսն ու գարին ուրիշն ուտում,

Պատիւները անգործն ստանում:

Բաւական չէ՝ ձի եղբայրը

Մընում է իր քեֆին գոմում:

Միշտ էլ մեր պատառը խըլում,

Ուղածի չափ էլ մեզ ծաղրում:

Մենք ախոռը լըպստում ենք,

Ծեղ էլ չը կայ, որ կուլ գըցենք:

Իսկ մեր խելօք ձին կուշտ ուտում,

Սխառումն էլ կռճո՛ք թողնում:

Ե՛հ, մեր գործն է միշտ սխալ վախ,

Միշտ լըսում ենք՝ «Յիմար, ախմախ»,

Չեն քըննում թէ՛ մեզ պէս մըշակ

Ուրիշ էլ կայ երկրնքի տա՛լ: —

Ձին՝ որ կողքին լուռ կանգնած էր,

Եւ բոլորն էլ լաւ լսում էր,

Ականջները խըշկոտացրեց,

Ոտքով քա՛ղ-քանդը ըսկըսեց:

Դուռը ճըռռաց, յանկարծ մըտաւ,

Տանտէր Պետոն, և հէնց տեսաւ,

Որ նըթոյգ ձին իշի մօտում

Սջ ու ձախ է ոտքով թակում...

ՄԼընչում է, խըլըշկոտում:

Իսկ մոխրագոյն էլ եղբայրը

Տեղնիտեղը քընել թըմրել,

Եւ չորս ոտքով գետնին մեխուել...

Յանկարծ — թըլ՛մփ, գըլին խըփեց

Թիու կոթով — զարթըրեց:

Իսկ ալ ձիուն ձեռք քըսելով՝

Քերէն առաւ ու թիմարեց...

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ:

Ն ո յ ն ա ն ի շ. — Դարձեալ, վերստին, կրկին:

I. — Դարձեալ, հետեւեալ, անցեալ, սառեցեալ, հանգուցեալ, ննջեցեալ:

19. «Ի՞նչ կը ՅԱՆԵՍ, Ի՞նչ կը ՀՆՁԻՍ»:

Մի չքաւոր մարդ բնակում էր մի հարուստ՝ բայց ազա՛հ վաճառականի հոյակապ տան մօտ: Նրա հիւղը սովորական տների պէս խորը հիմք չունէր գետնումը, որովհետեւ շուտ շուտ հարկաւորւում էր շուր տալ նրան այն կողմը, որտեղից քամին բերում էր հարստի խոհանոցում՝ պատրաստուող կերակրների հոտը:

Մէկ օր վաճառականը բարկացած՝ կանչել տուեց նրան և ասեց. «Ա՛յ մարդ, դու մինչեւ երբ պետք է քո բնակարանը իմ տան այս ու այն կողմը տնկեմ, և կամ թիչ է դրա պատճառը:

— Իմ բնակարանը տեղափոխելուս պատճառը, պատասխանեց չքաւորը, քո խոհանոցից դուրս եկած անչափ անուշ հոտերն են: Ես մի սակաւապէտ մարդ եմ, շատ քիչ եմ ուտում, այս պատճառով մտածեցի որ այդ իմ թեթեւ կերակուրը համեմեմ քո խոհանոցի անուշ հոտերով:

— Ուրեմն, ասեց հարուստը, բանից դուրս է գալիս որ դու մինչեւ օրս իմ ծախքովն ես ապրեի: Պարտքդ վճարիր, եթէ ոչ՝ կը գանգատեմ, և բանը այնպէս կը բերեմ որ քեզ իմ գերիս կը շինեմ:

Խեղճ մարդը միայն ծիծաղեց այսպիսի սպառնալիքի վրայ, որովհետեւ նրա կարծիքով խոհանոցից դուրս եկած հոտն էլ՝ դաշտի ծաղկների, արևի ու օդի պէս մի բան է, որ ամէն մարդ կարող է վայելել ձրիաբար: Բայց հարուստը այդպէս չէր մտածում: Նա քաջեց նրան դատաւորի մօտ և յայտնեց իր պահանջը:

Դատաւորը, որ մի կաշառակեր մարդ էր, հարստի կողմն անցնելով՝ իրաւացի համարեց նրա պահանջը և այսպէս վճռեց գործը, որ չքաւորը կամ մի մեծ գումար տուգանք տայ, կամ հարստին գերի գառնայ: Բարեբաղտաբարնա մի կերպով գնաց թագաւորի ոտքն ընկաւ և մի առ մի պատմեց նրան իր գլխի անցքը:

Թագաւորը երկուսին էլ կանչել տուեց ու վաճառականին նին տուեց. «Ես լսել եմ որ օրէնքի գորութեամբ այս մարդը քո գերին է համարուում: Եւ, ինչպէս տեսնում եմ, սա մի խելօք մարդ է. ուստի մի գին որոշիր սրա համար ու ծախիր ինձ: Ես այս րոպէիս կը հրամայեմ որ վճարեն քեզ քո ցանկացած գումարը»:

Ազա՛հ վաճառականը առանց շփոթուելու մի մեծ գին նշանակեց, և թագաւորը իսկոյն հրամայեց. «Բերէք ոսկիները և համրեցէք այս մարդու պահանջած գումարը»:

Թագաւորի հրամանը կատարուեցաւ: Բայց երբ վաճառականը ձեռքը մեկնեց որ վերցնի, «Բաւական է, ասեց թագաւորը. այս մարդը բաւականացել էր միայն քո կերակուրների հոտն առնելով, ուրեմն, դու էլ միայն այս գումարը տեսնելով պետք է բաւականանաս»:

Այդ խօսքերից յետոյ նրանք երկուսն էլ դուրս գնացին թագաւորի պալատից. — չքաւորը՝ գուարթերես և ուրախ ուրախ, իսկ վաճառականը՝ սեւերես ու ծոծրակը քորելով:

II. — Սակաւապէտ, թէպէտ. — Նաւապետ, հազարապետ, նահանգապետ:

20. ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ.

Թագաւորից հրաման դուրս եկաւ, որ ո՛վ որ մի որ և էլ քեզ գողի կը մատնի կառավարութեան ձեռքը, նա մեծ

վարձատրութիւնը կը ստանայ: Մի ալիքի կին, որ ունէր երեք որդի, շատ թշուառ կեանք էր անց կացնում: Նրա որդիքը խաբ տուին միմեանց որ վիճակ ձգեն իրանց մէջ, և ունենան, նրան մատնեն իբրեւ գողի: Նրանք մտածում էին որ այս հնարքով կարող են իրանց մօրը պահել: Վիճակն ընկալ կրտսեր եղբօրը և նրան բանտարկել տուին. իսկ իրանք ստացան խոտացած պարզեր:

Բայց շուտով նրանք խղճահարուեցան. զնային փող տուին բանտապահին որ իրանց թող տայ բանտը մտնել: Բանտապահը համաձայնեց և նրանք ծերո՞ւ մտան: Նրանք տեսնելով իրանց եղբօրը՝ լաց եղան: Իսկ բանտապահը ամէն բան լսում էր:

Եղբայրների դուրս գնալուց յետոյ նա ծածուկ գնաց մինչև նրանց տունը: Բայց որքան զարմացաւ, երբ տեսաւ որ պառաւ մայրը գէն ձգեց իր երկու որդու տուած փողը և լաց լինելով ասեց. «Աւելի լաւ է ես քաղցածութիւնից մեռնեմ, քան թէ ապրեմ որդուս չարչարանքի գնով»:

Բանտապահը այս բանը յայտնեց դատաւորին. և եղբայրները պատմեցին նրան թէ բանն ինչո՞ւմն է: Բայց երբ այս լուրը հասաւ թագաւորին, նա անմեղ բանտարկեալին ազատեց բանտից, իսկ նրա մօր ու եղբայրների համար տարեկան ռոճիկ նշանակեց:

Նոյն անիշ. — Պարգև, ընծայ, նուէր: — Լուր, համբաւ:

Հակ անիշ. — Վիճակ ձգելիս ինձ ասեցին, որ ես կը հարստանամ և իմ թշուառ վեճակը կ'ուղղուի:

Ի. ա. — Համաձայն, համակարծիք, համազելչայի:

բ. — Աւագ, միջնակ, կրտսեր:

գ. — Աւագ եղբայր, աւագ քահանայ, աւագ ուսուցիչ, աւագ շաքաթ. — Աւագ (անուն):

21. Ա Մ Պ Ե Բ. Հայոց երկընքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռքից.

Սև սև ամպերը սարերի նըման
Անցնում արտերից:

«Կացէք, այ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
Անձրև չէք թափում.

Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
Ու ձեզ ըսպասում:

Քամի դու, քամի, խըղճա՛ր արտերին,
Թո՛ղ այդ ամպերին

Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
Ջրբէն մեր արտերի:

Քամին հանդարտեց. մեղմ անձրև թափուեց,
Արտերը ջրեց.

Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց

Ու հասկեր բըռնեց:

Գիւղացին զընաց, տեսաւ ու խընդաց,

Խընդաց ու ասաց.

«Փռուք Գեղ, Տէր Աստուած, որ տըւիր մեզ հաց,

Չենք սընայ քաղցած»:

Կ. Մ. ՀԱՀՆԱԶԱՐԵԱՆ.

22. ՅՈՒԼԻՍԻ ՀՈԳԸ

Յուլիսի արեգակը սաստիկ այրում է. կարծես օդային ամբողջ տարածութիւնը լցուած լինի հրեղէն ասեղներով: Տօթը անտանելի է: Թռչունները յոգնած, թուլացած՝ ծած-

կուել են ծառերի թաւուտներում, որտեղ մի տերեւ անգամ չէ շարժուում: Միայն ճանճերը, մոծակներն ու միլիոնաւոր մանր մոթեղները վրժվրժում են, սրվսրվում են ու շունչ առնելիս մարդու բերանը, քիթն ու ականջներն են մտնում, և շատ անգամ իրանց թունաւոր խայթոցներով աւելի են այրում մարդու երեսն ու ձեռքերը, քան թէ արեգակի հրեղէն ճառագայթները:

ԲԱՖՖԻ.

I. — Խայթոց, մատնոց, բազմոց, սփռոց, գոգնոց, թիկնոց, ձեռնոց, ականոց, օրօրոց. — Հիւանդանոց, աղքատանոց, բանջարանոց:

23. ՊԱՐՏԻՋ ՊԱՆ.

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհրատում,
Ոչ շունն է հաջում, ոչ ճրճին երգում,
Գորտն էլ է լըռել, էլ չի կըրկըռում:
Ամենքն էլ փախել, հով տեղ են գրտել,
Իրանց բըններում լռուել, պապանձուել.
Միայն մի հատիկ մարդ է երևում
Խորընկաճ դաշտում, առուի եզերքում:
Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը գրած ուսին.
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի քաղցրակ թասակ կայ գըլխին:
Բայ քնն մարդ է նա և քնն է շինում,
Արևի տակին ինչու է այլում. —

Նա պարտիզական է, պարտեզ է ջըրում,
Սեխն ու ձմերուկը նա է հասցընում:
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ.

I. — Կ ե ն դ ա ն ի ն ե ռ ի լ ե գ ու ն. — Շունը հաջում է. գայլը ոռնում է. եշը զոռում է. ձին խրխնջում է. ոչխարը մայում է. կովը բառաչում է. փիղը զոչում է. խոզը խանչում է. արջը մրմռում է. առիւծը մոնչում է. եղնիկը խորդում է. աղուհսը ղողանջում է. վագրը խոնչում է. կատուն մլաւում է. գորտը կոնչում է. ագռաւը զոզոռում է. արծիւը կառաչում է. սագը ոնգում է. ագաղաղը կանչում է. սիրամարգը նչում է. հաւը կարկաչում է. օձը սուլում է. աղաւնին մնչում է. տատրակը գուրգուրում է. թուխակը խօսում է. ճնճղուկը ճոռոռում է. բուն աղաղակում է. ճանճը թզոռում է. սոխակը դայլայլում է. միայն մանրն է, որ իր միտքը լայտնում է խօսքով:

24. ԱՄԱՐԱՅԻՆ ՄԻՋՕՐԻ.

Արևը եկել երկնքի կէտ տեղը ցից է եղել, ոտքը դէմ տուել. իր տաքութիւնը թափում է աշխարհիս վրայ, այլում խորովում: Ծառերը շոգից նեղացած՝ տերեւները թառ են տուել, գլուխները կախ ձգել, իրանց օրը լալիս, գլխներին վայ տալիս սգում են: Քարերի հալը հօ Աստուած ցոյց չտայ. այնպէս են տաքացել, շիկացել, կարմրել, որ քիչ է մնում միջից տրաքուեն ջարդովշուր լինեն: Շատ քաջ մարդ պէտք է լինի, որ կարողանայ ոտքը կամ ձեռքը մի քարի դիպցնել. խսկոյն և եթ վրան կը կպչի, կը թխուի:
Թռչունների մէջ էլ ոյժ չէ մնացել. շոգից նեղացած, թեւերնին չռած, բերանները օխտը գազ բաց արած՝ որը այս քարի տակն է խցկուել, որը այն թփի տակը մտել, իրան

ստուեր արել: Շատի ոյժն էլ սպառուել, տեղն ի տեղը վալը
է ընկել, շունչը տուել, որն էլ մի քարի ծակ կամ մի ծառի
խոռոչ է մտել, էլ չէ կարողացել դուրս գալ, ու թագնուած
տեղը չորացել է:

ՇԱՀԱԿԻԴԵԱՆՑ.

25. ԱՄԱՐԱՅԻՆ ԳԻՇԵՐ.

Լուսինն անուշ, հովն անուշ,

Մեր գիւղացու քունն անուշ:

Ծագեց լուսինը երկնքից,

Հովիւի սրինգն է անուշ:

Հօտաղը եզներն է քշում,

Մաճկալը պառկել, քունն անուշ:

Զրդզրդուն քամին փչում է,

Զրերի հովն է անուշ:

Դաշտեր, ձորեր լռել են,

Զրեր գլգլան, ձայնն անուշ:

Թռչունները մտան բունը,

Սոխակի տաղն է անուշ:

Անմահական հոտ է բուրում,

Կարմիր վարդի հոտն անուշ:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ.

26. ՍՏԱՀԱԿ ՈՐԴԻՆ.

Մի գիւղացի ունէր մի որդի՝ Միքայէլ անունով: Նա
շատ ստահակ տղայ էր և ամենեւին ականջ չէր դնում հօր
խրատներին: Մի անգամ հայրը տարաւ նրան իրանց դառն

առաջն ընկած գերանի մօտ և ասեց. «Տես, Միքայէլ, ինչ-
քան դու ստահակութիւն անես, այնքան բւեռ պէտք է
ցցեմ ես այս գերանի վրայ. և ինչքան խելօք լինես, այնքան
բւեռ պէտք է հանեմ»:

Բայց Միքայէլը փոխանակ ուղղութիւն՝ աւելի շարունա-
կում էր իր ստահակութիւնը. այնպէս որ շուտով գերանը
բւեռներով լցուեցաւ: Անց կացաւ ժամանակ, և հայրը մի
անգամ որդուն խելօք տեսնելով՝ մի բւեռ հանեց գերանից:
Դրանից յետոյ որդին հետզհետէ խելօքանում էր. հայրն էլ
հանում էր բւեռները:

Վերջապէս մի օր հայրը Միքայէլին ասեց. «Ուրախա-
ցիր, սիրելի որդեակ. ահա մի բւեռ է մնացել, այն էլ հա-
նում եմ»: Ասեց ու հանեց բւեռը. Բայց Միքայէլը ուրա-
խանալու փոխանակ՝ սկսեց լաց լինել:

— Ինչու ես լաց լինում, որդիս, հարցրեց հայրը. չէ՞ որ
աւելի պէտք է ուրախանաս, որովհետեւ բոլոր բւեռները
հանուած են:

— Ա՛խ, հայրիկ, պատասխանեց որդին, բւեռները հա-
նուած են, բայց նրանց տեղերը մնում են:

Մ. ՄԱՄՈՒԲԵԱՆ.

II. — Միքայէլ, Սամուէլ, Դանիէլ, Բէլ, Աբէլ, (Առաքել):

27. Դ Ա Շ Ց Ը

Ահա ընդարձակ, սիրուն դաշտը

Զգում է երկար դէպի հեռուն.

Մարդկային աչքը չի հասանում,

Յոգնում է նրա տեսողութիւնը:

Երևում են ձեզ ոսկե արտեր՝
 Յորնի հասկերով բեռնաւորած.
 Եւ արեգական ջերմութեան տակ
 Վառւում, փայլուն են ոսկեգօծած:
 Փչում է քամին, արտը շարժում,
 Մի ծայրից միւսը տանում բերում.
 Ծանրացած ատոք ոսկե հասկերն
 Իրար գրկելով՝ դաղանիք մընչում:
 Քաղցրիկ արտուտն իր երգերով
 Երկինք, դէպ երկինք բարձրանում.
 Երգում աղօթում դէպի Աստուած
 Եւ ճրվճրվալով երկիր իջնում:
 Պաշտի միւս կողմում հընձւորները
 Խաղով ու տաղով հունձ են անում.
 Քամին գնում է նըրանց երգերով
 Բռնում ու գըրկում, հեռուն տանում:
 Եւ նըրանց ուրախ երգ, աղաղակ
 Մի րոպէ անգամ չէ դադարում.
 Մանգաղի զըւարթ զըրընգոցը
 Շատ հեռուն է գնում տարածւում:

Ս Ր Ի Ն Գ .

II.—Արձակ, ընդարձակ, համարձակ, բարձ, բարձր, ար-
 ձան, (հարցնել):

28. «ԱԳՌԱԻ ԶԵՆԸ ԹԷ ՈՐ ԱՍՏՕԾ ԼՄԷՐ,
 ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ԶՈՒՆ ՊԸ ԳԱՐ»:

Ամառուայ տօթ օրով մի մարդ մի քիչ գովանալու հա-
 մար մտաւ ստուերաշատ անգին: Նա հիանում էր, տեսնելով

այնտեղ մըգերով ծանրաբեռնուած ծառերը և մարգերի զուար-
 թացած բանջարները: Մեղրահամ պտուղներով կուրծքը զո-
 վացնելուց յետոյ՝ նա նստեց մի բարձրակատար ընկուզենու
 տակը: Նա դիտում էր դիմացի ահագին դդումները և վե-
 րևի մանր ընկուզները:

Նա մտածում էր. «Եթէ ես լինէի Աստուած, այս ահա-
 գին դդումը այսպիսի բարակ շիւղից չէի կախ անի. այլ կը
 պնդացնէի այս բարձր ընկուզենու վրայ: Այն ժամանակ այս
 մանր ընկուզներն էլ կախ կ'անէի այս դդմենու բարակ շիւ-
 ղերից»:

Այսպէս մտածելով՝ նրա քունը տարաւ, քնեց: Յանկարծ
 քամին փչեց: Ծառի ճիւղերն ու ճղնիկները տատանուեցին
 իրար խառնուեցին, և մի ընկուզ պոկուելով՝ վայր ընկաւ
 ուղղակի նրա քթին: Սարսափելով տեղից վեր թռաւ, և նրա
 քթիցը արիւն վազեց: Հիմա նա քիթ ու պոռնոցը սրբելով
 ինքն իրան ասում էր. «Ի՛նչքան անմիտ եմ ես, որ ուզում
 էի՝ դդումը ընկուզենու վրայ բսնէր: Եթէ ընկուզի փոխա-
 նակ դդում վայր ընկնէր քթիս՝ ի՛նչ կը լինէր հալս... Զէ.
 ես եմ անխելքը, որ Աստծու արած գործերի մէջ սխալներ
 եմ փնտռում»:

I.—Ծառի կատար, սարի կատար, ագաղաղի կատար:

29. ՀԶՕՐԻ ԱՌԱՋ ԹԷ ՆԻ ՅԱՆՑԱՌՈՐ—

ԱՆՁՕՐ ԱՐԴԱՐՆ Է ԼԻՆՈՒՄ ՄԵՂԱՒՈՐ:

Մի տաք ամառալին օր մի գառը գնաց առուակի մօտ՝
 ջուր խմելու: Բայց նրա անբաղտութիւնից յանկարծ դիմա-
 ցը մի գայլ դուրս եկաւ: «Լաւ որս գտայ», մտածում էր ինքն
 իրան գալլը և մըմռալով գնաց դէպի գառը: Բայց կամենա-
 լով օրինաւոր ձև տալ իր անօրէն գործին՝ գոռաց խեղճի
 վրայ:

—Այդ ինչ լրբութիւն, ինչ լանդգնութիւն է, որ եկել ես ու քո պիղծ գնչով պղտորում ես իմ ջուրը: Տես՝ ինչ արիւր: Բոլորը ցեխ ու աւազ դարձրիր: Հիմա ես ինչպէս խմեմ: Գլուխդ կը ջարդեմ այս բոպէիս:

—Ներքի ինձ, տէր, ճառադ եմ, ասեց գառը հեզու-
թեամբ: Ես՝ ողորմելիս այնքան ցած եմ կանգնած քեզնից, որ ամենեւին չեմ կարող պղտորել քո ջուրը: Բայց եթէ քո բարկութեան պատճառը այն է, որ ես հաւանելի չեմ քեզ, ներքի ինձ. խոստանում եմ, որ միւս անգամ չերեւամ աչքիդ:

—Ուրեմն ես սուտ եմ ասում, կանչեց գայլը. իրան նա-
յեցէք ու իբ պատասխանին: Միտքդ չէ՞ ուրեմն, որ հերու չէ՞ մէկ էլ տարի ինչպէս անպատիւ արիւր ինձ: Դու մոռացել ես. իսկ ես չեմ մոռացել, գիտես:

—Ծառնդ եմ, ոտքիդ մեռնեմ, ասեց գառը. ես դեռ
մի տարեկան էլ չկամ. ինչպէս կարող էի քեզ անպատուել:

—Եթէ դու չէիր, ուրեմն եղբայրդ էր, ասեց գայլը:

—Ես եղբայր չունեմ, վրայ բերեց գառը:

—Այ դու անիրաւ, միթէ նա քո եղբայրը չէր, պա-
տասխանեց գայլը: Եթէ այդպէս է, կամ սանահայրդ էր, կամ խնամիդ: Վերջապէս ինչ ես երկարացնում, ո՞վ ուզում է՝ լի-
նի. ձեզնից մէկն էր: Դո՛ւք ամենքդ էլ, այնպիտաններ՝ ոչ-
խարներ, շներ ու չար հովիւներ՝ ինձ թշնամի էք. եթէ ձեռք-
ներիցդ գալ արիւնս կը խմէք: Թո՛ղ ես էլ ռես քեզնից հա-
նեմ, որ մի քիչ սիրտս հովանալ:

—Վայ ինձ, յանցանքս ինչ է, ինչ եմ արել, ասեց գա-
ռը լաց լինելով:

—Ձայնդ կտրիր, փո՛ւշ կենդանի, պատասխանեց գայլը.
Հիմա պէտք է նստեմ յանցանքներիդ համարեմ: Քո յանցանք-
ներիդ մէկն էլ այն է, որ ուզում եմ ուտել լափել քեզ:

Այս ասեց ու խեղճ գառնուկին անտառը տարաւ, պա-
տառոտեց ու անուշ արեց:

Գայլին հազար դու անա,

Թէ Գառներից ձեռք վեր առ».

Կը տայ դարձեալ պատասխան,

Մէջ բերելով շատ պատճառ:

Առաջինն այս կը լինի,

Թէ «Իմ որկորս է սովոր՝

ձաշին ուտել գառան միս,

Առաւօտեան՝ չաղ աքլոր»:

Գ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ.

II.—Յանկարծ (անկարծ, չկարծած ժամանակը), յաջո-
ղել, յարձակել, յարգել, յուղարկաւորել, յիրաւի, յառաջ, յե-
տեւ, յետոյ, յառաջաբան, յառաջադէմ, յաւելուած, յուշարար:

30. Ծ Ե Ր Ա Յ Ա Ծ Գ Ա Յ Լ Ը.

Չար գայլը ծերացել էր. այս պատճառով մտքումը դրեց
հաշտուել հովիւների հետ: Ամենից առաջ նա գնաց իր որ-
ջի մօտ բնակող հովուի մօտ:

—Պարո՛ն հովիւ, ասեց նա մեղմ ձայնով. դու ինձ ա-
նուանում ես արիւնարբու կենդանի. երգւում եմ Ստեղծողիս
անունով որ ես շատ բարեխիղճ եմ: Այո՛, երբեմն ընկնում
եմ հոտերի մէջ. բայց այդ քաղցածութիւնիցս է: Դու ինձ
կերակրիր, հաւատացնում եմ միշտ շնորհակալ կը լինես. կուշտ
ժամանակս ես շատ հանդարտ կենդանի եմ:

—Ի՛նչպէս հաւատամ, քեզ նոր չեմ ճանաչում: Դու
էրբ կուշտ կը լինես, քանի որ սաստիկ ագահ ես, պատաս-
խանեց հովիւը. ուրիշ դժու բաղխիր:

Գայլը գնաց մի ուրիշ հովուի մօտ:

— Գիտես, հովիւ եղբայր. իմ հաշուիս նայելով՝ տարին ամենաքիչը տասը կարող էի թռցնել քո հօտից: Իհարկէ, դու դրանով շատ անհանգիստ կը լինես: Եթէ կամենում ես հանգիստ ու խաղաղ քնել օդայումդ, մինչ անգամ առանց շուն պահելու, կարծեմ, ուրախութեամբ կը համաձայնես տարին միայն վեց գառը տալ ինձ:

— Վեց գառը վեց ոչխար է, պատասխանեց հովիւը. ասա ամբողջ հօտն ես ուզում, էլ ի՞նչ...

— Հնգով էլ կը բաւականանամ, ասեց գայլը, հառաչելով:

— Ծաղրում ես, վրայ բերեց հովիւը. հինգ ոչխար, ասելը հեշտ է...

— Չորսն էլ չես տայ, հարցրեց գայլը, վիզը ծռելով:

— Ինչէր ես խօսում, ասեց հովիւը, մէկն էլ չեմ տայ. յիմար եմ, ինչ եմ, որ հարկ տամ թշնամուս:

Գայլը գնաց երրորդ հովուի մօտ:

— Բարեկամ, ասեց, դուք ինձ շատ վատ աչքով էք նայում, ինձ ձեր թշնամի էք համարում: Շատ լաւ, ասենք թէ թշնամի եմ. ի՞նչ կարող էք անել ինձ դուք, չար հովիւներ: Եթէ չես ուզում որ ամբողջ հօտդ ոչնչացնեմ, տարին միայն մի ոչխար տուր ինձ:

Հովիւը ժպտաց:

— Ասա, խնդրեմ, ի՞նչ ես ծիծաղում, ասեց գայլը:

— Ո՛չինչ, այնպէս. բայց ասա տեսնեմ՝ քանի տարեկան ես, հարցրեց հովիւը կատակի ձևով:

— Ի՞նչ կարիք կայ իմ տարիքն իմանալու, ասեց գայլը. ինչ է՝ ուժս ես ուզում չափել: Սի վախենայ, դեռ այնքան ուժ ունեմ, որ հեշտութեամբ կարող եմ ընկնել հօտիդ մէջ, խեղդոտել գառնուկներին ու փախցնել:

— Գնա՛ գնա, լաւ, պատասխանեց հովիւը ժպտալով, բանեցրու ուժդ՝ որտեղ կամենաս, քո ատամների կերակուր չըկայ այստեղ:

Նա գնաց չորրորդ հովուի մօտ:

— Ա՛յ հովիւ, ձայն տուեց գայլը համարձակ, լսել եմ որ պահապան շունդ չարք տարել է: Պահիր ինձ քեզ մօտ շանդ փոխանակ՝ և կարող ես բոլորովին ապահով լինել, որ այն ժամանակ մեր ցեղից ո՛չ ոք չի համարձակի խէթ աչքով նայել ոչխարներիդ վրայ:

— Շատ ես սխալոււմ, պատասխանեց հովիւը. որ լիմարը կը համաձայնի զողին տան մէջ պահել. շատ լաւ կ'անես որ զլուխդ ողջ՝ հեռանաս այստեղից:

— Ա՛խ, ծերութիւն, բացականչեց գայլը՝ քթից մուխ հանելով, այս օրուան էլ արժանացայ: Այսպէս խօսելով՝ նա գնաց մի այլ հովուի մօտ, որ կաթ էր կթում:

— Սրգեօք ճանաչում ես ինձ, հարցրեց նրան:

— Քեզ թէ չեմ ճանաչում, քեզպէս շատերին ճանաչում եմ, պատասխանեց հովիւը՝ ոտքի կանգնելով և կնճռելով իր լայն ճակատը:

— Ինչպէսներին, սխալոււմ ես, ասեց գայլը. ես բոլորովին ուրիշ տեսակ գայլ եմ. կը բնակիմ բարեկամաբար ո՛չ միայն քեզ հետ, այլ և ամբողջ հօտիդ հետ. ո՛չ մի ոչխար ո՛չ կը բռնեմ, ոչ կուտեմ. լաւ է:

— Ամենալաւը լռութիւնն է, ասեց հովիւը խոժոռած դէմքով:

— Անգութ աշխարհ, չոր մարդիկ, ասեց ինքն իրան գայլը հեռանալով. ամէն կողմից ուզում են մեր ցեղը բնաջինջ անել, ոչնչացնել: Բայց մեր ո՛ր մեղքերի համար՝ ումն

ինչ վնաս ենք Հասցնում. միթէ մեզ ապրուստ չէ Հարկաւոր: Ո՛ւր գնամ, ո՛ւմնից օգնութիւն խնդրեմ. մնում է միւսնգամից շունչս փչել. ինչ բանի կարող եմ պէտք գալ, երբ տեղիցս էլ չեմ կարողանում շարժուել:—Այսպէս մտածելով նա գնաց վերջին փորձն անելու:

—Բարի Հովիւ, ասեց գայլը ցաւալի ձայնով, խղճա՛ ինձ վրայ, մի կտոր միս տուր, ահա քաղցից մեռնում եմ:

—Ա՛խ դու փո՛ւս կենդանի, ասեց Հովիւը բարկացած: Մոռացել ես որ իմ ամլիկ գառը տարար անտառը՝ անուշ արիւր, պատճառ բերելով իբր թէ այն խղճուկը քո ջուրը պղտորում էր: Ահա քեզ մսի կտոր, — ասեց ու իր ահագին դազանակը Հասցրեց գայլի մէջքին: Թշուառ գայլը յանկարծ մի ճիչ արձակեց, ոտքերը ձգեց ու շունչը տուեց...

Գ. ԲԱԼԱՍԵԱՆՑ.

31. ՀՈՎԻՒԻ ԵՐԳԸ

Ես Արարատայ սուրբ սարի վերայ
Արածեցնում եմ, Տէր, իմ Հօտերը.

Դիշեր ու ցերեկ Քո տեսոյն կարօտ՝

Քեզ սպասում են իմ ոչխար, իմ Հօտ:

Արգեօք կը լինի՞, որ քեզի մի օր
Տեսնեմ ու սիրեմ, որպէս զըթոտ Հօր:

Արգեօք Դու՛մ մի օր կը լինի՞ որ գաս,

Իմ վրանումը բարի Հիւր դառնաս:

Երբ, Տէր, Դու մի օր ինձ մօտ Հիւր կը գաս,

Եւ բարի ողջոյն սիրով ինձ կը տաս,

Ոտքերդ կը լուանամ ջրով պաղ, յըստակ,

Քեզ Հանգիստ կը տամ իմ վրանի տակ:

Որպէս Աբրահամ ծերունի Հայրիկ, բնա խոյմբն

Կը Հիւրասիրեմ Քեզ, Տէր իմ քաղցրիկ:

Քեզ Համար կը զոհեմ գառն անարատ,

Կը խընկեմ բուրումն ամբողջ Արարատ:

Կաթ, սեր, կարագով կը կազմեմ սեղան,

Եւ ծաղկըներով կզարդարեմ նորան:

Քեզ կը խըմեցնեմ մեղրի օշարակ,

Կ'ածեմ իմ սրինգով երգ քաղցրանրագ:

Ինձանից կը Հեռանաս, Տէր Դու, դո՛ւ սըրտիւ,

«Դու բարե՛աւ մընաս, կ'ասես, Հեզ Հովիւ»:

Քեզ կ'առաջնորդեմ մինչ լեռան կատար,

Եւ Համբուրելով կը դնեմ ճանապարհ:

ԲԱՖԳԻ.

Հ ա կ ա ն ի շ . ա . — Մեր պարտիզում շատ ծաղիկ կայ: — Մեր երեսպալի ծաղիկը պատուաստեցինք: — Խեղճ տղայ. ծաղիկ Հասակում մեռաւ:

բ . — Հովիւը սրինգ է ածում: — Հաւը հաւկիթ է ածում: — Քոյրս ջուր է ածում:

32. ԵՐԿՈՒ ԱՊՏԱԿ.

Կոստանդնուպոլիս քաղաքում կար մի Հարուստ մարդ՝ Յարութիւն Պեզճեան անունով: Սա մի կիւրակէ օր եկեղեցուց դուրս գալով՝ տուն էր վերադառնում: Ճանապարհին տեսաւ մի մուրացկան. բարովից նրան և իր տուն Հրաւիրեց: Բայց ինքն առաջ անցնելով՝ շուտով տուն Հասաւ և ծառաներին պատուիրեց, որ նրան տուն բերեն:

Երբ ծերունի մուրացկանը մտաւ սենեակը, տան տէրը ոտքի կանգնելով՝ Համբուրեց նրա ձեռքը և իր կողքին նստ-

տեցնելով ասեց. «Հայրիկ, յիշում ես այն երկու ապտակները, որ երեսիս զարկեցիր»:

Ծերունին, որ մի նաւավար էր եղած, շուարեց և հագիւ կարողացաւ այսպէս պատասխանել. «Ի՞նչ ես ասում, պարոն, այդ ի՞նչ զրպարտութիւն է, որ անում ես ինձ վրայ»:

—Ո՛չ. զրպարտութիւն չէ արածս, պատասխանեց Պեգճեանը: Մանկութեանս ժամանակ սաստիկ սէր ունենալով ձկնորսութեան՝ ես ամէն կիւրակէ գալիս էի քո նաւը՝ ձուկ որսալու: Մի անգամ էլ, երկուշաբթի օր էր. շուկայ գնալ չուզեցի, և եկայ քո նաւը որ ձուկ որսամ: Դու ինձ տեսնելով՝ ականջիցս բռնեցիր և երեսիս երկու ապտակ հասցնելով ասեցիր. «Շուկայ գնա. այսօր գործի օր է»:
—Քո այդ խրատը այնպէս ազդեց ինձ, որ այն օրից սկսած՝ ես պարապում էի իմ գործով ու աշխատում: Եւ, եթէ ես այսօր հարուստ եմ, դրա պատճառը դու ես. ուստի ես պարտական եմ քո երախտիքը ճանաչել և քեզ շնորհակալութիւն անել:

Այս ասեց Պեգճեանը, հանեց քսանհինգ ռուբլի, տուեց ծերունուն և պատուիրեց նրան, որ ամէն ամիս գալ և ստանայ իրանից մի և նոյն գումարը:

Ս. ԷԹԵՐԻՔՆԵԱՆ.

Ի. ա. Մ'ուրացկան, վաճառական, ուսումնական, աշխարհական, հոգևորական:

Բ. Ա. ր. հ. ե. ս. տ. և Պ. ա. շ. տ. օ. ն. — Մշակը բանում է ուրիշ համար և օրական վարձ է ստանում: Երկրագործը երկիր է մշակում: Հացթուխը հաց է թխում: Որմնադիրը շինութեան որմերը կամ պատերն է դնում շինում: Հիւսիսը շինութեան փայտեղէնն է շինում: Ատաղծագործը ատաղձից տան կահույքը, այսինքն՝ սեղաններն ու աթոռներն է շինում: Դարբինը երկաթեղէնն է շինում: Ոսկերիչը ոսկեղէն ու արծաթեղէն անօթներ է շինում: Ակնագործը ակներ կամ թանկագին քարեր է շինում: Դերձակը հագուստներ է կարում:

Կօշկակարը կօշիկ է կարում: Խաղաղորդը կօշիկ կաշի է շինում: Վաճառականը զանազան բաներ է վաճառում:

Հովիւը հօտեր է արածեցնում: Զկնորսը ձուկ է որսում: Զրադացականը ցորեն է աղում: Բժիշկը հիւանդութիւններ է բժշկում: Քահանան եկեղեցական գործերն է կատարում: Խմբագիրը լրագիր է հրատարակում: Հեղինակը գիրք է շարագրում: Ուսուցիչը մանուկներ է կրթում:

II. — Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:

33. «ՌԻՒՇԻ ԶԵՌՈՎ ՓՈՒՇ ԲԱՆԱ».

Յուլիան էր: Արտերում ցորենը հասել՝ հնձի ժամանակը մօտեցել էր: Դիւղացին որդուն առաւ գնաց արտը: «Ո՛րդի, ասեց նա, արտը լաւ հասել է. էլ շատ սպասել չի կարելի. էգուց գնա մեր բարեկամներին յայտնի՛ր, որ գան արտը հնձենք»:

Արտի հասկերի տակը մի արտուտ բուն էր դրել ու իր ձագուկներին մէջը տեղաւորել: Նրանք լսելով գիւղացու խօսքերը, աղաչեցին իրանց մօրը որ շուտով հեռացնի իրանց, վախենալով չլինի՝ թէ հնձուորի ոտքի տակը մնան: Բայց մայրը հանդարտութեամբ ապահովացրեց նրանց, ասելով. «Մի՛ք վախենայ, ձագուկներս. հանգիստ կացէք ձեզ համար: Թող լոյսը բացուի, լետոյ կ'իմանանք»: Ի՛նչպէս որ եղաւ, նրանք գլուխ գլխի տուած՝ կուչ եկան մօր թւերի տակը և շուտ աչիկները խփեցին, քնեցին:

Հետեւեալ օրը մայրը ձագերից հեռանալիս ասեց նրանց. «Հիմա ես գնում եմ ձեզ համար կերակուր ճարելու: Երբ արտի տէրը գալ, էլի հնձելու մասին խօսք ձգի, լա՛ւ ականջ դրէ՛ք, տեսէ՛ք ի՛նչ է ասում»: Ասեց ու թռաւ: Շուտով եկան գիւղացին ու իր որդին:

—Ո՛րդի, ասեց հայրը, բարեկամներս չեկան, մենք էլ

Հեռու ուր ենք գնում. դու վեր կաց գնա հօրեղբորդ ու մեր խնամուն ասա՝ թող գան:

Արտուտի բնույթը ղվլոցն ընկաւ. արտուտիկները լվլվացին ու վշվշացին. «Ա՛խ, երբ պետք է գալ մայրիկը, երբ պետք է գալ, չկոտորուենք այստեղ»: Շուտով մայրիկն եկաւ ու պատմեցին նրան գիւղացու պատճառը:

— Ամենեւին մի՛ք վախենայ, ասեց մայրը, թող օրը բացուի, յետոյ կը տեսնենք. հօրեղբայրն ու խնամին էլ իրանց գործը կ'ունենան: Եթէ արտատէրը իր խնամու լուսովն է մնացել, մենք դեռ շատ կը կենանք այստեղ: — Այդ օրն էլ միջնեց, բայց ոչ հօրեղբայրն եկաւ, ոչ խնամին. արտուտն էլ իր ձագերով հանգիստ գիշեր անց կացրին:

Երրորդ օրը գիւղացին եկաւ արտն ու որդուն ասեց.

— Է՛հ, որդի, լաւ խաղ են խաղում մեզ Հեռ մեր բարեկամներն ու ազգականները. բաժինը աճած լինի, պատրաստ են, բարեկամ են. բայց երբ բանը օգնելուն, քրտինք թափելուն է գալիս, երեսները շուր են տալիս, մի մի պատճառ բերելով փախչում են գործից: Մենք որ ուրիշի լուսով մընանք, այս տարի հաց չենք ունենայ: Շատ լաւ. թող այս խրատ լինի մեզ: Դու այս ընդլիս վեր կաց, գնա մօրդ ու քոյրերիդ ասա որ առաւօտը մանգաղներն առնեն գան արտը: Այսօր էլ թող այսպէս միջնի:

Երբ արտուտը լսեց գիւղացու վերջին խօսքերը, «Ի՛նչ, ձա՛գուկներս, ասեց, հիմա ժամանակ է, վե՛ր կացէք գնանք. երբ արտի տէրը իր ձեռքով է ուզում իր գործը կատարել, ասածը կ'անի, առաւօտը մանգաղն իր բանը կը տեսնի»:

Այս ասեց, ձագուկներն առաւ ու թուան հեռացան արտից. բունը թողին գատարի:

II. Յունուար, յունիս, յուլիս, (հոկտեմբեր):

34. ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ.

Երուսաղէմը դեռ չէին տեսած՝ մի մշակուած դաշտ էր. և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկը ամուսնացած էր, միւսը՝ ամուրի: — Հնձի ժամանակ նրանք իրանց խուրճերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով, թողին դաշտումը:

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր.

— Եղբայրս կնոջ ու որդքերանց տէր է և նրանց պէտք է կերակրի. ուստի իրաւացի չի լինի, եթէ նրա և իմ ունեցածը հաւասար լինեն: Գնամ իմ բաժնից մի քանի խուրճ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնի վրայ. եղբայրս չի տեսնի և չի ընդդիմանայ ինձ: — Այս ասելով՝ նա գնաց, իր մտածածը կատարեց:

Նոյն գիշերը միւս եղբայրը դարձելով, իր կնոջն ասեց.

— Եղբայրս ինձնից փոքր է և ոչ ոք չունի որ իրան օգնի ու մխիթարի. ուստի իրաւացի չի լինի, եթէ նրա և իմ ունեցածը հաւասար լինեն: Գնամ իմ բաժնից մի քանի խուրճ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնի վրայ. եղբայրս չի տեսնի ու չի ընդդիմանայ ինձ: — Այս ասելով՝ նա էլ գնաց իր մտածածը կատարեց:

Հետեւեալ առաւօտը եղբայրները դաշտը գնացին, և որքան զարմացան, երբ տեսան որ իրանց դէզերը հաւասար են: Նրանցից ոչ մէկը չկարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը: Միւս գիշերը դարձեալ այնպէս արին, և այսպիսով նրանց դէզերը ոչ պակասում էին, ոչ աւելանում: Վերջապէս մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար՝ երկուսն էլ արթուն մնացին. և երբ խուրճերը շալակած՝ տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, լանկարծ իրար տեսան:

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու եղբայրների դաշտը և Աստուծոյ տաճարը այնտեղ շինեցին:

Ն ո յ ն ա ն ի շ. — Շինել, կառուցանել. — Մշակել, հերկել:

35. ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ԲԱՆ ՏԵՍՆՈՒՄ Է:

Մի մարդ, որ իր օրը զողութիւնով էր անց կացնում, մի գիշեր իր փոքր որդու հետ գնաց զրացու արտը՝ ցորենի խուրձեր գողանալու: Ցանկանալով որ ամենքից ծածուկ լինի իր արածը՝ նա նայեց չորս կողմը որ իմանալ տեսնող կ'այ, թէ՛ ոչ: Երբ ոչ ոքի չտեսաւ, ուզում էր ահա խուրձերը կապել, որ շալակի: Բայց նրա որդին հօրը զգուշացնելով ասեց. — Հայրիկ, մի տեղ մոռացար նայել:

Հայրը շտապով ցած գրեց ձեռքի կապը և հարցրեց.

— Ո՞րտեղ չեմ նայել:

Մանուկը ձեռքը բարձրացրեց գէպի երկինք և ասեց.

— Ահա այնտեղ մոռացար նայել:

Հայրը լսելով այս խօսքերը՝ թէ խուրձերը և թէ գողանալու սովորութիւնը թողեց դաշտումը և որդու հետ տուն վերադարձաւ:

I. — Գող, գող, լող, կող, հող, ձող, շող, տող, (ցող, քող):

36. Հ Ի Ն Զ Ր Ո Յ Յ.

Շատ հին ժամանակ մի թագաւոր կար՝

Զօրեղ, իմաստուն և շատ էլ արդար.

Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,

Զը գիտէր թէ ո՛վ կ'յաջորդէ իրան:

Թէպէտ նա ունէր տասներկու որդի, Բայց չէր իմանում, թէ ո՞րին ընտրի. — Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար, Նորանից փոքրը թույլ ու ցաւագար:

Երրորդը անհոգ ու խելքից պակաս, Զորրորդը անմիտ, թէ և անվնաս:

Այսպէս ոչ մէկը իր սրտովը չէր,

Ո՛չ մէկն իր հոգին, իր խելքը չուներ:

Միայն մի քիչ յայտնի փոքրիկն էր տալիս, Նա էլ հօրը մօտ շատ չէր գնում գալիս.

Այդ պատճառով էլ հայրը չը գիտէր,

Թէ արդեօք նա ի՞նչ շրնորհքի տէր էր:

Վերջապէս մի օր՝ տես ի՞նչ հընարեց...

Իր հաւատարիմ՝ ծառային կանչեց,

Թէ «գընա մի լաւ ցախաւել քաղիր,

Երեք չորս տեղից պինդ ուռո՛վ կապիր»:

Երբ որ ասածը ծառան կատարեց.

Բերեց ցախաւելն առջևը դրեց.

Նա կանչեց իր մօտ բոլոր որդոցը

Եւ առաջարկեց հընարած գործը:

«Սիրելիք, ասեց, ես ձեզ կանչել եմ,

Որ վերջին կամքը՝ ամենքիդ յայտնեմ. —

Ի՞նչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,

Եւ բաւական է, որքան ապրել եմ:

Շուտով իմ նախնեաց ճամբովը կ'երթամ

Նրանց պէս ես էլ սև հող կը դառնամ.

Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումըս,

Կ'ուզեմ ձեզ յայտնել՝ ի՞նչ կայ մըտքումըս,

Ահա ձեր առջև մի նոր ցախաւել,

Որ ես հէնց այսօր կապել եմ տըւել.

Ո՛վ որ ձեզանից կը կոտորէ սըրան,
Իմ թագն ու գահը ես նըրան կը տամ:

«Հայր, ես կը կոտորեմ», ասեց մեծ որդին,
Եւ վըստահոթ թեամբ մօտեցաւ աւլին.
Վերցրեց աւելը և ծունկը կալաւ,
Քաշեց, քաշքըշեց, ոչինչ չը եղաւ.

Շատ քըրտինք թափեց, շատ չարչարուեցաւ,
Դեղնեց սըփըրթնեց, և լետ քաշուեցաւ.
Յետոյ երկրորդը եկաւ վեր առաւ,
Նա էլ իր եղբօր դառն օրին հասաւ.

Երրորդն էլ եկաւ իր ուժը փորձեց,
Բաւական տանջանք չորրորդն էլ կըրեց.
Միւսներն էլ իրանց բախքը փորձեցին,
Բայց ցախաւելը չի էլ ծըռեցին:

Ամենից վերջը փոքրը մօտեցաւ,
Եւ իր հօր առջև տես ինչ խօսեցաւ.
«Հայր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նըման ի գուր չարչարուել...
(Եթէ ես քո տեղը թագաւոր լինեմ,
Տես իմ թըշնամուն ինչպէս կը լաղթեմ.—
Նըրա միութեան կապը կը քանդեմ,
Ուժերն իրարից կը հեռացընեմ:

Յետոյ նախ մէկին և ապա միւսին,
Ջոկ ջոկ ջարդելով կ'ընկճեմ ամենքին.
Իսկ իմ տէրութեան ցըռած ուժերը,
Ինչպէս ցախաւելի դճրկուն ճղները,

Ամուր կապերով կապած կը պահեմ,
Այս է քո միտքն էլ, ես ինչքան գիտեմ:
Բայց որ ասածըս լաւ հասկացընեմ,
Տեսէք աւելը ինչպէս կը կոտորեմ:»

Եւ այս ասելով՝ նա վեր-է առնում
Աւելի կապերը քանդում, արձակում.
Ճըկուն ճըղները մէկ մէկ վերցընում,
Ամենի առջև կտրատում ջարդում:

«Ապրես, իմ որդի, ասում է հայրը,
Քեզ արժանի է իմ թագն ու գահը:
Գըրկում է որդուն, ճակատին պաշում
Եւ թագն իր ձեռքով դըլխին է դընում:

«Տեսէք, ասում է միւս եղբայրներին,
Դուք չը նախանձէք ձեր եղբօր փառքին.
Եթէ սըրա հետ սերտ սիրով մընաք,
Աւելի մեծ ուժ և փառք կը ստանաք:

Իսկ եթէ զատուիք և ջոկ ջոկ լինիք,
Քանդուած աւլի պէս շուտ կը կոտորատուիք» *):
Դ. ԱՂԱՅԵԱՆՑ.

Ն ո յ ն ա ն ի շ. — Հաւատարիմ, մտերիմ:
II. — Երկրորդ, երրորդ, չորրորդ. հինգերորդ, վեցերորդ...

37. Ե Ր Զ Ա Ն Ի Կ Մ Ա Ր Դ Ը.
Մի թագաւոր սաստիկ հիւանդացաւ, և ժողովելով իր
իմաստուն մարդկանցը, խոստացաւ որ՝ ո՛վ հնար կը գտնի
իրան բժշկելու, իր թագաւորութեան կէսը նրան կը տայ:
Իմաստունները սկսեցին առանձին առանձին մտածել և լե-
տոյ միասին խորհրդակցել. բայց ո՛չ մի միջոց չէին կարողա-
նում գտնել Վերջը նրանցից մէկն ասեց. «Եթէ թագաւորին

*) Մանուկներին սոյն գեղեցիկ յօդուածը զիւրամատչելի անե-
լու համար՝ ստիպուեցայ համառօտել, որի վրայ հրաւիրում եմ
յարգելի հեղինակի ներողամտութիւնը:

Հազցնենք որ և իցէ երջանիկ մարդու շապիկը, նա կ'առողջանայ»:

Այս բանի վրայ թագաւորը սաստիկ ուրախացաւ և մարդիկ ուղարկեց մի երջանիկ մարդ գտնելու: Թագաւորի խնդրակները երկար ժամանակ ման եկան նրա տէրութեան մէջ, բայց երջանիկ մարդ չէին կարողանում գտնել: Ու՛մ որ երջանիկ էին Համարում, նա մի որ և իցէ պատճառով թշուառ էր դուրս գալիս: Մէկը շատ Հարուստ էր, բայց առողջ չէր. միւսը քաջառողջ էր, սակայն աղքատ. երրորդը Հարուստ էլ էր, առողջ էլ, բայց անխելք էր: Մի խօսքով ամէն մարդ մի բանից դժգոհ էր, ամեն մարդ մի պակասութիւն ունէր:

Մի անգամ, երեկոյին, թագաւորի որդին անց է կենում մի խրճիթի մօտովը և լսում է. «Ե՛հ, փառք Աստուծոյ, աշխատեցի, կերայ, կշտացայ. Հիմա պառկեմ Հանգիստ քնեմ. էլ ի՛նչս է պակաս»: Թագաւորի որդին ուրախացաւ, որ վերջապէս գտաւ մի կատարեալ երջանիկ մարդ. հրամայեց որ Հանեն նրա շապիկը և նրա փոխարէն տան նրան՝ ինչ որ կամենայ: Բայց բանից դուրս եկաւ, որ այն երջանիկ մարդը շապիկ էլ չունէր:

Հ ա կ ա ն ի շ .—Այս երկու սիւների միջոցը (միջի տարածութիւնը) Հինգ արշին է: —Նա այնքան ժլատ է, որ դու ո՛չ մի միջոցով (Հնարքով) չես կարող նրանից փող առնել: —Այն միջոցին (այն ժամանակը), երբ մէկը խօսում է, միւսները պէտք է ականջ դնեն:

Ի . ա .—Խորհրդակից, խօսակից, ընկերակից, Հասակակից, սրտակից, հոգեկից:

բ .—Երջանիկ, բաղտաւոր, օրինաւոր. —Ապերջանիկ, ապաբաղտ, ապօրինի:

գ .—Դժգոհ, դժբաղդ, դժգոյն. —Տգեղ, տհաս, տկար, տմարդ:

Աշունը եկաւ, շոգ տոթը անցաւ. արօրն ու գութանը պատրաստ կան դռանը. միմեանցով դիպան, սերմը դուրս տարան: Գիւղացին վարեց, իր ցելը սերմեց, բերանը բացեց, երկու խօսք ասեց. «Թէ պարտքակոխ լինեմ, թէ Հորերըս լցնեմ, իմ յոյսն ես դու, բաժին ես հոգու: Ծըլիւր, կանաչիւր, խրդճա՝ տընանկիս, աչքդ բաց, նայի՛ր՝ տըկոր խիզանիս: Վերև ու ներքև՝ երկինք ու երկիր, ծարաւ մի՛ք թողնի իմ յոյս ցանածին»:

Ա . ԱՐԱՐԱՏԵԱՆՑ .

Հ ա կ ա ն ի շ .—ա .—Մարդս ունի հոգի և մարմին: —Այսօր Հինգ հոգի չեն եկել մեր ընկերներէց: —Հո՛գիս, ինչո՛ւ ես տխուր:

բ .—Բերանով խօսում ենք: —Այս գետի բերանը շատ Հեռու է: —Դանակի բերանը սուր է:

գ .—Աչքս ցաւում է: —Խանութներէս մի աչքը վարձու եմ տուել: —Պարկի մի աչքումը Հացն եմ դրել, միւսումը՝ գինին:

Աշունքացաւ: Աշտարակայ կանաչ այգիները, որ մարդու սիրտ էին ուրախացնում իրանց անուշ հոտերովը, Աստուծո՛ւ փռած կանաչ գորգերովը, Հազար տեսակ ծաղիկներովը, —Հիմա այնպէս են դարձել, որ մարդ չէ ուզում երկրորդ անգամ վրաները նայել: Խաղողի որթերը, որոնք գլուխ գլխի կպցրած՝ իրանց քեահրիբար ողկոյզներովը մարդու բերանի ջուրն էին բերում ու երեսին ծիծաղում, —Հիմա բոլորովին մեռած են երևում, Հողը գլխներին տուած: Ծառերը, որոնք մի փոքր հով ընկած ժամանակը՝ իրանց տերեւների սօսափիւնով ամէն տխրած սիրտ բաց էին անում, —Հիմա կնտացած՝

մի տերև էլ չես գտնում վրաները. միայն չոր չոր չոփերն են երևում բիզ բիզ: Սփները, որ իրանց ծաղկներովը՝ վրանները հացի նստողի ախորժակը բաց էին անում,—հիմա, կարծես, մեռած մարդու երես են դարձել՝ ծառերից թափուած դեղնած տերևներովը: Սմէն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան է ներկայացնում:

Պ. ՊՈՇԵԱՆՅ.

II.—Նայել, խնայել, հրամայել. մարդավայել, բացառկայել:

40. ԱՇՆԱՆ ՏԵՐԵՆԵՐ.

Աշնան ըսկըզբին մի բարակ քամի
Սարիցը եկաւ դաշտերը իջաւ,
Վըստաց, փըսփըսաց մի բան ամենքին
Ու անցաւ գընաց անտառը մտաւ:

Խոտը չորացաւ, հողը ցամաքեց,
Այստեղ ու այնտեղ բացուեցին ճեղքեր,

Անտառը դողաց ու վախից խկոյն
Դեղին գոյն առան կանաչ տերևներ:

Շատ օր չէր անցել, ահա նոյն քամին

Սըլսըլաց նորից, մըտաւ մերկ դաշտեր:

Բերեց հաւաքեց, դէպ՝ երկինք քըշեց

Սւազն ու փոշին ու չորցած խոտեր:

Մըտաւ անտառը, շողհարեց ծառեր,

Թափեց տերևը, աջ ու ձախ փըռեց,

Փըշեց ու ձըգեց թէ սար և թէ ձոր

Ու իրանց բուսած տեղիցը զըրկեց:

Բայց ինչքան արեց, չը կարաց քամին

Պոկել մի տերև եղևին ծառից,

Որ ժայռի միջից նայում էր կանաչ՝

Նոր ոստ, նոր տերև բուսած կողքերից:

Կ. Մ. ԸՆԴՈՒՆԱԼԵՆՅ.

Նոյնանիշ.—Ոստ, ճիւղ.—Բոյս, տունկ:

41. Փ Ո Ւ Ո Ր Է Կ.

Մուլթը գետինն առաւ. մատդ որ մարդու աչքը կոխէիր՝
չէր տեսնի: Սմպերը սարերիցը զլխները ցարձրացրին, ոտք-
ները կտրեցին. մռայլ ու մառախուղ սար ու ձոր բռնեց:
Կարծում ես թէ հազար վիշապ բերանները բաց արած՝ դա-
լիս են՝ որ սար ու ձոր կուլ տան: Կայծակը այստեղ ու այն-
տեղ որ չախմախին չտուէց, սարըյիք իմացան թէ ինչ պէտք
է գայ իրանց գլխին. տաւար, ոչխար փարախի մէջն արին,
հրացաններն առան, շները բաց թողին, որովհետեւ լաւ գի-
տեն՝ որ դողի ու աւազակի որսայլու ժամանակն է: Հէնց որ
ամպերը թոփ ու թոփխանէն սարքեցին, ո՛վ ոտք ունէր՝
փախաւ, ո՛վ աչք ունէր՝ փակեց, ընտանիքը մի ծածկոյթի
տակ արեց, ոտքի վրայ մի կտոր հաց առան, այն էլ գօտի-
կը դրին, չկերան, որ տեսնեն՝ թէ վերջները ինչ կը լինի,
ինչպէս կը լուսանայ: Մէկ բարակ կարկուտ անձրևի հետ
խառը եկաւ, վրաներովն անց կացաւ. երկինք, գետինք սկսեց
կրակուիլ: Կայծակը որ չէր մտրակոււմ սարերի գլխին, ու-
զում էին թէ հազար գազ խորը գնան: Սմպը որ թոփի բե-
րանը չէր բաց անում, գետինն ուզում էր հազար կտոր լի-
նել ու հողին աւանդել:

Խ. ԱԲՈՎԵԱՆՅ.

Հ ա կ ա ն ի շ. — Հիւանդը հոգին աւանդեց: — Հայրը այս պատմութիւնը աւանդեց իր որդուն: — Ուսուցիչը դաս է աւանդում:

42. ԻՆԵՂՃ ՄԱՐԴԸ ԻՐ ԽԵՂԵՒ ԽԵՂՃՆ Է՝.

Մի գիւղացի Կ. Պոլսի փողոցներում ման գալիս գտաւ մի պարկ ոսկի: Իսկոյն քաշուեց, նստեց մի պատի տակը. պարկը դատարկեց գետնին և համբելով՝ շարեց իր առաջը, մի տեղ շատ, միւս տեղ քիչ, և այսպէս էր խօսում ինքն իրան: —

— Այս տասը հատը կը տամ Թորոսի աղջկան՝ նշանադրէքի. այս քսան հատը կը տամ նրա հագուստին. այս միւս քսանը կը ծակեմ, որ վզիցը կախ անի. այս քսան հատն էլ գլխին. այս քսան հատն էլ՝ ինձ հագուստի գին. այս լիսուն հատն էլ՝ հարսանիքի ծախսը: Յետոյ այս երեսուն հատը կը տամ տանուտէր Թոմասի ձին կ'առնեմ. այս հարիւր հատն էլ կը տամ՝ կնքահայր Պետրոսի այգին կ'առնեմ. այս հարիւր հատով էլ Մարկոսի ջրաղացը կ'առնեմ. այս չորս հարիւր հատով էլ ինձ համար մի լաւ տուն կը շինեմ. այս մնացածն էլ կը տամ շահեցնելու: Յետոյ հանգիստ կ'ապրենք և որդոյ որդի էլ աղքատութիւն ու օտարութիւն չենք տեսնի:

Այս խօսքերից յետոյ լանկարծ վրայ հասաւ ոսկու տէրը. բոլորը ժողովեց, լցրեց իր պարկը և հասցնելով գիւղացու գլխին՝ ասեց նրան. «Ո՞ւմ ոսկիքը ո՞ւմն էիր բաժանում: Ասեց ու հեռացաւ:

Իսկ գիւղացին տխրութեամբ ծածրակը քորելով ասեց, անիծելով ամենքին. «Մեռնի Թորոսի աղջիկը, սատկի՜ Թոմասի ձին, չորանայ Պետրոսի այգին, քանդուի Մարկոսի ջրաղացը. հը՛...»

I. — Գիւղացի, քաղաքացի — Աշտարակցի, օշականցի. երեւանցի, վանեցի:

II. — Հինգ, հարիւր, հազար, (լիսուն):

բ. — Պետրոս, Պօղոս, Մարկոս, Մարտիրոս, Թորոս, Թագէոս, Օգոստոս, Քրիստոս, կաթողիկոս, եպիսկոպոս:

43. 2 Մ Ե Ռ.

Ջրմեռը եկաւ՝ սաստիկ եղանակ,

Ալեւոր ծերուկ՝ մաղերով ճերմակ.

Դաշտեր ու ձորեր ծածկեց սաւանով,

Դետեր, առուններ պատեց սառուցով:

Է՛լ չեն երևում ծիծառ ու սոխակ

Չըւել է փախել ամէն մի թռչնակ.

Բոլոր գազաններ որջերը մըտել,

Ամենքն ապահով տեղ են ծըլարել:

Շատերին, այո՛, անդունդ գըլորեց,

Համակ աշխարհը ամուր շրջլծայեց.

Է՛լ առաջուայ պէս գործօն գիւղացիք

Դաշտում, արտերում չեն թափում քըրտինք:

Ահա՛ ձիւնապատ թափանցիկ անտառ,

Ինչպէս մի մանուկ աշխոյժ ու կալտառ՝

Քօղի տակ ծածկուած ոյժ է կազդուրում,

Կենսաբեր դարնան գալուն ըստասում:

Երեք ամսից լետ կ'արթնանայ պարտէզ,

Թըռչուններ կը գան կըրկին նոր հանդէս.

Ուրախ կը զարկի սիրտը մարդկութեան,

Կը ժըպտայ համեստ մանուշակ բնութեան:

Գ. ԲԱԼԱՍԵԱՆՑ.

Ն ո յ ն ա ն ի շ ն ե Ր. — ձերմակ, սպիտակ. — Չուել՝ գաղթել:

Հակահիշ. — Տարին ունի չորս եղանակ: — Այսօր շատ լաւ եղանակ է: — Այս երգը երգւում է երկու եղանակով:

II. — Գազան, սեղան, թռչուն, սողուն, քանոն, կանոն. — Գազաններ, սեղաններ, թռչուններ, սողուններ, քանոններ, կանոններ:

44. ՉՄԵՌԸ ԳԻՒՂՈՒՄ.

Այժմ էլ ձմեռը՝ կապուած է աշխարհը. լցուեցին գոմերը եգն ու կովերը: Գիւղում լռութիւն, չկայ ձէն ու ձուն: Մի մոլթ գոմ-օղից լսում են ձայներ. մտել են այնտեղ պարապ գեղջուկներ, ասում են պունգլներ:

— Կոնի. գոլ ասա՛ իմ պունգլն ինչ է. — Հայրն ուղիղ, մայրը կեռ. տղան խելօք, թոռը գիժ:

— Վազան ցիցը — Հայրն ուղիղ, Վազն ինքը — մայրը կեռ. Խաղողն օրհնած — տղան խելօք. Գինի, օղի — թոռները գիժ:

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ.

Ն ո յ ն ա ն ի շ. — Գեղջուկ, գիւղացի:

45. ՉՄԵՐԱՅԻՆ ԱՌԱՒՈՏ.

Երիտասարդ՝ տան տղերքը՝ ամառուայ պէս խոտ հնձելու, կալ կալսելու, այգի փորելու, դարման կրելու հոգս չունենալով՝ ճլրմկոտալով աչքները տրորում են ու քնաթաթախ մտնում գոմը՝ որ տաւարին, ձիաներին խոտ տան, տակըները մաքրեն, ջուրը տանեն, ձիաները թիմարեն ու հետը երգ ասելով՝ կրկին կապեն ու գնան տուն:

Յարգւոր հարսները՝ ասղարոյր օշմաղը մինչև քիթների կէսը խոր գցած, քօղ ու լաչակի ծայրը աչքների տակը խոր

քաշած՝ այնպէս որ երեսները չէ երեւում. մէկ դարալի շոր հագներին՝ կտաւի շապկով զարդարած. մէկ մեծ գօտկով մէջքները չորս տակ, հինգ տակ կապած՝ թռչունի պէս վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին՝ փեշով սրբեցին, ու որն սկսում է տունն աւելել. որը դուռը սրբել, որն էլ կրակ է անում որ թոնիրը վառի ու տան պատրաստութիւնը տեսնի, պղնձները վրան դնի ու կերակուրներն եփի, պատրաստի:

Տան մանկահաս աղջկերքն էլ՝ գլխները սանրում են, մազները հլւսած, թիկունքին գցած՝ շուշտակը ուսըներին գցում, կուժը վրան դնում, բերանը կաշնում ու գնում են՝ որ տան համար ջուր բերեն. և երկար ժամանակ ջրի վրայ միմեանց հետ զրոյց անելուց լետոյ՝ կրկին միմեանց հետ խօսելով, ծիծաղելով գնում են իրանց տները:

Խ. ԱՐՈՎԻԱՆՑ.

Ն ո յ ն ա ն ի շ. — Կուժ. սափոր. — զրոյց, խօսակցութիւն:

I. ա. — Երգ — երգել, գործ-գործել:

բ. — Գիր — գրել, գիծ-գծել:

գ. — Հունձ — հնձել, տունկ-տնկել:

դ. — Սէր — սիրել, վէճ-վիճել:

ե. — Լոյս — լուսանալ, ծոյլ-ծուլանալ:

զ. — Հաշիւ — հաշուել, կռիւ-կռուել:

է. — Խօսել — խօսք, աղօթել, աղօթք:

46. Չ Ի Ի Ն.

Ձիւնը որ կուգայ երկընքէն ի վար, Իմացի՛ր՝ մեծ բաղտ է մարդուս համար. Վերմակի պէս տաք կը ծածկէ գետին, Նա հողին կուտայ հիւթ, պարարտութիւն, Դաշտին ու արտին մեծ առատութիւն:

Մի տըրտընջայ, մարդ, դու բընութենէն,
Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

ԳԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱՅ:

Նոյնանիշ.—Պարարտ, դէր:

47. ՉՄԵՐԱՅԻՆ ԳԻՇԵՐ.

Կէս գիշեր է: Հիւսիսիցը, ձիւնախառն սառ քամին՝
մերթ վայրենի գազանի պէս, գոռում գոչում է ուժգին:
Մերթ պէս օտար ճանապարհորդ, ցրտից սառած փոյթ ընդ
փոյթ՝ որպէս թէ իր ձեռնափայտով, ծեծում է տան լուսա-
մուտ: Պառաւ պապը տարածել է, արծաթապատ իր թւեր՝
և միակերպ ծածկել սար, ձոր, անտառ, դաշտեր և տըներ:
Դուրսը տեսար ըսպէի մէջ, մի ձիւնի սար գոյացաւ՝ մէկ էլ
քամին օձապըտոյտ փըչեց—կըրկին չըքացաւ: Զիւնի փոշին
աչք է ծակում, առատ թափում արտասուք՝ ցուրտը սաստիկ
անտանելի, չորացնում է բերնում թուր: Բակի շուներ մերթ
խաղալով, ձիւնոտում է իր մուշտակ՝ մերթ վազում է կնձին
տալով, պատըսպարում սրահի տակ: Ագաղաղը մոռացել է,
սովորական իրա երգ՝ հաւաքընում կուչ է եկել՝ հաւքած
գլխին իր ընկերք: Ո՛չ մարդու ձայն, ոչ կենդանու, մինչ շան
հաջոց չէ լսում՝ կըրակ, ճըրագ, լոյսի նըշույլ, ո՛չ մի տեղ
չէ երևում:

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ:

Ն ո յ ն ա ն ի շ.—Գոռալ, գոչել, աղաղակել.—Տարածել,
սփռել.—Լուսամուտ, պատուհան.—Հաւաքել, ժողովել, դի-
զել, կուտակել:—Մերթ, երբեմն:

Հ ա կ ա ն ի շ.—Մեր տան բաղումը մի խոր ջըհոր կայ:—

«Հապա այն ինչ ասող է, հայրիկ,

Որ այնպէս պարզ վառում է.

Նորա մաքուր, պայծառ լոյսը

Զորս կողմը բակ բըռնել է»:

Ի. ա.—Մարդու բնակարան (տուն), աղուէսի, դալի որջ,
թռչունի բոյն,—(Ծառի բուն, մարդի բուն (կամ՝ իրան):

բ.—Ծանապարհորդ, նաւորդ, լուղորդ, որսորդ:

48. ՎԵՀԱՆՉՆՈՒԹԻՒՆ.

Մի շատ հարուստ մարդ, ծերութեան օրերում, ցանկա-
ցաւ իր ունեցած կայքը բաժանել իր երեք որդեկանց մէջ:
Իւրաքանչիւրին իր մասը տալուց յետոյ՝ նա ասեց. «Մնում է
էլի մի շատ թանկագին գոհար. ես այն կը տամ ձեզնից
նրան, ով մի վեհանձնութիւն կ'անի: Իսկ դրա համար ես
ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս»:

Շուտով որդիքը ցրուեցան. նրանք ման եկան զանազան
քաղաքներ, և երբ հօր ուղածը կատարեցին, կրկին վերա-
դարձան, տուն եկան: Նրանք սկսեցին պատմել հօրը իրանց
արած վեհանձնութիւնները:

Անդրանիկ որդին աւեց.

—Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական
յանձնեց ինձ իր բոլոր հարստութիւնը, և թէպէտ նա ինձ-
նից ոչինչ ստացական չառաւ, բայց ես կրկին հաւատարմու-
թեամբ վերադարձրի նրան իր գոյքը:

—Ո՛րդեակ, պատասխանեց հայրը, դու արել ես այն,
ինչ որ պէտք է անելի, և այն մարդը, որ ուրիշ տեսակ
կը վարուէր՝ տգէտ է. որովհետեւ ազնիւ լինելը մարդուս հա-
մար մի պարտականութիւն է: Դու արել ես այն, ինչ որ
մեզնից ամէն մէկը պէտք է անի ուրիշներին: Քո արածի
մէջը վեհանձնութիւն չկայ:

Յետոյ խօսեց միջնակ որդին:

— Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց էի կենում մի լճի եզերքովը. մի փոքրիկ երեխայ՝ քիչ էր մնացել ջուրն էր ընկնում: Ես իսկոյն օգնութեան հասայ նրան և, չխնայելով իմ կեանքը, ազատեցի նրան:

— Շնորհաւորում եմ, ասեց հայրը. բայց դարձեալ այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ: Քո արածը կարեկցութիւն է, բարեգործութիւն է, բայց ոչ՝ վեհանձնութիւն:

Վերջապէս խօսեց կրտսեր որդին:

— Մէկ օր ես իմ թշնամուն տեսայ խորը քնած մի անդունդի ծայրին: Ամենաթեթեւ քամին անգամ կարող էր նրան անդունդը գլորել. բայց ես նրան զարթեցրի մեղմաբար և ազատեցի վտանգից:

— Ո՛հ, սրբեակս, ազադակեց բարի ծերունին, գոհարը քոնն է: Ի՛նչ վեհանձնութիւն է՝ լաւութիւն անել թշնամուն, մահից ազատել թշնամուն:

Ն ո յ ն ա ն ի շ. — Կայք, գոյք. — Ստացական, անգործագիր:

Ե. — Թէպէտ, թէ և — բայց, սակայն:

49. ՏԱՐՈՒԱՅ ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

Գալիս է զարուն, նոր կեանք է բերում,
Վարդ և շուշանը բացւում են, բուրում.
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ զօրութեամբ ծագում է արև:
Շնչում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցօղը սրփում է գոհար,
Կանաչ հովիտը վառւում է պայծառ:
Զարթեց բընութիւն կուսական խանդով:
Դէպ՝ գործ մեղուներ դիմեն եռանդով:

Գալիս է ամսոռ, — կրակոտ եղանակ,
Անխոնջ վաստակի, պրտոյի ժամանակ:
Իւր աստուածեղէն ջերմութեան հոգին
Կենսատու շընչով ծաւալէ արփին:
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Մանկան թըշի պէս վառւում է խընձոր.
Սաթանման դեղին կախուած է ողկուզ,
Մանկտին գրաւում է և՛ շըլոր և՛ թուզ:
Սեխով, ձըմերկով լիքըն է բոստան,
Ոսկեայ հոսանքով ծըփի անդաստան:
Եւ արտորայքի ծանրացած հասկեր՝
Խիտ հիանալի նըկարեն պատկեր:
Յետ երկից անգամ երգը խօսնակին
Զարթնում է իսկոյն հնձուորի հոգին:
Փայլում է մանգաղ: Գործում է մըշակ:
Բարձած սալակի ճըռինչն անուշակ
Հընչւում է հեռու, հեռու դաշտերէն,
Բերում դէպի կալ հունձքը արտերէն:
Կալսում է իւր կալ, մաքրում է ցորեան:

Գալիս է Աշուն: Թափւում է տերև,
Սոխակն իւր վարդին տայ վերջին բարև.
Եւ տարափոխիկ արագիլ կըռունկ՝
Գաղթեն դէպի տաք երկրներ խորունկ:
Ուժգին, ցըրտաբեր փըչում է հիւսիս,
Սև սև թուխպերով պատւում է Մասիս:
Մահուան դեղնութեամբ ծածկւում են դաշտեր,
Զուարճասէր սըրտից չեն ցըրւում վըշտեր:
Լիքն է հունդերով մըրջիմին ամբար,
Թէ և չը ցանեց, չը կալսեց իւր կալ,

Եւ իւր մոմեղէն տանը շար ի շար
Մեղուն կաղմել է ձըմեռուայ պաշար:

Գալիս է Ձըմեռ, — ալւոր ծերուկ,
Խոժոռած դէմքով, ըսպիտակ մօրուք.
Ձը կայ մի ժըպիտ նորա աչքերում,
Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում,
Սառած է արիւն ողջ երակներում,
Սիրոյ ջերմութիւն չկայ նորա սրբտում:
Մահաբեր ձեռքով ձիւնեղէն պատատու
Տարածում է նա: Սար, դաշտ և անտառ,
Ողջ ծածկւում են սպիտակ պատանով...
Լըռում է թըռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Ստոցապատ գետակ մընչում է լըռիկ:

ԲԱՖՖԻ.

Նոյնանիշ. — Մասիս, Արարատ:

- Ի. ա. — Ոսկեայ, արծաթեայ, երկաթեայ, փայտեայ:
բ. — Արտորայք, գիւղորայք, բերդորայք:
գ. — Անդաստան, այգեստան, ծառաստան, բուրաստան:
դ. — Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Ճաճկաստան:
դ. — Տարախոխիկ, տարագնաց, տարաբաղոտ, տարածամ:
ե. — Սառցապատ, ցօղապատ. թուռապատ, արծաթա-

պատ:

Բ. ՏՈՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

50. Օ Ջ Ա Ղ.

— Տունը իր բոլոր մասերով ասուում էր օջաղ: Օջաղ քանդելը, նրանից հեռանալը, նրա վրայ խելթ աչքով նայելը գիւղացիների համար մեղք էր համարւում: Օջաղը սուրբ էր, պաշտելի և համբուրելի: Եթէ մէկը միւսին մի գգալի վնաս էր լինում տուած, ընկնում էր նրա օջաղը և իսկույն նրան ներւում էր իր լանցանքը: Եօթը եղբայրներ, թոռների տէրեր՝ իրարից չէին բաժանւում. բաժանուելիս էլ օջաղը մեծինն էր:

Գիւղացու հարստութեան մի պատճառն էլ «դովլաթ բաժանողն» էր: Դա կեանքի և մահուան հրեշտակն է, որ գտնւում է օջաղի գլխին, և ամէն երեկոյ ծերունու կերպարանքով պտրտում է գոմի մէջ: Նրան միայն տանու արդարները կարող էին տեսնել: Օջաղին ծուռը՝ նայողը դովլաթին է քացով տալիս: Այսպիսի դէպքում դովլաթ-բաժանողը խռովում հեռանում է ալգալիս տնից:

Օջաղի առաջին էր ծնւում, սնւում, զարգանում և միշտ խրատւում տան զաւակը: Մարդիկ երգւում, պարծենում ու հպարտանում էին օջաղի անունով: Նրանց բոլոր հոգսերը ցրւում էին, երբ աշխատանքից «յոզնած» մտնում էին իրանց լարկի տակը: Օջաղի առաջը ազատ էր համարում իրան ամէն մարդ:

Տան մանր երեխաները ամէն կիրակնամտին արդար մոմ էին վառում օջաղի գլխաքարի վրայ: Երբ որ մայրը խունկ էր ծխում, ամենքն էլ քարերը համբուրելով ծունր էին դնում մօր հետ, որ օջաղը բարեխօս լինէր տիրամայր Սատուածածնին, սա էլ Սատծուն, Սատուած էլ հաստատ պահէր իրանց տունը միշտ և հանապազ: Կիրակնամտին, հիմա էլ, օջաղիցը կրակ դուրս տալը մեղք է համարւում. ոչ մի տուն այդ օրը չէ հանգցնում օջաղի կրակը:

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ.

Ն ո յ ն ա ն ի շ. — Քանդել, աւերել, կործանել, խորտակել: Հ ա կ ա ն ի շ. — Օջաղի առաջին էր սնւում երեխան: — Յունուարի մէկը տարուայ առաջին օրն է:

I. — Կիրակնամուտ, ամսամուտ, տարեմուտ:

II. — Սուրբ, նուրբ, ուրբաթ, երբ:

51. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

Եթէ անսրտճառ հարկաւոր է խորը վարել դաշտը, այն ժամանակ մեր գիւղացիները վարում են գութանով: Իսկ եթէ շատ խորը չէ հարկաւոր վարել, գործ են ածում արօրը կամ չուծը, որ գութանից թեթեւ է: Արօրով վարելու համար լծում են մի լուծ գոմէշ, երկու ձի կամ երկու լուծ եզր: Իսկ եթէ շատ մեծ ցել պէտք է անել, խամհատ վարել, և եթէ հողը խոնավ է ու խամ, այն ժամանակ հերկում են գութանով, որ իր ծանրութեան պատճառով գեղտինը խորն է ճղում: Գութանում լծում են մի քանի զուգ անասուն:

Գութանի գլխաւոր մասն է էշը, որի վրայ ամրացրած է ինքը գութանը. էշի վրայ ամրացրած մտցրած է ճեւիչը՝ հողը կտրելու, պատռելու համար, խոփը՝ ակօսին ուղիղ ձև

տալու և հողի միջին շերտը շուր տալու համար, առամը՝ խոփին օգնելու համար: Գութանի վերջին մասում գտնւում է ժանը, որ ամուր բռնած ունի մաճկալը, որ՝ հողը վարեն որտեղ ինչքան հարկաւոր է՝ խորը կամ երես. նամքարակը մի շղթայ է, որ ամրութեան համար պինդ կապուած է էշից. իսկ անիւները չծռելու, ուղիղ գծով պահելու համար գործ է տեսնում խարազանը. վերջապէս սոնին կրում է իր վրայ երկու մեծ ու փոքր ակները:

Եթէ դաշտը մի քանի անգամ հերկուելուց, սերմուելուց թուլացած, յոգնած է, այն ժամանակ նրան բարւոքում, պարարտացնում են կենդանիների աղբով կամ փէրիւով, որ առհասարակ գիւղացիք ածած են ունենում իրանց գոմերի կողքին: Աղբը չեն գործ ածում, եթէ հողը նոր, առանց էն էլ ուժեղ ու պարարտ է: Հերկած օրավարը շրջապատում են կոշտերով, ակօսներով ու նումբերով:

Աղբը սալներով, կթոցներով իրանց գարնան ու աշնան տափերն են կրում և կոյտ կոյտ գիգում վարելահողերի վրայ: Քայց այդ բաւական չէ. հարկաւոր է նրան փռել, խառնել հողի հետ. և թէպէտ աղբը ցրւում փոռում է, բայց դեռ ցելը կոշտ է, չի կարելի սերմել, որովհետև սերմը կակուղ անկողին է պահանջում: Եթէ ամառը ցելը այրուած, և անձրևից, ցօղից, փափկացած զովացած է, գիւղացիք համարձակ սերմ են ձգում: Իսկ եթէ նկատում են որ կոշտերը չեն փշրուել, ցելը չէ կակղել, շտապում են դաշտը իրանց սուր, առամնաւոր փոցխերով, որոնցով մինչև կոշտերի փշրուելը փոցխում են անդադար, լետոյ սկսում են ցանք անել, ցանել:

Առհասարակ երկրագործները տարին երկու անգամ են ցանք անում, այն է՝ գարնանը և աշնանը: Սաստիկ ցուրտ

տեղերում ցանքը մեծ մասամբ լինում է գարնանը և կոչ-
ւում է զարնանացան, և ցանում են՝ գարի, կորեկ, վար-
սակ: Իսկ որտեղ ցուրտ է, ցանքն անում են աշնանը և
ասում է՝ աշնանացան. ցանում են ցորեն ու հանար: Շատ
անգամ աշնանացանի ցեղերը արդէն ամառուայ սկզբից են
հերկում, որ աւելի լաւ փշրուեն արեւի այրող ճառագայթ-
ների տակ:

Հէնց որ սեպտեմբերը սկսում է, բերելով հետը խո-
նաւ օրեր, իսկոյն երկրագործները աշնանացանի սկիզբն են
անում: Աշնանացանը նոյն իսկ ձմեռը բուսած է լինում
փոքրիկ շիւերով: Այդ ժամանակ, երբ դաշտերում խոտերը
վաղուց դեղնած թառամած են լինում, աշնանացան արտե-
րը զարդարւում են թաւշեայ նուրբ կանաչով: Թէպէտ շատ
ցաւալի է տեսնել՝ ինչպէս բարդ բարդ դիզուած ձիւները
ծածկում են մետաքսապատ դաշտերը, ոչնչացնելով իրանց
տակը աշնանացանի մատղաշ ծիւերը, սակայն նրանց ար-
մատները աւելի լաւ են մեծանում, փարթամանում, ըն-
ձիւղներ արձակում, գետնի մէջ աւելի խորը գնում: Ամբողջ
ձմեռը աշնանացանը նիրհած քնած է լինում ձիւնի վերմա-
կի տակը. բայց, երբ գարնան ջերմութիւնից ձիւնը հալւում
է, այն ժամանակ սերմի արմատները սկսում են կրկին նո-
րանորջողուններ արձակել՝ առաջիններից աւելի պինդ: Բայց
վատն այն է, որ երբ աշնանը ձիւնը սակաւ է նստում,
բքեր են բարձրանում, որոնք աշնանացանը սառեցնում
ցրտատար են անում: Եւ սրա հակառակ՝ մեծ ուրախութիւն
է երկրագործների համար, երբ աշնանացանը ծածկւում է
ձեան հաստ վերմակի տակ:

Ամառը, յունիսին սկսւում է խոտահարը: Այդ ժամա-

նակ գիւղացիները իրանց ծանր հագուստներից թեթեւնա-
լով, սուր, փայլուն գերանդիները ձեռք առած՝ դիմում են
դաշտը՝ արմատից վեր տալու, կտրելու արդէն սերմ բուսած
բարձր խոտը: Քրտիւնք է որ թափում են մեր առույգ գիւ-
ղացիները, գետին պառկեցնելով թանձր խոտը և լսելի անե-
լով գերանդիների զնգզննուցը: Թէ տղամարդիկ ու թէ կա-
նայք փոցխով ու եղաններով չորացած խոտից կոյտ կոյտ
դէզեր են բարձրացնում: Ուրախ երգեր են որ լսւում են
այդ ժամանակ դաշտի ամէն ծալերից: Մանուկները մըտ-
նում են դէզերի մէջ ու զանազան խաղերով խնդում ուրա-
խանում: Մի լուծ եզը հազիւ է կարողանում խոտով բեռ-
նաւորած սալը գիւղը հասցնել:

Խոտահարին շուտով հետևում է հունձը: Բազմաթիւ
հատիկներով ծանրացած, գեղնած հատիկներ կուացել են գետ-
նին: Եթէ այդպէս թողնեն դաշտումը, հատիկները գետին
կը թափուեն կը փչանան: Այս պատճառով գիւղացիները
ցած են դնում գերանդիները և ձեռք են առնում կեռա-
ծայր մանգաղները: Մանգաղների հզօր հարուածների տակ
թաւալւում են արտերում հատուկացած զարու հատիկերը:

Շուտով հասնում է ցորենը: Ուրախալի է նայել՝ ինչ-
պէս հնձուորների կարգաւորուած խմբերը մտնելով ոսկեզօծ
արտի այս ու այն կողմից՝ կաշուէ զոգնոցներ կապած, քաղց-
րաձայն երգեր բարձրացնելով՝ սկսում են անխոնջ անդադ-
րում հնձել ոսկեշող կենսատու հատիկերը: Բոլորովին հակա-
ռակն է տեսնում մարդ մի քանի շաբաթից յետոյ. — ոսկե-
գոյն հատիկերի տեղը լոկ կտրած հատիկերի ծղօտներն են ե-
րևում ցցուած:

Ամենից առաջ հնձուորը հաւաքում է բուսն մէջ ցո-
րենի ճանկերը, յետոյ իջեցնում մանգաղի հարուածը: Մի

քանի հասկ միասին ասում է կուտակ. տասը կուտակ ամուր կապած կազմում են մի խուրճ. իսկ տասնաւոր խուրճերը միասին ժողոված ասում է փանջակ, որ կոյտ կոյտ դիզուած են լինում արտի մէջ:

Կէսօրին, երբ այրող արևը երկնքի մէջտեղն է հասնում, քրտնքի մէջ ողողուած հնձուորները ծանր աշխատանքից լետոյ շտապում են դէզերի մօտ շինած չարդախը՝ այնտեղ սիրտ հովացնող սառը մածուէն ու թանը ախորժանքով ուտելու: Իսկ երեկոյեան վերջալուսին, ուրախ երգերի ձայներով լուռած օդը թնդացնելով, մանգաղները ուսներին՝ տուն են վերադառնում:

Հունձը վերջացնելուց լետոյ գիւղացիները հնձած խուրճերը դիզում են կալապանի մօտ՝ կալսելու համար: Դրա համար առաջուց կալը քաղհանում են, երթով փոքրիկ առուակներով ջրում, հաւասարեցնում՝ աւելի հեշտ կալսելու համար: Առաւօտեան արշալուսին, ամէն օր, մինչև բոլորովին վերջացնելը, խուրճերը ցրում են մաքրած կալերում: Յետոյ ձիեր, եզներ կամ գոմէշներ լծած՝ համարեա ամբողջ օրը շարունակ չարչարում են մի հաշանի վրայ, միայն կէսօրին ու երեկոյին հանգստանում են, անասուններին ջրում: Կալերի վրայ անդադար լուռւմ են գիւղացիների առաւելը կամ հորովելը, դրանց հետ միասին տակը գամած կամ քրած կամների չիկչիկոցը, որոնց վրայ մեծ ու փոքր, տղայ ու աղջիկ նստած կամ կանգնած՝ քշում են գրաստներին:

Հաշանը մի քանի անգամ պրանում շուր են տալիս, եղանում են, որ աւելի լաւ կալսուի: Մղանով մղում են, կալաւով սրբում, կալի երկու ծայրում լեռնանման թեղ են դնում: Խնչ տեսնելու բան է, ինչպէս աշխատասէր, տոկուն գեղջուկները թեղի վրայ բարձրացած՝ հինգմատանի հորսելիով երեկոներին կամ լուսնկայ գիշերները հով ու զով

թեղը քամում են, ցորենը յարդից ջոկում, ընտրում: Ծանր ցորենը թափում, ամբարում են կալի կենդրոնում, ապա լաւ մաքրելուց լետոյ լցնում են հորերն ու շտեմարանները. իսկ թեթեւ յարդը մղում են ու լցնում կալի մօտ գտնուած մարաքը:

Ահա թէ որքան աշխատանք է թափում այն հացի վրայ, որ մենք ամէն օր ուտում ենք, և որով սնւում ապրում է ամբողջ աշխարհը, մարդկային ազգը:

Գ. ԲԱԼԱՍԵԱՆՅ.

52. Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ծ.

Ո՛հ երկրագործ, երկրագործ,

Քանի՜ սիրուն է քո գործ.—

Սրբւր չելած՝ մաճն է քո ձեռքիդ,

Եօթ զոյգ գոմէշներ լրծած գութանիդ.

Ծրբում ես պատուում դու կոշտ ու խոպան,

Լեռներ ու ձորեր, անդ ու անդաստան:

Յանում ես ցորեն, կորեկ ու գարի,

Բամբակ ու բրբինձ ամենայն տարի.

Ծրբում են ծաղկում ճակտիդ քրքրինքով

Քո վարած դաշտեր, որ լի էր փրշով:

Անցնում է դարուն, ոսկեզօծ հասկեր

Լըցնում ծածկում են քո սիրուն արտեր:

Հասնում է ամառ, մանգաղը ձեռքիդ

Հընձում ես հընձում, խուրճեր կապտում:

Խուրճերը բարդ բարդ սալով ու ձիով

Փրշում ու բերում կալը հասցընում:

Կալում կալում ես, թեղում ու քամում,

Մաքուր ցորենը քո տունը կըրում,
Իսկ չոր դարմանը անասնոց համար
Ձրմեռուան պաշար՝ մարաքը լըցնում:
Եւ երբ փըչում է դառնաշունչ ձմեռ,
Նըստած խըճիթում՝ քո խոփն ես սըրում:
Սարքում, պատրաստում արօր ու գոլթան,
Եւ գարնան գալուն նորից ըսպասում:

Կ. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ.

Լ.—ա.—Երկրագործ, հողագործ, ատաղձագործ, ձեռագործ, ժամագործ, ածխագործ, բարեգործ:

բ.—Կապել—կապտեղ, թռչել—թռչկոտել. —կոտրել—կոտրտել, կտրել—կտրտել, փշրել—փշրտել, նստել—նստոտել:

Երբ ուսուցիչը նստեց, աշակերտներն էլ նստոտեցին:

53. Կ Ա Լ Ո Յ Ը

Ձառամեալ ծերերից սկսած մինչև երեք չար տարեկան երեխան կալերի մէջ գործում են: Մէկը կամն է քշում, միւսը կալը շուր տալիս, երրորդը ծեծուած օրանը եղում եղանում, չորրորդը թեղ անում: Սա մաղում է, նա ծանծը քարմաղում:

Յանկարծ ամպերը թխպեցին: Գիւղացին ամէն բան թողած՝ շտապում է միայն կալը ժողովել և իր դառը քրտինքով ձեռք բերած հացահատիկները պահել սրտոսպարել անձրեկից: Դադարում է անձրեւը: Մի քանի ժամից կամ մի երկու օրից չորանում է գետինը և կալերը նորից փուռում են. ըոպեական հանգստութիւնը չքանում է: Ամենքը՝ թէ մեծ և թէ փոքր, նորից ձեռք են առնում ընդհատուած գոր-

ծը: Մոր եռանդ, նոր աշխարհ է ընկնում ամենքի սիրտը. գործունէութիւնը աիրում է կալերում:

Յ. ԳԵՂԱՄԵԱՆ.

Լ.—ա.—Հայրս օրական երկու ուրբի է ստանում. եղբայրս՝ շաբաթական հինգ ուրբի:

բ.—Քոյրս մի տարեկան է. եղբայրս երկու ամսական:

գ.—Մոր շոր, նոր գիրք.—Նոր հասկացայ, նոր գրեցի.—Նորից կարգացի, նորից արտագրեցի:

54. Կ Ա Լ Ի Ե Ր Գ.

Ե՛ղը ջան, կալ արա, կալիդ ման արա,

Հասկերը փըշրիր, ցորեն դուրս արա,

Հաշանը տրորի՛ր, լաւ դարման արա:

Ես ու դու մին ենք, իրար եղբայր ենք,

Մինչև երեկոյ իրար հետ տանջուենք.

Ես երեկոյեան կալը կը թեղեմ,

Դէպի կանաչ խոտ քեզ բաց կը թողեմ.

Լուսնակ գիշերին թեղը կը քամեմ,

Դարմանից ցորենը մեղմով կը ջոկեմ.

Դարմանը մղանով մարաքը կ'աճեմ,

Ցորենը ջուալով ամբարը լըցնեմ.

Երբ որ ձրմեռը կը գայ, կը մըրսենք,

Դուք դարման կ'ուտեք, մենք ցորնով կ'ապրենք.

Ե՛ղը ջան, կալ արա,

Կալիդ ման արա...

Ե՛ղը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,

Իմ թև ու թիկունք, դու իմ տան դուռն ես.

Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենայ,

Կալ էլ չեմ կալի, ցորեն ըստանալ,
 Փողի պարտք ունիմ՝ ցորեն եմ տալիս,
 Տան կարիքները ցորնով եմ հոգում,
 Տէրտէրի հարկը ցորեն վրճարում.
 Աղքատ անճարին ցորեն եմ բաշխում,
 Աշըղի, որբի՝ ցորնից մաս հանում.
 Խօսքով, ցորենը մեր բոլոր լոյսն է,
 Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.
 Ման տուր, իմ եղբ,
 Աւրի քո վեղը...

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՅ.

Ի. ա. — Պահող, երգող, գրող, նկարող:
 բ. — (Պահիչ) երգիչ, գրիչ, նկարիչ. քարոզիչ, ու-
 սուցիչ, Լուսաւորիչ:

55. ԲԱՐԵԿԻՐԹ ՀԱՅ ԱՂԱԿ.

Վարդի պէս ծաղկել, մանիշակի պէս մեծացել էր: Դեռ
 նրա ոտքը քարի չէր դիպել. դեռ մատը մէկ փուշ չէր մտել:
 Նրա ընկեր աղջկերքը դռներին ու կտուրներին էին ման
 գալիս. իսկ նա ծունկը մօր ծնկանը կպցրած, կամ կար էր
 անում, կամ քարգահ. կամ իրանց տանն ու դռանն էր նա-
 յում, կամ իրանց տաւարին: Թռչունը գլխի վրայովը թռչե-
 լիս՝ կարմրատակած, շունչը կտրած, լեղապատառ տուն էր
 ընկնում, որ իր ստուերն անգամ մէկ ոքմին չտեսնի: Մօր
 մէկ մատուցը փուշ եղած ժամանակը կամ մէկ տեղը ցաւե-
 լիս, ուզում էր՝ հոգին հանի, իրան տալ. էլ քար, էլ խոտ
 չէր մնում, որ նա վրան չչոքէր ու Աստծու ողորմութիւնը
 չխնդրէր: Աղքատ տեսնելիս՝ բերանի պատառը հանում, ի-
 րան էր տալիս, որ նրան օրհնի, նրանց արեւշատութիւն

մաղթի: Այգին էլ այն ժամանակն էր գնում, որ մութը գե-
 տինն առած, ոտքը քաշուած, խաղաղուած է ըլինում: Կար-
 ծես ծաղկներն էլ նրա ոտնաձայնը լսելիս ուրախանում,
 ցնծում, բացում, փչում էին: Թռչուններն էլ նրա երեսը
 տեսնելիս՝ համարեա, նոր հոգի էին ստանում, գլխները թւը-
 ների տակիցը բարձրացնում, ճիւղում, ճչում, ծլվլում, թւե-
 րին խփում, ծափ էին տալիս:

Խ. ԱՐՈՎԵԱՆՅ.

Ի.— Մարդու գլուխ, սարի գլուխ, գաւազանի գլուխ,
 քորոցի գլուխ, փլաւի գլուխ:

Մի գլուխ շաքար, հարկւր գլուխ ոչխար, հինգ գլուխ
 սոխ. — գրքի առաջին գլուխը. — գլուխ վարպետ, գլուխ գինի:

Քաղաքագլուխ, պարագլուխ, տարեգլուխ, ամսագլուխ,
 դրամագլուխ: — Կաթողիկոսը մեր հոգեւոր գլուխն է:

Այնքան պէտք է աշխատենք, որ այս գործը գլուխ
 հանենք (լաւ վերջացենք): — Ոմանք գլուխ բարձրացրին
 (ընդդիմացան) այս կարգադրութեան դէմ:

56. ԲՐՈՒՏՆ ՈՒ ԵՐԿՐԱԳՈՐԾԸ.

Մի մարդ ունէր իր տանը՝ երկու աղջիկ անոնման. մէ-
 կը միւսից աւելի՝ իրանց մօրը սիրելի: Երկուսն էլ հրնա-
 զանգ՝ երեսներին համեստ քօղ, չունէր նրանցից մի գան-
 գատ՝ ոչ հարեան, ոչ ծընող: Աւելը մէկի միշտ ձեռքին՝
 կուժը միւսի միշտ ուսին. երկուսն էլ նրմանին՝ աշխատա-
 սէր մեղուին: Երբ որ նրանք մեծացան՝ երկուսն էլ հարս-
 նացան. մէկը գընաց բըրուտի՝ մինը երկիր գործողի: Ամէն
 մէկի իր ալը՝ տարաւ հարսին իր գիւղը. և իրարից քիչ
 հեռու՝ ապրում էին զերթ մեղու:

Շատ ժամանակ անց կացաւ և ոչ մէկից լուր չեկաւ.
 կարծես հայր մայր մոռացան՝ երբ նրանցից հեռացան: Մի

օր տըրտմած նըրանց մայր՝ մարդուն ասեց. «Դու ես հայր. գընա՛ ու տես՛ ինչ դառան՝ մեր աղջկերքն ու փեսան»։ Ճամբայ ընկաւ նոյն օրը՝ մարդը փայտը իր ձեռքին՝ խկ խեղճ կընոջ աչքերը՝ մընաց մարդու միշտ ճամբին։

Շատ չըտեց, յետ եկաւ, և իր կընոջ նա ասաց. «Լաւ քաղտ մեր դուռը եկաւ՝ լաւ տեղ տըւինք մեր աղջկանց։ Մեր այն բըրուտ խեղճ փեսան՝ օրուան հացի կարօտն այն՝ հինգ վեց կաւէ մեծ աման՝ շինել գըրել էր դըռան։ Եւ երկընքի բացուելուն՝ արևի էր ըսպասում. որ իր աման չորանայր՝ տանէր ծախէր հացի տար։ «Դու էլ, ասեց աղջիկըս՝ խնդրիր, Աստուած արև տայ. թէ ոչ, եթէ անձրևեց՝ մեր ամաններ կը փչանայ»։

Աղօթք արի՛ ու ճամբայ՝ մի և նոյն օր ես ընկայ. և շուտ մօտի գիւղ հասայ՝ ու միւս փեսիս տուն մըտայ։ Տեսայ, տըխուր նստած էր՝ աղջիկըս էլ լալիս էր. հարցրի, պատճառն ինչ էր, ինչ էր նըրանց պատահել։— Եհ, ինչ անեմ, ինչ ասեմ՝ ասեց լալով մեր փեսան. չըլնէր իմ սերմ, ոչ իմ արտ՝ երբ որ չուներք մենք մի բաղտ։ Այս մէկ ամիս է, ահա, արտըս վարել ցանել ՚ի. ասում եմ, այս է հիմա՝ երկինք ամպ է, կ'անձրևի։ Բայց ամպերը քարացած՝ անձրևները ուշացան. և սերմերը նոր ծըլած՝ քիչ է մընում չորանան։ Եթէ մի երկու օր էլ՝ անձրև չը գայ, չը ջըրի՝ հոգը գլխիս է եկել՝ քաղցած մեռնենք մենք պիտի։ Նըրա համար Աստուծոյ՝ միշտ անձրև ենք մենք խընդրում՝ իր ողորմած ձեռքերից՝ մի կըտոր հացի սպասում։

Լացեց աղջիկս, ինձ ասեց՝ «Դու էլ խընդրիր որ Աստուած՝ մեզ շուտ անձրև ուղարկի՝ մեր խեղճ տունը չը քանդի»։ Աղօթք արի, դուրս եկայ՝ ճամբին որքան շուր եկայ՝ որքան մըրքումըս ման եկայ՝ ես այս խելքը չը գըտայ. թէ որ փեսին մեր պիտի՝ Աստուած աղօթքին լըսի՝ որ աղջըկաս տուն քանդի, որ միւսի տունը շինի»։

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ.

I.—Մայր, մայր (ծառ). մայր ցամաք, Մայր Հայաստան, Մայր Աթոռ (Ս. Եջմիածին), Մայր Արաքս, մայր քաղաք, Մայր Եկեղեցի (Ս. Եջմիածին), մայր գումար.—մայր մտնել, մայր ձգել (կոճակ)։

Ն ո յ ն ա ն ի շ.—Բաղտ—բախտ, բանտ—բանդ, բամբակ—բամպակ, թանկ—թանգ, ժանկ—ժանգ, թոշակ—թօշակ, ճիշդ—ճիշտ, գունդ—գունտ, խեղդել—խեղտել, սեպհական—սեփական, օրօրոց—որորոց, ամառանոց—ամարանոց, աժխոյժ—աշխոյժ, աստիճան—աշտիճան, կաթալ—կատասալ, ագաղաղ—աքաղաղ։

Հ ա կ ա ն ի շ.—Հարկ—յարկ, հոտ—հօտ, համր—լամր, հարթ—յարդ, որդ—որթ, սէր—սեր, ուղտ—ուխտ, աղտ—ախտ, թըջել—թռչել, կռուկ—կրուկ, վարել—վառել։

II.—Երեխան կատուի հետ խաղում է։—Նա յետ գնաց տուն։—Վատ ընկերոջ հետ մի խաղա. լաւ ընկերից յետ մի մնայ։

57. ՉԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Հայ գիւղացին ձկների բոլոր տեսակներն էլ դործ է ածում ինչպէս թաժայ թաժայ, այնպէս էլ աղած, աղ դրած։ Աղի մէջ աւելի լաւանում է իշխանը. բայց աշտարակցին նախապատում է կողակը, որի գլուխը աւելի յարգի է։ Աղ դրած ձուկը աւելի յարմարում է հաճարէ փլաւի հետ։ Համարեա թէ բոլոր ձկները կարելի է արևի դէմ չորացնել։

Բացի նըրանից որ ձկները խաշում են ու խորովում, նըրանցից պատրաստում են նոյնպէս համեղ խաշու՝ համեմներով ու հաւկիթով, պատրաստում են քուֆթա, որ ծեծած մսի գնդակ է։

Խելօք տանտիկիները իրանց տարեկան վառելու ձէթը հանում են ձկնից. նրա փորոտիքը հաւաքում են մի ամանի մէջ, վրան մի քիչ ջուր են ածում և գնում են թոնրի վրայ. դուրս տուած իւղը ժողովում են ու վառում։

Երբեմն, որսի ժամանակ, ձկնորսին հանդիպում է մի հազուագիւտ ձուկ, որին ոսկեծուկ կամ ձկան թագաւոր են ասում: Այդ ձուկը ոսկեծուկ կամ ձկան թագաւոր կոչուելու բոլոր արժանաւորութիւններն ունի: Նրա փայլը խիստ դեղին է, և արևի ճառագայթների տակը անկարելի է լինում նայել նրա վրայ: Երբ ձկնորսին հանդիպում է ոսկեծուկը, երեք անգամ համբուրում է նրան ու բաց է թողնում ջրի մէջ, երկար ժամանակ նրա ետևից ապշած նայելով: Ոսկե ձկան մասին շատ առասպելական հրաշքներ են պատմում. և այդ է պատճառը, որ ձկնորսը նրան երկիւղածութեամբ համբուրում է ու բաց թողնում:

ԵՂ... Պ...ԵԱՆՑ.

58. ՀԱՅԹՈՒՆ ՄԻՏՈՆ.

Աղամայ—մութը նոր էր կոխել: Ագաղաղը իր ծուղրուղուն գեռ առաջին անգամն էր կանչում: Հացթուխ Մրտոն տեղիցը վեր կացաւ, մի երկու ավ ջուր երեսը սրսկեց, սըրբուեցաւ ու խաչակնքուեցաւ: Յետոյ ձիթի կանթեղը պատից վեր առաւ և «Հայր մեր» ասելով փռնատնից ցած իջաւ: Թւերը վեր քաշեց Մրտոն, ալիւրի տոպրակը բաց արեց, մաղը պատիցը վեր բերեց և սկսեց ալիւրը մաղել. մաղել և իր սովորական երգը երգել—

Մաղը պատէն իջուցի, իջուցի,

Ալիւր, եկ մաղեմ քեզի, ես քեզի.

Թւբւր, փւթւր, Թւբւր, փւթւր:

Մշու դաշտի ցորնի հատ—ոսկեհատ,

Ծընած, սընած Բիւրակնի ջուրը առատ.

Թւբւր, փւթւր, Թւբւր, փւթւր:

Գոչգոչանի *) սառը ջրովը շաղուեմ,

Տաշտիդ վերայ ես զիմ մուշտակ կը ձրգեմ.

Օխխայ, օխխայ, փափուկ, փափուկ:

Խըմորը կ'ածի. հայ հոյ, տաշտ կը կոտրի,

Ծովը կ'ելնի չիւր, հայ հոյ, ավ կը պատուի.

Փըշ—Փըշ, Փըշ—Փըշ, Փըշ—Փըշ:

Թիակ, մըրոտ թիակներըդ հասուր,

Տաս մատներէդ առագաստներ կախ տուր.

Շափ—շըրփ, շափ—շըրփ, շափ—շըրփ:

Բասենի մեծ մեծ գերաններ կը չլքչան,

Սոմին, բուլուծ **) զիմ փրուկ մէջ պար կու գան.

Բըժ—դըժ, փըս—տըս, Փըշ—Փըշ շա:

Կարմիր թըշիկ, սիրուն տըղայ, հայ, հայ,

Յիսուն փարի հացը արի ինձմէն առ.

Ա՛ռ, ա՛ռ, բայմ, ինձմէն առ:

6. ԳԵՂԱՄԵԱՆՑ.

I.—Փռնատուն, վարժատուն, դասատուն, աղթատուն, սեղանատուն, հացատուն, դեղատուն գինեատուն, մաքսատուն:

59. ՃԱՇԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ.

Հաղիւ մեր հիւրերը իրար բոթբոթելով, համեցէք անելով, կոնից, թւից քաշելով՝ տուն ընկան: Օրհնեալ է Աստուած, փառք յաւիտեանս չամիչ: Սրտներն ընկաւ տեղը, մատներն ընկաւ եղը, ու կուգը կուգ անելով՝ մտան տաքտեղը:

Ա՛րի հիմա դոմի դռանը կանգնենք ու նայենք մեր քեթիսուղաներին: Բայց ինչ անես, որ չեն թողում: Ո՛րէան

*) Մի ջրվէժ է Էրզրումի մօտ: **) Հացի տեսակներ են:

էլ օտար ու ալլաղգի լինես, առանց քեզ բերանները սլատառ չեն դնի. չգնաս՝ կը խռովեն ու ամէն մարդ իր տունը կը գնայ: Տարով մէջըներումը մնաս, քեզ տնէտուն ման կ'ածեն, սլատիւ կը տան: Մտնենք գոմը. տեսնենք համը. ուտենք փլաւը:

Մեր երկրումը առաջ ձեռքները լուանում, սրբում են (այն էլ նստած տեղն է ծառան՝ սրբիչն ուսին, ջրամանն ու կոնքը ձեռքին՝ ամէն մէկի առաջը խոնարհում կամ չոքում, ծեռքին ջուր ածում.) լետոյ են սփռոցը քաշում, աղամանը, պանրամանը, ձկնամանը մէջտեղը շարում, ապա հացը քաշում, ամենքի առաջը կիտում. երբեմն կանաչի էլ է լինում: Դգալի, սլատառքաղի, դանակի ոտքը դեռ մեր աշխարհը չէ մտել: Մատներն եղած. տեղը ի՞նչ հարկաւոր է դանակ, պատառաքաղ: Կերակուրներն էլ մէկ սինիով ներս են բերում ու մէկ սպասաւոր (նոքար) փեշն ու թևերը վեր քաշած, ուսին գցած, կուզրկուզ անելով՝ երկուսի առաջին մէկ աման է դնում: Հացից լետոյ էլի ջրով որ ձեռք ու բերան չողողեն, չլուանան, անկարելի է: Դգալ վերցնել սեղանի վրայ, կամ գլուխ տալ՝ օրէնք չէ: Երկրի ծէսն այսպէս է:

Խ. ԱՐՈՎԵԱՆՑ.

Հ ա կ ա ն ի շ, — Ամէն հիւրի առաջը դրուած է իր սպասար: «Տիրացու, սպասներդ մաքրիր, դիր սեղանի վրայ»: Այսօր մենք լաւ սպաս ենք եփել: Հայրը բարկանալով որդու վրայ, ասեց. «Սպասիր. այս գիշեր ես քո սպասը կ'եփեմ»: — Մեր սպասաւորը շատ հաւատարիմ մարդ է:

60. Պ Ա Պ Ն Ո Ւ Թ Ո Ռ Ն Ե Ր Ը.

(Աստղաբանութիւն)

— Պատի ջան, այն ի՞նչ աստղ է, որ քեռանց կալի գըլ-

խին կանգնած է ու ամենից փայլունն է, հարցնում է պապի ծոցին քնող թռու:

— Այն Քարաւան-Ղուանն է:

— Իբր թէ թնչ:

— Այն որ՝ քարաւանը դաշտումն է եղած լինում, ամպը պատած գիշեր է լինում, յանկարծ երկինքը պարզում է, քարաւան-բաշին (քարաւանապետը) կարծում է թէ Լուս-Աստղն է, քարաւանն շտապեցնում է, վեր է կացնում ու ճանապարհ ընկնում:

— Յետոյ:

— Յետոյ՝ շատ ահ ու զարհուրելի տեղով պէտք է անց կենային. գնում են գնում, լոյսը չի բացւում. յանկարծ մի խոր ձորի մէջ գողերը դրանց առաջը կտրում են ու բոլորին հրում, թափում են ձորը: Աստղը սխալեցրեց, քարաւանը կոտրել տուեց, անունը մնաց Քարաւան-Ղուան:

— Իսկ այն ի՞նչ աստղ է, որի պոչը, կարծես, տատիս ճախարակի իլիկը լինի:

— Այն Ղոյրուղն է: Աման, գանձուկս, զգուշացնում է պապը, էլ այսուհետեւ չլողանաս. Ղոյրուղն իր պոչով քեզ այնպէս կը շամփրի, որ պոչը մէջքիցդ կը մտնի, փորիցդ դուրս կը գայ. նա գիժ աստղ է, լողացողի թշնամի է:

— Հապա մինչև հիմա ուր էր, չէր երևում:

— Ղոյրուղը խաղողի ժամանակն է դուրս գալիս. մինչև նա դուրս չգայ, խաղողը չի հասնի: Քեզ եմ ասում, հոգիս, էլ չլողանաս:

— Շատ լաւ, շատ լաւ: Այնպէս չէ, Յակօ, էլ չենք լողանալ. պապն ասում է, երբ Ղոյրուղը դուրս գայ, էլ չի կարելի լողանալ:

Յակօն տատի ծոցիցն էր եկել դաս լսելու:

— Թող պապին ապահովացնենք, պատմել տանք, լետոյ մենք մեր բանը գիտենք, փսփսում է նա ընկերոջ ականջին:

— Դեհ, որ պապն ասում է՝ միք լողանայ, մենք էլ չենք

լողանայ, հօ չենք մեռնի, եկող տարի ամառը կը գայ, նոր կը լողանանք. լաւ չեմ ասո՞ւմ, պ՛սպի:

— Շատ լաւ, շատ լաւ, երբ այգայէս խելօք տղերք էք, եկէք մէկ պաչեմ:

— Երբ որ այգայէս է, աստ տեսնենք՝ այն ի՞նչ խորտ բորտ տեղ է երկնքումը, կարծես, մեր վերին արտի քարքարոտ ճանապարհը լինի, մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն ցրուած են:

— Այն մեր ուլերն են կրծոտեր:

— Ո՞րտեղից բարձրացան:

— Մի ձմեռ շատ ձիւն էր եկել, խոտ չկար որ ոչխարն արածէր. մեր ուլերը ձիւնի վրայով բարձրացան, կրծոտեցին:

— Հապա դու երեկ ասում էիր՝ Գարմանագողի ճանապարհն է, մէջ ընկաւ միւսը:

— Եթէ գիտէք, էլ ինչո՞ւ էք հոգիս հանում, թողէք քնեմ, ասեց պապը և ուզում էր երեսը միւս կողմը շրջել. բայց ճարպիկ սատանաներից մէկը իսկոյն լոք տուեց, անցաւ պապի կրծքի վրայից, միւս կողմը պառկեց և իր հաճոյախօսութիւնները շարունակեց:

— Պապի ջան, պապի, միայն այս մէկը, միայն այս մէկը պատմիր, էլ գլուխդ չենք ցաւացնի:

— Հա, Գարմանագողի ճանապարհն է, ճարահատեալ սկսեց պապը: Մի գիշեր բլբլան Բէլը գնացել է մեր Հայկ պապի մարաքիցը մի թոռ լիքը դարման գողացել, շալակն առել ու փախել: Զանս քեզ մատաղ, Հայկ պապի, շներին քիս է տուել ետեւիցը, ինքն էլ մի բարձր բլբի գլխին կանգնել ու նայում է: Բէլը դարմանը շաղ տալով փախչում էր: Մեր խելօք պապը հէնց որ տեսաւ թէ շները չկարողացան հասնել և գող Բէլը գիմացի սարի ետեւն է ուզում անցնել ու ազատուել, այն ըոպէին դադուկիսանոց, կռանս պէս հաստ նետը դէմ գցեց աղեղի լարին, աչքեց ու լարը ձգեց: Նետը սըլ...լ...լ, գնաց, այդ գող ու աւազակին ծակեց ու վզա-

լով անց կացաւ հինգ օրուայ՝ ճանապարհ հեռու վայր ընկաւ:

— Յետոյ թնչ է անում Բէլը:

— Ի՞նչ պէտք է անէր, դարմանի պարկը մէջքիցը գլորուեց, մնացածն էլ այնտեղ շաղ անցաւ, երկնքի երեսը բռնեց:

— Ի՞նքը:

— Ինքն էլ թաւալուեց, սարի գլխից գլորուեց, ձորն ընկաւ:

— Հապա տատն ասում էր՝ երբ ուլերը կրծեցին, երկինքը պատառոտուեց, ջուրը թափուեց, ոչխարի հօտը խեղդուեց...

— Այո, նա էլ էր ուղիղ ասում:

— Հապա թնչպէս ջրի առաջն առան:

— Աստուած կեանք տայ համետագործ (փալան կարող) Նոյ պապին:

— Ի՞նչ արեց:

— Համետը դէն ձգեց, բիղն առաւ, Մասիսի գլուխը բարձրացաւ ու երկնքի պատառոտուած տեղը պինդ կարեց. այ, տեսնո՞ւմ էք, այն մանր աստղերը բզի ճակած տեղերն են:

Պ. ՊԻՕՇԵԱՆՅԱՆ.

I.— Ոչխարների հօտ, այծերի հօրան, եղջերի անդեսայ, ձիերի ջոկ, խոզերի երամակ, շների ու գայլերի ոհմակ, թռչունների պար կամ երամ, ագռաւների ջուլի, կռունկների տարմ, ձկների վտառ, ծաղկների բոյլ, աստղերի հոյլ, խոտերի դէզ, լարդի շեղջ, ջրի շիղջ:

61. Ա Ս Տ Ղ Ե Ր.

— Հայրիկ, ան, ի՞նչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ի՞նչպէս սիրուն զարդարուած է ամ
Նա անհամար աստղերով:
Թէ ուղիղ է, որ ամէն մարդ
Մի աստղ ունի երկրնքում,
Ինչք՞ ապա բոլոր աստղեր
Միատեսակ չեն փայլում:
Ինչք՞ համար միայն տեղ տեղ
Վառւում են լոյս աստղեր,
Իսկ մեծ մասը այնպէս մանր են,
Ասես թէ են միայն կայծեր:
Ի՞նչ լաւ կլինէր, որ բոլորն էլ
Այնպէս պայծառ փայլէին,
Ինչպէս, ահա, տես այն աստղը,
Որ վառւում է մեր գլխին:
— Հա, իմ որդի, գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով՝
Նորան այդպէս զարդարել է
Աստուած կարող իր ձեռքով:
Ճշմարիտ է, ամէն մարդ էլ
Մի աստղ ունի երկրնքում.
Եւ քեզ կ'ասեմ՝ ինչի՞ ողջ էլ
Միատեսակ չեն փայլում:
Ինչպէս այստեղ, երկրի վերայ
Մարդիկ միմեանց չեն նման.
Խելքով, գործով, վարք ու բարքով
Են միմեանցից զանազան, —
Ահա այդպէս էլ երկրնքում
Բոլոր մարդկանց աստղերը

Հայելու պէս ցոյց են տալիս
Իրանց տիրոջ պատկերը:
Բայց մի կարծիւր, սրդեակ քաղցրիկ,
Որ այն վառ վառ աստղերը,
Որոնք իրանց պայծառ լուսով
Զարգարում են երկիրը, —
Հարուստներին են պատկանում
Կամ աշխարհիս մեծերին:
Ձէ, ոսկին, իշխանութիւնն
Այնտեղ ոչինչ չունին գին:
Շատ իշխան կայ, որի աստղը
Հազիւ հազ է պըսպըղում,
Աղքատ էլ կայ, որի աստղը
Գոհարի պէս է փայլում:
Ի՞նչ մարդ այստեղ զարդարուած է
Առաքինի գործերով,
Նորա աստղն էլ միշտ վառւում է
Գեղեցիկ, պայծառ լուսով:
— Հայրիկ, ան, տես՝ այն գեղեցիկ
Մեծ աստղը թռաւ իր տեղից,
Թռաւ ու հանգաւ և մի պայծառ
Գիծ թողեց իր ետեւից:
Ասա, հայրիկ. այն ո՞ւմ աստղն էր,
Ափսոս, ինչք՞ նա հանգաւ.
Տես՝ երկրնքի այն մի կողմը
Ի՞նչպէս յանկարծ մըլթնեցաւ:
— Այո, սրդեակ, հազար ափսոս,
Որ պակասեց երկրնքից
Այն վառ աստղը, որ գեղեցիկ
Լոյս էր տալիս վերեւից: —
Այս ըոպէիս մի ազնիւ մարդ
Աստծուն տըւեց իր հոգին,

Մի ազնիւ մարդ, որ միշտ անկեղծ
Ծառայել է իր ազգին:

Գ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅ.

62. ՓՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

«Փողն ի՞նչ է, ասում է հայ գիւղացին. այսօր գրպանդ
լցնես, վաղը պէտք է մատդ լստես: Փողը ժանդ է, ձեռքի
աղտ է. այսօր կայ. վաղը՝ Աստուծով մխիթարուես: Սար-
գարն էլ է մեր դուռը գալիս, փողատերն էլ: Օջախս լիքը
լինի, գինին կարասներով շարած, ամբարը՝ հացով լիքը, կը-
թան կովն ու գոմէշները, հորթ ու ձագը տակըներին՝ գո-
մումը սլահած, նոյն դին ախոռումը կապած, գութանը
դռանը լծած. մառանը մրգով, կախանով, տանձ ու խնձո-
րով խլիթխլիթալիս և մտնողին հոտը տեղնիտեղը բռնելիս լի-
նի. տանս լիւթիւն, որդիքս ողջ առողջ լինեն,—[Թող օրը
հագար մարդ մտնի, հագար մարդ դուրս գայ: Ի՞նչ վնաս:
Հացը Աստուծունն է, ես էլ հետը: Ո՛վ հասնի, թող ու-
տի: Որդիքս առողջ լինեն. ես սպրեմ: Ո՛վ ծոյլ է, թող նա՛
տրտմի: Իր տնկած ծառի տակը քնելը, իր մեծացրած պղտ-
ղի ուտելը՝ աշխարհք արժէ: Նոր չեմ հագնի, հին կը հագ-
նեմ. ձեռքս ո՛վ է բռնում. ո՛վ է գլուխս ջարդում. ես՝ չեմ
իմ գլխի տէրը:

Քաղաք մտնելիս այնպէս է թւում, որ կարծես աշխարհք
սով է ընկել: Հացն ու ջուրն էլ որ փողով լինեն ծախելիս
ու առնելիս՝ էլ ունի գուրդը՝ գնաս, ունի ձեռքդ պարզեո:
Շատ անգամ հարուստ մարդն իր առաջնը կիտած ռուբլիքը
այնպէս վախենալով է համարում, որ՝ կարծես, հոգին հետը
դուրս է գալիս. այնպէս է կարծում, թէ իր գանձը կը թե-
ւաւորուի ու առաջնից կը թռչի: Մարդ ինքը պէտք է լա-

ւութիւն անի, որ Աստուած էլ նրա գործը յաջողի: Ի՛նչ Աս-
տուած օրհնի մեր հողն ու մեր ջուրը: Ի՛նչ եթէ հոգի,
հաւատ կայ՝ մեր մէջն է»:

Խ. ԱՐՈՎԵԱՆՅ.

Ի. ա. — Կովի հորթ, ձիու քուռակ կամ մորուկ, ոչխարի
գառը, խոզի խոզուկ, այծի ուլ, շան լակոտ կամ կորնակ,
արջի քոթոթ, առիւծի կորիւն, էջի սաւնակ, ուղտի կողո,
գայլի գայլակորիւն, եղնիկի եղնորթ, կատուի ձագ, հաւի
ճուտ կամ վառեկ:

63. ԳԻՒՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅՈՒՆ.

Դու քընում ես կակոնդ անկողնում,

Իսկ ես փափուկ՝ փափուկ խոտերում:

Դու քեզ տեսնում ես հայելու մէջ,

Իսկ ես ինձ՝ լքտակ լըճի մէջ:

Դու բնակում ես նեղ պատերում,

Իսկ ես՝ արձակ, ազատ դաշտում:

Քեզ շարժում է ամէն քամի,

Ես կանգնած եմ անշարժելի:

Քեզ ծառայում է քո սպասաւորը,

Ինձ՝ հաւատարիմ՝ իմ քաջ ջուրը:

Դու խրմում ես խառնած գինի,

Իսկ ես՝ վրձիտ ջուրն աղբիւրի:

Քո աչքը միշտ տեսնում խաւար,

Իմը պայծառ և լուսաւոր:

Նոյն անիշ. — Վճիտ, ականակիտ. ջինջ, լստակ, մաքուր:
Հա կանիշ. — Այս աղբիւրի ջուրը շատ համեղ է: — Ես
հաստատ աղբիւրից լսեցի, որ եղբայրս եկել է: — Մեր եկեղե-
ցին մեծ եկամուտի աղբիւրներ ունի:

64. ԳԻՒՂՆ ՈՒ ՔԱՂԱՔԸ

Երեք գիւղացի տղայ՝ իրանց առաջը աւանակներէ քաշ
րաւանը քշելով, զբաղուած էին հետեւեալ խօսակցութեամբ.

— Սարգիս, հարցրեց Կարապետը, դու քաղաքը տեսել
ես. այնտեղի գառները որտեղ են արածեցնում:

Սարգիսը, որ հասակով իր ընկերոջից մեծ էր, և մի
քանի տարի մնացել էր քաղաքում, պատասխանեց.

— Քաղաքացիները ոչխար չունեն, գառներ չեն պահում:

— Հապա նրանց տղաները թնջ են շինում, որ գառներ
չեն արածեցնում, կրկին հարցրեց Կարապետը:

— Կարգում են:

— Նրանց տէրտէրը ինչով է ծեծում, երբ դասը չեն
սովորում:

Նրանք տէրտէրից չեն դաս առնում, ուսումնարանումն
են սովորում:

— Ուսումնարանն թնջ է:

Սարգիսը, որ չգիտէր՝ ինչ պատասխան տար, ասեց.

— Ուսումնարանը ուսումնարան է, ... չգիտեմ:

Գրիգորը հարցրեց:

— Քաղաքի տղաները, ով գիտէ՝ ինչ լաւ տրեխներ ունին:

— Նրանք տրեխ չեն հագնում, կօշիկ են հագնում,

պատասխանեց Սարգիսը:

— Կօշիկն թնջ է:

— Կօշիկը ռսի տրեխն է:

— Այնտեղ մօշ կա՞յ, գլեռ կա՞յ, հարցրեց Կարապետը:

— Չկայ, ծմակը հեռու է քաղաքից:

— Հապա քաղաքի տղաները թնջ են ուտում:

Սարգիսը չգիտէր՝ ինչով գոհացներ իր ընկերների հե-
տաքրքրութիւնը: Նա կարճ կերպով նկարագրեց քաղաքի
կեանքը, որքան ինքը հասկանում էր. ասեց՝ թէ այնտեղ
մեծ տներ կան, շուկայ կայ, թէ եզան ու գոմէշի փոխա-

նակ ձի են լծում, սալլերը (կառքերը) բանեցնում են միայն
նստելու համար, և աւելացրեց թէ քաղաքացի տղաները
գիւղացի տղային ծաղրում են, և պատահած ժամանակ ծե-
ծում են:

Վերջին խօսքը զրգուեց Կարապետի բարկութիւնը, և
նա իր երկայն մահակը բարձրացնելով՝ սպառնացաւ.

— Տեսնում եմ մահակս, այնպէս կը հասցնեմ նրանց
բարակ մէջքին, որ «վայ, նանի» կանչեն:

Բ Ա Փ Ֆ Ի .

65. ԲԱՌԱԽԱՂ ԵՒ ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ:

Մի անգամ երեսուցի չափ մանուկներ, ութից մինչեւ
տասնուհինգ տարեկան, ժողովուել էին մի տան սլատի տակ,
միմեանց հրում էին և միմեանց վրայ ծիծաղում:

— Տօ, տղերք, եկէք քառախա՛ղ ասենք, ձայն տուեց
նրանցից մինը:

— Եկէք, եկէք, ձայն տուին միւսները:

Մէկը առաջարկեց. «Ասա՛ ցախաւելը գցեմ մարաք»:

Միւսը պատասխանեց. «Ուտես կովի կարագ»:

Յաջողակ և շուտ պատասխանի վրայ մանուկներն ուրա-
խացան և իբրեւ նշան գոհունակութեան, ամէն տեղից կըրկ-
նեցին պատասխան տուողին. «Հայ ջան, Հայ ջան»:

— Ասա՛ կոնք, առաջարկեց մի ուրիշը:

— Սէքիգ վերեւը յօնք, կրկնեց պատասխանը:

— Ասա՛ կանաչի:

— Գրողը քեզ կանչի:

— Հայ ջան, ձայն տուին շատերը, ծափ տուին ու ծի-
ծաղեցին:

Բառախաղը երեխաների համար կենդանի զբաղմունք

դարձաւ, այս պատճառով ամենքը սկսեցին կարգով առաջարկութիւններ անել և լուծել առաջարկածը:

— Ասա՛ մէկ:

— Երեսդ է շէկ, գլուխդ քաշեմ լեկ (մորթ):

— Ասա՛ երկու:

— Կերածդ է ձու:

— Ասա՛ երեք:

— Կողքդ քերենք:

— Ասա՛ չորս:

— Հաց կեր, զնա որս:

— Ասա՛ հինգ:

— Սչքդ մտնի քլինգ:

— Ասա՛ վեց:

— Մեծ նանը քեղ զրկեց, գլխիդ լաւ բամբեց, ծվկոցդ վեր արեց:

— Ասա՛ եօթը:

— Առնես հօրդ բօթը, բերանդ թիու կոթը:

— Հայ ասա՛ ութ:

— Ուտես մի կողով թուրթ:

— Ասա՛ իննը:

— Նորը տո՛ւր, առ հինը:

— Ասա՛ տասը:

— Դու ինքդ ես թարսը, ուտես թանկ-սպասը, վատ մարդ է ձեր հարսը, վկայ է սուրբ Մասը:

— Հայ ասա՛ հաց:

— Բերանդ բաց, վագիր ջրաղաց:

— Հայ ասա՛ բրինձ:

Այս առաջարկութեանը ոչ ոք իսկոյն պատասխան չգտաւ և ընդհանուր կարճ լուրթիւնից յետոյ առաջարկողը, ինչպէս պահանջում է կարգը, նորից կրկնեց. «Հայ ասա՛ բրինձ»:

— Մատաղ լինես ինձ, պատասխանեց մինը և ամենքը ուրախ ուրախ ծիծաղեցին:

— Հայ ասա՛ պանիր:

— Ոտքերդ հանիր, ճախարակը մանիր, ձեր տանը բանիր:

— Հայ ասա՛ երթանք ձեր տունը:

— Ուտենք մածունը, կրակ տանք տունը:

— Հայ ասա՛ հաց էր:

— Դռները բաց էր, աչքերդ թաց էր:

— Հայ ասա՛ ձիւն կայ:

— Տներումը սիւն կայ, ճնձղուկի բոյն կայ, աչքերին քուն կայ:

Այսպէս երկար ժամանակ մանուկները զուարճանում էին սուր առաջարկութիւններ անելով և պատասխաններ ստանալով: Բայց բառախաղը, որ սկզբումը սաստիկ զրաւել էր նրանց, փոքր առ փոքր թուլացաւ և մի լուպէսչափ ամենքը լուեցին, կարծես, ձանձրանալուց: Ընկերներից մէկի առաջարկութեամբ խաղի տեսակը փոխուեցաւ: Սկսուեցան շուտասեղուկները:

— Տղէք, ո՞վ կարող է ձեզնից շուտ շուտ ասել «Ձուկ գցեմ՝ ձուկ կուլ տամ, մուկ գցեմ՝ ձուկ կուլ տամ»: Շատերը սկսեցին կրկնել: Մանուկների կրկնոցը երկինք էր հասնում, մանաւանդ, երբ շուտ ասելու ժամանակ ձուկ կուլ տալու փոխանակ՝ մուկ էր կուլ տալիս ասողը:

Մէկն առաջարկեց կրկնել հետեւեալ խօսքը. «Ուլն ելաւ ուռի ծառը, ուլի ձեռով ուռ ոլորեց»:

Միւսն առաջարկեց. «Տէր Կարապետենց տանձի ծառին՝ երկու ծանր տանձ կայ ծէրին»:

Երրորդն ասեց. «Սեխովը թուչեմ՝ սեխ ուտեմ. ցեխովը թուչեմ՝ սեխ ուտեմ»:

66. ԱՇԸՂ ՂԱՐԻՐԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԸ.

Ձեզանից հարցանեմ, վարպետներ գոված,
Ի՞նչ գործիք է շարժող մարդկանց շարունակ.
Մի օրոցքում տասը եղբայր են պառկած,
Երբ օրօրես, նըրանք կ'անեն աղաղակ:

Այն թիւնք բան է, չունի մարմին, ունի ձայն,
Թէ բըռնելու լինես, դուրս կը գայ ունայն.
Ի՞նչ բան է, որ կեանք է մարդկանց ամենայն,
Ամէն մարդ կարող է գտնել անըստակ:

Ի՞նչ է՝ ունի երկու գլուխ, աչք՝ լիսուն,
Ձեռք՝ տասերկու, մատ՝ երեք հարիւր վաթսուն.
Չորս բերանով նա ապրում է աննըկուն,
Ամէն բերան լեզու ունի ջոկ տեսակ:

Այն թիւնք բան է՝ ջրրի մէջը թըրջուիլ չի,
Ի՞նչ առարկայ, հողում թաղես, փրտիլ չի.
Ի՞նչ քընող է, միսը կըտրես, զարթիլ չի.
Ղարիբիս մօտ այս բաներն են հասարակ:

(ԼՈՒԾՈՒՄԸ)

Ձեզի բացատրեմ, վարպետներ գոված,
Մուղիքըն է մարդկանց շարժող շարունակ.
Սազի վերայ տասը թելեր կան շարուած,
Երբ որ ածես՝ նոքա կ'անեն աղաղակ:

Այն՝ քամին է, չունի մարմին, ունի ձայն,
Թէ բըռնելու լինես՝ դուրս կը գայ ունայն.
Այն ջուրն է՝ կեանքը մարդկանց ամենայն,
Հարուստ, աղքատ գործ են ածում անըստակ:

Տարին երկու մեծ տօն և շաբաթ լիսուն,
Տասերկու ամիս, օր երեք հարիւր վաթսուն,
Չորս եղանակ նա ապրում է աննըկուն,

Ամէն եղանակն է ջոկ տեսակ, տեսակ:

Այն բազըն է, ջրրի մէջը թըրջուիլ չի,
Ոսկի թաղես հողի մէջը, փրտիլ չի.
Մեռած մարդու միսը կըտրես՝ զարթիլ չի,
Ղարիբիս մօտ այս հարցերն են հասարակ:

ԱՇԸՂ ԶԻՒՆԻ.

Ն ո յ ն ա ն ի 2. — Ստակ, դրամ:

67. Զ Ի Ր Ի Տ.

Ձատիկ կիւրակէ օրը, ճաշը որ թեքուեց, Աշտարակ
գիւղի ամուրի երիտասարդները գնացին հաւաքուեցան Կա-
ւահանքի դղումը՝ ջիրիտ խաղալու: Ո՛վ մի քիչ շնորհք ունի,
մեծ կռնումը ոյժ կայ, պէտք է բանեցնի. ձիաները թամբել
են, մի մի ջիրիտ ձեռքներին բռնել, չուխաների կամ կա-
պաների փեշերը գրպաններովը հանել, թւերը ուսներին կա-
պել, կարմիր զանաւուզի դոշուղը զառ բաւթով կարած կա-
պել կըծքերին՝ ձիու վրայ այնպէս սարքով նստել են, որ
կ'ասես ամէն մէկը մի խանի որդի լինի. մենակ մի բանի հոգս
են քաշում. այն է՝ թէ ո՞վ պէտք է քաջ դուրս գայ:

Սօսը այնպիսի օրը որ իր շնորհքը ցոյց չտայ, էլ ինչէն
է պէտք. վաղուց պատրաստուել, շինուել, ջիրիտը ձեռքին
ձիու վրայ նստած էր: Փողն ու թմբուկը նշան տուեց ջի-
րիտին (ձիարշաւի եղանակը) ածելու և Սօսը ընկաւ այս հրա-
պարակի մէջը. երկու անգամ ձին այս ու այն կողմը քշեց,
տաքացրեց ու ջիրիտը ձեռքին չարխի պէս պտույտ տալով
ընկաւ իր թշնամիներից մէկի հետ, ու իր ծիրանի փայտից
չարխաքաշ ջիրիտը որ նետի պէս չգցե՛ց՝ նրա մէջքումը այն-
պէս կայրեց, որ այն յաղթանգամ երիտասարդը շշմեց ու
գլխի վրայ գետնին փռուեց. ձին էլ փախաւ:

Սօսը, ուղիղ է, պողպատի պէս պինդ սիրտ ունէր, բայց գուլթ էլ ունէր. հէնց որ տեսաւ երիտասարդին գունաթափուած գետնին փռուած, ուրախանալու փոխանակ՝ իր արածը զղջաց: Նոյն րոպէին իջաւ ձիուցը, երիտասարդին գրկեց տալաւ կանանց մէջը, որ ջուր բերեն խմեցնեն, սիրտը կանգնի: Ամէն աչք էլ Սօսի վրայ մնաց. մայր ու մանուկ նրան էին նայում. բոլոր երիտասարդների խօսելու առարկան դարձաւ Սօսը: Կէս ժամից աւելի ձիու վրայ նստած՝ հրապարակի մէջ տեղը, ջրիտը երկինքը գցելով ու բռնելով կանգնել էր ու կանչում, որ իր ետեւիցը դան, գցեն. բայց ոչ ոք սիրտ չէր անում նրան մօտենալ, նրա հետ հրապարակ դուրս գալ:

Պ. ՊԵՕՇԵԱՆՑ.

Հ ա կ ա ն ի 2.—Փողահարը փչում է իր փողը, որ իրան փող տան:

68. ԶԻՐԻԴ ԳՅՈՂ ԱՂԱՍԻՆ.

Բուն-Բարեկենդանի օրերն էին: Արեգակն եկել՝ երկնքի մէջտեղը բռնել էր, օրուայ փուշը մի քիչ կոտորուել, տաքացել էր: Սար ու ձոր արծաթի պէս փայլում փայլում էին: Քանաքեռ գիւղում գիւղացիք մեծ ուրախութեան մէջ էին: Ո՛րը ձեռնաբռնուկ էին արել, պար գալիս, որը բոլորի շուրջ նստել զուարճանում էին, որը երգում էր, որը ձայն պահում: Այստեղ փողն էր փչում, այնտեղ ճալախտի էին խաղում, միւս տեղը ըմբիշներն էին մենամարտում:

Աղասին էլ՝ քէֆն արել պրծել՝ իր խումբը ետեւից գցած՝ եկաւ մէկ տասը ձիաւորով գիւղի միջովն անց կացաւ, որ գնաց կալերի գոմը, ջրաղացների մօտ՝ իր շնորհքը ցոյց տալ, ջրիգ խաղալ, որովհետեւ գիւղամիջումը այնպիսի հարթ

տեղ չկայ: Կարծես՝ մի թագաւորի որդի է գալիս: Զիւռ ականջը մտած՝ այնպէս էր քշում, կրակին տալիս՝ որ կարծես թեւաւոր թռչուն լինէր: Շատ անգամ ջրիգը հեռու տեղից շարտում, ձին չափ էր գցում, ու գետնիցը ծուլ լինելիս ձիու վրայից բռնում էր կրկին գցում: Շատ անգամ հէնց ուղիղ շարտում էր, ու կրակի պէս ետեւիցը հասնում բռնում, կրկին ծուլ անում: Գետնին վայր ընկած տեղիցն էլ՝ այնպէս էր թամբի միջիցը կռանում, բարձրացնում, որ ջրիգն առաջին դողում էր: Ընկերոջ վրայ էլ որ երբեմն երբեմն ջրիգ չէր գցում, այնպէս էր նշանում, որ գտակների ծայրին էր դիպում, կամ գտակը հետը տանում, որ իմանան՝ թէ նա նրանց խնայում է: Շատ անգամ թամբի միջին երկու ոտքի վրայ էր կանգնում, այնպէս էր ձին չափ գցում: Աչք պէտք է լինէր, որ նրա կարճութիւնը, տղամարդութիւնը, շնորհքը տեսնէր ու գարմանար. «Ջանմ սան, ջանմ: Ա՛ղասի, մայրդ մէկ հատ է բերել քեզնից. հազար տարի անց կենայ՝ քեզ նման մէկն էլ չի ծնուի», ասում էին նայողներն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս:

Խ. ԱԲՈՎԵԱՆՑ.

Ի. ա.—Սար ու ձոր, ծով ու ցամաք, ծառ ու ծաղիկ, վարդ ու մեխակ, փուշ ու տատասկ, արու և էգ, մայր ու ձագ, գառն ու ուլ, մարդ ու կին, ծեր ու մանուկ, հարս ու փեսայ:—Հաց ու սկանիւր, կաթն ու մածուց, մեղր ու կարագ. տանձ ու խնձոր, չիր ու չամիչ, սոխ ու սխտոր:—Տուն ու տեղ, բուրդ ու բամբակ, աչք ու յօնք, ձեռք ու ոտք:

Բ.—Խօսք ու զրոյց, ուշք ու միտք, վարք ու բարք, սարք ու կարգ, կարգ ու կանոն, թիւ ու համար, ահ ու դող, փառք ու սլափ:

Գ.—Մեծ ու պստիկ, հաստ ու բարակ, սև ու սուլիտակ, կանաչ կարմիր:

Դ.—Տխուր տրտում, քաղցած ծարաւ, ամառ ձմեռ, գիշեր ցերեկ, ծանր ու բարակ:

Ե.—Յիսուս Քրիստոս, Պօղոս Պետրոս:

69. ԱՐՏԱՒԱԶԴ.

(Առասպել)

Լոյսը շողաց, ծագեց արև
Թուխ թուխ ամպերի միջից,
Մի ձիաւոր անցաւ շուտով
Արարատայ կամուրջից:
Գինայ գետի ափերի մօտ
Սև նըժուգը վազում էր,
Նա վազում էր, որպէս սև ծուխ,
Մըտքից արագ՝ թռւնջում էր:

Որսորդական իր շները
Թափառում են սար ու ձոր,
Հոտ քաշելով փրնտռում են
Էրէ, թռւնջուն նորանոր:
Թըփի միջից լանկարծակի
Վազեց կինջը սոսկալի,
Սոսկալի էր ժանիքները,
Աչքերը վառ, կրակով լի:

Տեսաւ նորան Արտաւազդը,
Վերայ հասաւ ձիւնթաց,
Նետեց նետը, վայրի կինջը
Ահեղ ձայնով որոտաց:

Օգը մըթնեց, փռչին պատեց,
Բարձրացաւ մի թունդ մըրրիկ,
Եւ անդունդը խոր յատակից
Գոռաց ձայնով յոյժ սաստիկ:

Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վիհ—փոս,
Ուր որսորդը իր ձիու հետ
Ներս գլորուեցաւ դիւրահոս:

Կորաւ արին՝ Արտաւազդը,
Կորաւ խորին անդընդում,
Հօր անէծքը նորան պատժեց,
Որին նա շատ էր ատում:
Իսկ քաջքերը Մեծ Մասիսի
Դարբնեցին շէկ երկաթը,
Յափըշտակած՝ Արարատի
Տարան նորան՝ գագաթը:
Այնտեղ դրին խոր այրի մէջ,
Ձեռք ու ոտքը շրջթայած,
Որ Արտաւազդ մինչ լաւիտեան
Մընայ այնտեղ բանտարկուած:

Ձը հեռացան Արտաւազդից
Իր շները հաւտտարիմ,
Ձոյգ շները որսորդական
Մնացին նորան մըտերիմ:
Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կըրծոտում են հաստ շրջթան,
Կըրծոտում են, որ որսորդին
Տան հընար ազատութեան:
Եւ մաշում է ծանր շրջթան,
Նա մաշում է օրէցօր.

Փոքր է մընում, որ կորցընի
Ձօրութիւնը իր հըզօր:
Հայոց երկրի գարբինները
Մեծ Զատիկի գիշերին,
Երեք անգամ ծանր մուրճը
Ջարկում են իրանց սալին:

Նոյն ըոպէին ծանրանում են
Արտաւազդայ շրջթայքը,
Որ չազատուի, չը կարենայ
Ջընջել բոլոր աշխարհքը:

Ն ո յ ն ա ն ի շ. — Կինջ, վարազ, — Սոսկալի, սարսափելի, զարհուրելի:

II. (ԸԶ) — Զգալ, զբաղուել, զբօսանք, զգոյշ, զմայլել.

(ԶԸ) — Զղշալ, զրկել, զննել, զտել, զրահ.

(Զ) — Զաւակ, զանգակ, զոհ.

(ԸՄ) — Սկսել, ստանալ, ստեղծել, ստրուկ, ստուգել.

(ՍԸ) — Սրել, սղոց, ստախօս, սրբել.

(Ս) — Սար, սէր, սիրուն, սուրբ:

70 ԺԲԱՋԱՆ ՊԱՌԱՒԷ.

Մի հարուստ գիւղացու տանը կար մի պառաւ կին, որ շատ աշխատասէր էր: Տան մէջը ամէն բան կարգող սարքողը նա էր, մեծի ու փոքրի հրաման տուողը նա էր: Հէնց որ տեսնում էր մի բան իր տեղը չէ, հէնց որ մի բանում մի պակասութիւն էր նկատում, իսկոյն ձայն էր տալիս. «Կացինը դռանը մնաց, տուն բերէք. գոմը քերելու է, քերեցէք, հանդի խոտը հաւաքելու է, հաւաքեցէք. Նարգիզ կովը անկիթ մնաց, կթեցէք. ուր է չալտիկ հորթը, ուր է Նարինջը...» Այսպէս, ոչ ոքի հանգստութիւն չէր տալիս. և այսպէս կրկնում էր ամէն օր:

Տան հարսներն ու երիտասարդները որ շատ նեղացան պառաւի ձեռքից, հաւաքուեցան, խորհուրդ արին, և նրա ձեռքից ազատուելու համար՝ նրան ձգեցին թոնիրն ու բերանը ծածկեցին: Միայն օրը մի կտոր հաց էին գցում թոնիրը, որ այնտեղ առանց աղմուկի, սուս ու փուս, իր համար ուտի, ասլրի և ուրիշների հոգին չհանի: Խեղճ պառաւը թոնրումն էլ հանգիստ չէր կենում, այլ ականջը սրած՝ սպասում էր թէ տան մէջը ի՞նչ կը խօսեն, որ էլի տէրութիւն անի, սխալն ուղղի, պակասը լրացնի:

Մութը ընկնելու ժամանակը տաւարը տուն է գալիս և ուզում են ականել, որ տեսնեն՝ ոչ մէկը հօ պակաս չէ: Մեծ հարսը, որ հիմա պառաւի տեղն է բռնել, բարձր ձայնով կանչում է. «Այս Աստղիկ կովը, այս Նարգիզը, այս ծաղիկը, այս Շէկը, այս Չալը, այս Վարդիկ եզը, այս Ղարափեօզը, այս ձիւն, այս մատակը, այս քուռակը... Լաւ, լաւ, — բոլորը տեղն է, լրիւ է, փաւախն արէք»:

Իսկ պառաւը, որ բոլոր ասածները լսում էր, հաշուում է տեսնում, որ մէկը պակաս է, և իսկոյն էջի պէս ձայն է բարձրացնում թոնրից: Ամենքը ձայն են տալիս. «Էջն ուր է, էջն ուր է»: Գնում են հանդը էջը փնտռելու, տեսնում են որ արդէն խեղճին գայլը անուշ է արել: Նոր են հասկանում, որ իրանց տան դովլաթը պառաւի գլխին է պտըտում: Նրան հանում են թոնրից, և ներողութիւն են խնդրում նրան զուր նեղութիւն տալու համար:

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ.

71 Մ Շ Ա Կ.

Թողեց վարուցանք, արօր և գութան,
Եւ պանդրխտութեան կրեց գաւազան.
Դէպի հեռաւոր՝ դէպ՝ օտար աշխարհ
Տըխուր, սըրտաբեկ ուղղեց ճանապարհ...

«Ա՛խ, Ա՛ստուած», գոչեց, գնաց գիւղացին,
Չը նայեց կընոջ արտասուք-լացին.
Թողեց ընտանիք նօթի, կիսաշունչ,
Թողեց անխընամ, մերկ ու անտերունչ:

Երկար տարիներ նա թափառական
Ընդ ծով և ցամաք պտըտէր անսահման,
Երկրէ երկիր շըրջէր գաղթի գաղթ,
Եւ յուսակըտուր որոնում էր բաղտ:

Եւ վերջ ի վերջոյ մի մեծ պանդոկում
Եղաւ նա համալ, բեռն էր շալակում.
Բեռն էր շալակում, որպէս մի գործատ,
Գործէր անասնոց նա գործ չարաբաստ.
Լափչիքը հագած, փալանը մէջքին՝
Մինչեւ կէս գիշեր քաղուում էր հոգին,
Եւ նոյն փալանին գըլուխը դրած՝
Սառը գետնի վրայ քննում էր լոգնած:

Բայց և այդ բաղադր չը տեսց երկար.
Մի օր մի մեծ հակ տանում էր բաղար,
Ծանր էր բեռը, ծանր ու ահագին,
Ոտքերը դողաց, աչքերը մըլթնեց,
Յանկարծ գըլորուեց իր բեռան տակին...
Անշունչ, կիսամեռ վեր առան նորան
Եւ հիւանդանոց ընկերքը տարան:

Ծիծառը դարձաւ դէպ՝ իրանց բունը,
Կարգեց, նորոգեց աւերուած տունը.
Բայց մեր մըշակից դեռ չը կայ համբաւ,
Ընտանեաց վիշտը դառն էր անբաւ:
Հին պարտատէրը շատ շատ էր տանջում,
Նորա կընոջից փողէր պահանջում:
Տանջուեց խեղճ կինը, տանջուեց անպայման,
Մանուկ հասակում մաշուած թառամած՝
Անբաղտ գըլուխը տարաւ գերեզման...

ԲԱՓՖԻ.

72. Բ Ի Ի Բ Ա Պ Ա Տ Ի Կ.

Մի գիւղում բնակում էին մի մարդ ու կին: Մարդը
շատ ժամասէր էր: Ամէն օր եկեղեցի էր գնում և օրը մի
գրոշ էր տալիս քահանային: Քահանան էլ չամէն անգամ

նրան ասում էր. «Օրհնուէս դու. Բիւրապատիկը քեզ մէկի
փոխանակ՝ հազար տայ»:

Նա էլ ուրախանում էր և ինքն իրան ասում. «Այս լաւ
բան է. մէկ տալիս եմ՝ հազար պէտք է տայ»:—Այսպէս,
ամէն օր մի գրոշ տալով իր բոլոր ունեցածը տուեց քահա-
նային. իսկ ինքը աղքատացաւ:

Մէկ օր կինը ասեց ամուսնուն.

—Վեր կաց, գնա քահանայի մօտ. մի հազարը բեր,
տանք հացի, մինչեւ որ մէկէլ հազարներն էլ կամաց կա-
մաց կը տայ:

Ամուսինը գնաց:

—Օրհնեա՛, տէր:

—Աստուած օրհնէ:

—Տէրտէր ջան, ես քեզ տուի, դու ինձ հազար հազար
խոստացար. հիմա բեր մէկ հազարը տո՛ւր՝ տանեմ, այն միւս-
ներն էլ՝ լետոյ կը գամ, կը տաս:

—Օ՛րհնուած, ասեց քահանան, դու ինձ տուիր, որ
Բիւրապատիկը քեզ մէկին հազար տայ:

—Բիւրապատիկն ո՞վ է:

Քահանան նրան մի ճանապարհ ցոյց տուեց, ասելով.

—Այս երկայն ճանապարհովը կը գնաս, քեզ կը հան-
դիպի մի մեծ մարդ, որ նստած կը լինի ոսկէ աթոռի վրայ:
Բիւրապատիկը նա է. ասա՛ նրան. «Ինձ տէրտէրն ուղարկեց.
մէկ տուել եմ, հազար պէտք է տաս»:

Նա էլ գնաց այն երկայն ճանապարհովը: Նրան հան-
դիպեց մի քարանձաւ. ներս մտաւ և ի՛նչ տեսաւ: Քառա-
սուն երեւելի գողեր շարուել են: Սրան պատիւ են տալիս,
տեղ են բաց անում և նստեցնում են իրանց մէջտեղը:

— Ո՞վ ես դու, Հարցրին նրան. այսքան ժամանակ է, մեր ահից մարդ չէր եկած այս կողմը. ո՞րտեղից ես գալիս ես ո՞ւր ես գնում:

— Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա, մէկ տուել եմ, Հազար պէտք է ստանամ:

Գողերն ասեցին.

— Ե՛ղբայր, այդ խելքը խելք չէ. թո՛ղ այդ: Ա՛րի այս տեղ, մենք քեզ մի բուռը ոսկի կը տանք, վեր կաց, քո տո՛ւնը գնայ:

— Ո՛չ, ասեց նա. այդ փողը Հալալ աշխատանք չէ:

— Եթէ այդպէս է, ասեցին գողերը, դու արդար մարդ ես: Երբ գնաս, Բիւրապատիկին Հարցրո՛ւ, թէ միւս աշխարհումը մեզ Համար էլ տեղ կայ:

— Ա՛չքիս վրայ, ասեց նա ու գնաց:

Գնաց, տեսաւ մի ծերունի, որ նստած էր մի քարի մօտ: Նա անդադար ասում էր. «Փա՛ռք քեզ, Ա՛ստուած, փա՛ռք քեզ»: Եւ ինչքան ասում էր, այնքան ոսկի էր բղխում քարից:

Ծերունին Հարցրեց այս մարդուն.

— Ե՛ղբայր, ո՞ւր ես գնում:

— Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, Հազար պէտք է ստանամ:

— Ա՛րի այս ոսկուց երկու բուռը տամ, յետ գնայ, ասեց ծերունին:

— Ո՛չ, ասեց նա. այդ ո՛չ իմ տուածն է, ոչ իմ աշխատածը. ես դրան արժանի չեմ:

— Եթէ այդպէս է, ասեց ծերունին, երբ գնաս Բիւրապատիկի մօտ, Հարցրո՛ւ, թէ ոսկին երբ պէտք է կտրուի այս քարից:

— Գլխիս վրայ, ասեց նա ու գնաց:

Ճանապարհին տեսաւ մի այգետէր, որ Հարցրեց.

— Հո՞ղածին, ո՞ւր ես գնում:

— Գնում եմ Բիւրապատիկի մօտ, պատասխանեց նա. մէկ տուել եմ, Հազար պէտք է ստանամ:

— Երբ գնաս, ասեց այգետէրը, Բիւրապատիկին Հարցրո՛ւ, թէ ինչո՛ւ երբ իմ այգու պատը շինում եմ, բոլոր կանաչ պտուղները չորանում են. իսկ երբ պատը քանդում եմ՝ կանաչում են:

— Ա՛չքիս վրայ, ասեց նա ու գնաց:

Գնաց, տեսաւ որ՝ մէկ մեծ մարդ նստած է ոսկէ աթոռի վրայ: Նա Հարցրեց.

— Ո՞ւր ես գնում:

— Բիւրապատիկը դո՛ւ ես, Հարցրեց ճանապարհորդը:

— Այո՛, ես եմ, պատասխանեց, ի՞նչ ես ուզում:

— Մեր տէրտէրն ուղարկեց ինձ, ասեց նա: Ես քեզ մէկ տուել եմ՝ դու ինձ Հազար պէտք է տաս:

Բիւրապատիկն ասեց.

— Կը գնաս տունդ, բակիդ մէջ մի թթենի կայ. փորիր նրա տակը, մի կարաս լիքը ոսկի դուրս կը գայ. վեր առ քո մէկի փոխանակ Հազարանոց:

Ճանապարհորդը բացի դրանից՝ ի՞նչ որ իրան պատուիրել էին ասելու, ամէն բան ասեց Բիւրապատիկին, և ամենի պատասխանն էլ ստանալով՝ վերադարձաւ:

Հասնելով այգետիրոջը՝ ասեց.

— Եթէ այգուդ պատերը քանդես, որ անց ու դարձ անողները ուտեն պտուղներից, այգիդ կը կանաչի:

Դեռ խօսքը բերանումն էր. նա իսկոյն գնաց, պատերը քանդեց և այգին կանաչեց:

Նա լետոյ գնաց ծերունու մօտ, ասեց.

— Քանի որ դու բերանիցդ Աստծու անունը չես պակասեցնի, քարից էլ ոսկին չի պակասի:

Ծերունին ասեց.

— Մի՛թէ մարդ իր բերանից Աստծու անունը կը պա-
կասեցնի. փառք Աստուծոյ:— Ասեց չասեց՝ քարի միւս երե-
սից էլ ոսկի դուրս թափուեցաւ. առաջուանից շատ:

Նա եկաւ գողերի քարանձաւը և նրանց ասեց.

— Եթէ ձեր գողութիւնը թողնէք, միւս աշխարհումը
տեղ ունէք:

— Գողերը թողին քարանձաւը, գնացին իրանց մեղքը
ապաշխարեցին ու փրկուեցան:

Վերջապէս մեր ճանապարհորդը եկաւ իրանց տուն.
կանչեց կնոջն ու ասեց.

— Այ կին, բա՛հ ու թի՛ բեր:

Մարդ ու կին վեր առան բա՛հն ու թին, փորեցին
թթենու տակը և մի կարաս գտան՝ ոսկով լիք: Օրը մթնեց
և կարասը թողին, որ առաւօտը հանեն:

Գիշերով դրացիները իմացան, եկան կարասը գողանալու.
բայց, տեսնելով որ մէջը դեղին հող է, շուր տուին տան
տիրոջ այգիումը: Կարասը կոտորուեցաւ ու հողը ցրուեցաւ:

Առաւօտը զարթեցին. ի՛նչ տեսան: Այգու չորս կողմը
ոսկի էր փռուել: Ամուսինը գոռաց.

— Քա, կնի՛կ, ցախաւելը բեր. բոլոր այգին ոսկի է
բուսել:

Աւելեցին շողշողուն, զրնգզրնգան ոսկիքը: Մէկի փո-
խանակ ո՛չ թէ հազար, այլ անթիւ, անհամար հազարներ
ստացան, հարստացան և Աստծուն փառք տուին:

Գ. Վ. ՄՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ:

Լ.— Թթենի, տանձենի, խնձորենի. — Ուշխարենի, խոզենի:

Հ ա կ ա ն ի շ. — Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապուտ երկընքի վերայ
Ո՛րքան ասողեր փայլում են վառ,
Ասես՝ համար, թիւ չը կայ,—
— «Այո՛, դրստրիկ, այդ ասողերը
Ունին հաշիւ ու համար.
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի ասող ունի իւր համար»
բ. — Մեր տան համարը 35 է:

73. Օ Ր Օ Ր.

Նանիկ արա՛ մեծանաս,

Ալւորես՝ ծերանաս.

Երբ որ խելքիդ տէր դառնաս,
Պառաւ տատիդ չմոռանաս:

Տատը գլխովդ պըտուտ գայ,
Ի՛նչ ցաւ ունես՝ տատին գայ.
Երեսիս մի բուռը հող գըցես,
Իմ տէր ու տիրական բալայ:

Ծնորհքով ուժով տըղայ դառ,
Ողջ աշխարհը ձեռքդ առ.
Մեր թըշնամի ազգերին
Խեղճացըրո՛ւ՝ հոգին առ:

Զայնդդ լըսողը սասանի,
Ծակը մըտնի՝ տազ անի.
Ասի՛ «Ահա՛ Վահանը
Կը խրփի ինձ՝ կը սպանի»:

Գերի է մեր հայ ազգը,
Հըզօրների թայ ազգը.
Անիրաւ Տաճկի ձեռքին
Փըչացաւ մեր խեղճ ազգը:

Իմ Վահանը մեծանայ,
Թըշնամու աչքը հանայ.
Հայ աղբին օգնելով՝
Փառք ու պատուի տիրանայ:

Պ. ՊԻՕՇԵԱՆՑ.

74. Օ Ր Օ Ր.

Ոսկի օրօրոց, կապ ունիս,
Մետաքսեղէն շոր ունիս.
Օրօր կապեմ կախ օրրան,
Ծառէ ծառ շուքեր վըրան:
Ծառի՛ շուքեր վրայ եկէք,
Շո՛ւտ՝ երեխաս քո՛ւն գըրէք.
Օրօր, օրօր, օրերիդ,
Թեւս դէմ գընեմ չերերիդ:
Չարխափան չարըդ խափանէ,
Աստծամայրն արեւդ պահէ:
Օրօր, օրօր, քընել ես,
Ծածկել եմ, քըրտընել ես.
Երեսիդ շարը լետ տանեմ,
Վարդի նըման բացուել ես:
Վարդերի անուշ հոտում
Պառկէ՛, եղբի անուշ քուն:

75. ԻՄԱՍՏՈՒՆ ԶՈՒՀԱՅԷ.

Մի թագաւոր նստած էր իր գահի վրայ: Հեռաւոր երկ-
րից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, թագաւորի գա-

հի շուրջը մի կըր գիծ քաշեց ու լուռ ու մուռ մի կողմը
քաշուեց նստեց:

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհասկա-
ցաւ. կանչեց իր իշխաններին, նրանք էլ մի բան չհասկա-
ցան: Թագաւորը շատ վատ դրութեան մէջ էր: Նրա համար
մեծ ամօթ էր, որ իր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր
գտնուում՝ դեսպանի արածը հասկանալու համար: Թագաւորը
սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ նրան պա-
տասխան տուող չգտնուի, էլ ոչ ոքի կենդանի չի թողնի:

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամէն կողմը,
և վերջը մի տան մէջ գտան մի ջուհակ (ոստայնանկ): Տես-
նում են որ այն մարդը մի տեղ նստած մի և նոյն ժամա-
նակը երեք գործ է շինում. — համ իր կտաւն է գործում,
համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի
վրայ ցորեն է փռել, մօտը մի ճիւղոտ է տնկել. երբ ինքը
իր կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործւում է, օրօրոց-
ները օրօրւում, այն ճիւղոտն էլ շարժուելով՝ տանիքի ծառն
են փախչում, ցորենից հեռանում: Նրանք այս բանի վրայ
շատ են զարմանում: Յետոյ նրան պատմում են թէ՛ «Հեռա-
ւոր երկրից մի մարդ եկաւ, թագաւորի գահի շուրջը մի
գիծ քաշեց, և ոչ ոք չկարողացաւ իմանալ, թե դրանով
ինչ էր ուզում ասել: Վեր կաց, գնանք. եթէ դու նրա միտ-
քը իմանաս, թագաւորը քեզ մեծ պարգևներ կը տայ»:

Ջուհակը մի քիչ մտածում է. յետոյ առնում է երկու
վէգ ու մի վառեկ և գնում է հետները: Հասնելով թագա-
ւորի մօտ, վէգերը հանում է և ձգում դեսպանի առաջը:
Դեսպանը զրպանից մի բուռը կօրեկ է հանում ու շաղ տա-
լիս գետնին: Ջուհակը բաց է թողնում վառեկը, որ իս-
կոյն սկսում է կտցահարել կօրեկը: Այս բանը տեսնե-
լով՝ դեսպանը տրեխները հագնում է ու սուս ու փուս դուրս
գնում:

Թագաւորը ջուհակին հարցնում է թէ՛ «Այդ քնչ արիր»:

Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու թէ՛ «Մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկիրը տիրելու. խոնարհում ես, թէ կռուով ես ուզում պատասխանել»: Ես նրա առաջը վեզեր ձգելով հասկացրի թէ՛ «Դուք մեզ համար երեխաներ էք, գնացէք վեզ խաղացէք. դուք ուր, մեզ հետ կռուելն ուր»: Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ՛ «Մեր զօրքերը անթիւ, անհամար են. դուք ինչ կարող էք անել»: Եւ երբ ես վառեկս բաց թողի ու նրա բոլոր կորեկը կերաւ, դրանով նրան պատասխանեցի թէ՛ «Մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդի, գնա՛ պատմիր քո թագաւորին»:

Թագաւորը այս բացատրութիւնը լսելով մեծամեծ պարգւեններ տուեց ջուլհակին և ուզեց նրան վեզիւրի պաշտօն տալ: Բայց ջուլհակը, պարգւենների մի մասովը բաւականացաւ և թագաւորին ասեց. «Ո՛չ, թագաւոր, թող որ ես ջուլհակ մնամ. միայն այս եմ խնդրում քեզնից, որ չմոռանաս, որ հասարակ արհեստաւորների մէջ էլ կը գտնուի այնպիսին, որ այսպիսի նեղ օրում քեզ պէտք կը գայ: Վեզիւրներէի ինչ պատիւ ուզում ես՝ տուր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ.

76. ԿԵՂԾ ԿԱՆԱՐԴԷ.

Մի քաղաքում բնակում էին մի մարդ ու կին: Մարդը ոչ մի արհեստ չգիտէր և նրանք շատ խեղճ էին: Սրանք ունէին մի հարուստ դրացի, որ կախարդութիւնով էր հարբստացել: Այն խեղճ մարդու կինը ամէն օր իր մարդուն ասում էր. «Եթէ դու էլ կախարդութիւն անես, մենք էլ կը հարստանանք»:

— Ախր որ ես ոչինչ չգիտեմ, ի՛չպէս կախարդութիւն անեմ, ի՛նչպէս փալ բաց անեմ, պատասխանում էր մարդը:

Բայց տեսնելով որ կինը շատ է նեղացնում, դրա համար նա էլ մի գորգի կտոր է վեր առնում, տանում փողոցի մի անկիւնումը փռում, վրան նստում ու ասում թէ ինքը կախարդ է:

Մէկ օր դրա մօտ գալիս է մէկ ուղտապան ու ասում.

— Երբ ուղտերս քշում էի այս քաղաքը, ճանապարհին յետ նայեցի տեսայ որ մէկ ուղտս չկայ: Այս կողմն ընկայ, այն կողմն ընկայ, չկայ ու չկայ. ուղտս անյայտացաւ: Խընդրում եմ, մի հնարքով ուղտս գտնես:

Կախարդը իր թղթերը շուր ու մուր տուեց, իբր թէ բան կարգաց ու քննեց: Մտածեց, մտածեց, վերջը նրան մի թղթի կտոր տուեց, ասեց. «Այս մէկ թղթով կ'ո՛ւր տուր, այս մէկն էլ ծոցդ դիր, գնա. երեք օրուայ մէջ քո կորուստը կը գտնես»: Այսպիսով այն մարդուն հեռացրեց իրանից:

Ուղտապանը մնացած ուղտերը քշում է, դաշտը գնում, տեսնում ահա՛, իր կորած ուղտը այնտեղ խոտ է արածում: Շատ է ուրախանում, գնում է կախարդին լաւ պարգւ տալիս և ամենքին պատմում է որ մէկ երեւելի կախարդ է եկել:

Ամբողջ քաղաքումը հռչակում է նոր կախարդի անունը, ամէն կողմից մարդիկ գալիս են նրա մօտ, փալ բաց անել տալիս, և նա կարճ ժամանակում լաւ փող է դիզում, հարստանում:

Այն երկրի թագաւորը մի անգամ մի թանկագին գուհար է կորցնում: Կանչում է իր քաղաքի երեւելի կախարդներին, բայց ոչ ոք չէ կարողանում գտնել թագաւորի կորուստը: Վերջը թագաւորի մարդիկը գալիս են մեր նոր կախարդին տանելու: Նա, թէ և չէր ուզում գնալ, բայց կինը զօրով ուղարկում է:

— Իմ կորցրած գուհարը պէտք է գտնես, ասում է նրան թագաւորը, թէ չէ գլուխդ կտրել կը տամ:

Կախարդը երկիւղից դողում է, չէ իմանում՝ ինչ պատասխան տալ: Վերջը առանց մտածելու ասում է. «Թագաւոր, քառասուն օր ինձ ժամանակ տուր, կը գնամ տանս կը նստեմ ու տետրակներս լաւ կը քննեմ»:

Մի ասիւր՝ այն գոհարը թագաւորի սպասաւորներն են գողացել, որոնք թուով քառասուն հոգի էին: Նրանք երբ որ լսում են թէ կախարդը քառասուն օր է ժամանակ խնդրել, մտածում են թէ՛ Չիւնի՝ այս մարդը ամէն բան գիտէ... Այս պատճառով նրանք խորհուրդ են անում, որ ամէն երեկոյ մէկ մէկ գնան անց կենան կախարդի տան մօտովը, ականջ դնեն իմանան, թէ նա ինչպէս պէտք է գտնի գոհարի տեղը:

Առաջին երեկոյին նրանցից մէկը գնում անցնում է նրա տան կողմը: Կեղծ կախարդը, որ տխուր տրտում օր էր մըթնեցնում, երեկոյին տարակուսած՝ կնոջն ասում է. «Ա՛յ կնիկ, այս մէկն անց կացաւ (իբր թէ՛ մէկ օրն անց կացաւ), մնաց երեսուն իննը»: Գող սպասաւորը այս խօսքը լսելով՝ գնում է ընկերներին յայտնում: Երկրորդ օրը երկրորդն է անցնում կախարդի տան մօտովը: Կախարդն իր կնոջը ասում է. «Ա՛յ կնիկ, այս էլ երկրորդը անց կացաւ. մնաց երեսուն ութը»: Այսպէս օրերն անցնում են, ամէն երեկոյ կախարդը վա՛յ է տալիս իր գլխին, որ շուտով մօտենում է իր գլուխը կտրել տալու օրը:

Սրանով գող սպասաւորների սիրտն էլ ահ է ընկնում. և մի քանի օրից յետոյ գնում են կախարդին իրանց սրտինը յայտնում, ասում. «Մենք լաւ գիտենք, որ դու իմանում ես մեր գողութիւնը: Միայն խնդրում ենք որ մի կերպով ազատես մեզ»:

Կախարդն ասում է. «Ի հարկէ, ես իսկոյն իմացայ գոհարի տեղը, բայց քառասուն օր այն պատճառով ժամանակ ուղեցի թագաւորից, որ ձեզ ազատեմ: Իրա համար ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ այն գոհարը լուսնէք թագաւորի

սագերից մէկին կուլ տալ տաք, այն սագի մի թւը կտորէք ու ոչ ոքի չյայտնէք: Ես ձեզ հաստատ խօսք եմ տալիս որ անպատճառ կ'ազատեմ ձեզ»:

Ծառաները գնում են կախարդի կամքը կատարում: Քառասուններորդ օրը կախարդը գնում է թագաւորի մօտ. դեռ իր տետրերին է նայում, յետոյ առաջարկում է որ հաւաքնից դուրս բերեն թագաւորի բոլոր հաւերը, սագերը, և նրանց նայելով թագաւորին ասում է. «Սրա մէջն է քո կորուստը». ասում է ու ձեռքը գնում թւը կտորած սագի վրայ: Իսկոյն մորթում են սագը և փորոտիքից հանում են կորած գոհարը: Թագաւորն ուրախանում է և մեծամեծ պարգևներ է տալիս կեղծ կախարդին:

Գ. Տ. ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆՅ (Ժողոված):

Ն՞ոյն ա ն ի շ. — Դիզել, հաւաքել, ժողովել, կուտակել:
Ի.— Հ ա կ ա ա կ գ ո Ր ծ ո Ղ ու թ իւ ն ն ե Ր.

Նստել-կանգնել, խօսել-լռել, խաղալ-պարապել, սկսել-վերջացնել, ատել-սիրել, հանել-հագնել, կորցնել-գտնել, ծախել-գնել, ցանել-հնձել, կռուել-հաշտուել, օրհնել-անիծել, մեղադրել-պաշտպանել, ուրախանալ-տրտմել, ծագել-մայր մտնել, ներշնչել-արտաշնչել:

77. ՈՒՂՏԸ ՄԻ ԳՐՈՇ.

Կար մի ընտանիք, որ շատ խեղճ էր ապրում: Պատահում էր, որ ճաշին միայն ցամաք հաց էին ունենում: Մէկ օր մէկ ուղտապան փողոցներովը մէկ ուղտ էր ման ածում, ծայն տալով. «Ուղտը մի գրոշ, ուղտը մի գրոշ»: Երեխան լսում է ու գնում հօրն ասում. «Հայրիկ, ուղտը մի գրոշով են տալիս, արի առնենք, ինչ լաւ կը լինի, շուտ արա, ուրիշ մարդ չառնի»:

— Թանկ է, որդիս, պատասխանում է հայրը:

Անց է կենում ժամանակ: Հայր ու որդի սկսում են առաջուանից աւելի աշխատել, գիշեր ցերեկ չարչարուել, և կամաց կամաց իրանց համար բաւական գումար են կապում, հարստանում: Այդ ժամանակ որդին տեսնում է որ դարձեալ մի ուղտապան փողոցէ փողոց մէկ ուղտ է ման ածում ու ասում՝ «Ուղտը հինգ հարիւր ռուբլի, լաւ ուղտ առէք»:

Հայրը այս ձայնը լսելով, որդուն կանչում է. «Շուտ արա, որդի, ասում է, կանչիր՝ այն ուղտն առնենք, շատ էժան է, ձեռքներիցս չգնաց»:

Որդին զարմացած՝ հօրն ասում է.

— Հայրիկ, երբ ուղտը մի գրոշ էր, ասեցիր՝ շատ թանկ է, չառար. հիմա երբ հինգ հարիւր ռուբլի է, ասում ես՝ առնենք:

— Որդի, պատասխանեց հայրը, երբ որ ուղտը մի գրոշ էր, այն ժամանակ գրոշը մեզ համար հազար ռուբլի արժէր. իսկ հիմակուայ հինգ հարիւր ռուբլին աչքումս շատ չնչին փող է երևում. հիմա ինձ համար հողն ու փողը մէկ է»:

Գ. Տ. ԱՂԵՔՍԱՆԻՐԵԱՆՑ.

Ի.— Ձ ա յ ն տալ-կանչել, վերջ տալ-վերջացնել, շունչ տալ-կենդանացնել, խօսք տալ-խոստանալ, սիրտ տալ-քաջալերել, հանգիստ տալ-հանգստացնել. ձեռք է տալիս-ձեռնուտու է, «Շոր տուր, շնորհք տամ».— «Երես տան՝ աստառ կ'ուզես»:

78. ԽԱՉԼՈՒԱՅ ԼԻՃԸ.

(Աւանդութիւն)

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագաւոր կար, Անունն էր Պռօշ, ինքը զօրաւոր, ազնիւ ու արդար. Չէր նա կռուասէր. նստում էր նա իր Լաթար քաղաքում, Թէպէտ նրա վախը տիրում էր հեռու հեռու տեղերում:

Փառասէր չէր նա, Թէպէտ կարող էր ամէն բան ուժով. Աշխարհք կը քանդէր, Թէ սիրտը ուզէր՝ Հաւուների թրով:

Հաւուների թուրը, Հաւուների թուրը,
Ամէն բան կ'անէ Հաւուների թուրը.
Չի լինի նորան աշխարհում նման,
Կ'անէ ամէն բան Հաւուների թուրը:

Օ՛, նա չէ շինուած հողեղէն ձեռքով,
Անձեռագործ է Հաւուների թուրը.

Չէ նա խորասան և ոչ ալմազից—
Ալմաս կը կտրէ Հաւուների թուրը:

Կրակոտ ամպերում, կայծակների հետ
Կռել է կոփուել Հաւուների թուրը.

Կրակոտ ամպերում կայծակների հետ
Աշխարհ է իջել Հաւուների թուրը:

Նորան տիրողը աշխարհ կը տիրէ,
Աշխարհ կը գերէ Հաւուների թրով.

Գլերի մեծին գերի կը բերէ,
Շղթակապ կ'անէ Հաւուների թրով:

Արքայազնուհին Չինումաչինի
Իր հարս կը շինի Հաւուների թրով,
Եալբուս սարն էլ որ նրա առաջ ելնի,
Երկու կէս կ'անէ Հաւուների թրով:

Հաւուների թրով, Հաւուների թրով,
Ամէն բան կ'անես Հաւուների թրով.
Չի լինի նորան աշխարհում նման,
Կ'անես ամէն բան Հաւուների թրով:

Ահա Թէ ինչո՛ւ Պռօշ թագաւորից ամենքն են սարսում,
Թէպէտ նրա մտքով մի մարդու վնասել անգամ չէր անցնում.
Եւ ո՞վ չէր սարսի. մեծ էր Հաւուների թրի զօրութիւն.
Բայց չէր ցանկանում Պռօշ թագաւորը փառք, իշխանութիւն:

Ո՛չ ոք չը գիտէր՝ թէ քանի տարի Պռօշի պապերը
Կրօն էին իբրեւ մի անդին աւանդ Հաւուհի թուրը,—
Թէ ինչ հրաշքով ընկել էր սուրը աշխարհի վերան,
Թէ ո՞րը Պռօշի մեծ նախնիքներից ձեռք էր բերել այն,—
Յայտնի չէ սրբի սկզբնաւորութեան մութ պատմութիւնը,
Լռում է մինչ անգամ դրա մասին աւանդութիւնը:
Գիտեն այս միայն, ու Պռօշի նախնիք այնքան տարիներ
Իրանց զօրութիւն և ոյժը երբէք ի չար չեն գործ դրել:
Պռօշն էլ հետեւեց իր նախնիքներին,—ստանալով սուրը
Հօր մահուան ժամին, առաւ աւանդը, խոստացաւ Հօրը.
«Հայրիկ, երգում եմ քո տուած սրբով, որ քեզ հետեւեմ,
Ձարի կործանիչ, բարու հաստատիչ հանապազ լինեմ»:
Այսպէս էլ արաւ: Քառասուն տարի Պռօշի ձեռքում
Հաւուհի թուրը կայծակի նման փայլում էր, վառում,
Բայց նորա ձեռքից մի անմեղ արիւն երբէք չթափուեց,
Կայքից ու կեանքից սրբի միջոցաւ մի մարդ չզրկուեց,
Մի կին լաց չեղաւ իր ամուսինը նորա պատճառաւ,
Մի տղայ չորբացաւ, կորցնելով ծնողներ ու չանտէրացաւ:
Ո՛չ մի թագաւոր կամ արդար իշխան չընկաւ իր գահից,
Ո՛չ մի ժողովուրդ չըզրկուեց իրա ազատութիւնից:
Ինչ բան բարի էր՝ ծաղկեցնում էր նա իր կարող աջով,
Ինչ բան որ չար էր՝ ջրնջում կործանում Հաւուհի թուրով:
Բոլոր հրէշներին, չար գազաններին աշխարհից կտրեց,
Հըսկայ դեերի քառասուն գլխներ մի զարկով թռցրեց.
Մըտաւ և ներքին մըթին աշխարհ նա լոյ՛ աշխարհից.
Մարդկանց ազատեց այնտեղ վիշապի չար գերութիւնից:—
Եւ ինչ չէր անի. մեծ էր Հաւուհի թրի զօրութիւնը,
Բայց չէր ցանկանում Պռօշ թագաւորը փառք, իշխանութիւն.
«Թող ապրեն ազատ ու խաղաղ ազգեր, բազմանան մարդիկ,
Լաթար քաղաքը լաւ կառավարեմ, այն էլ է հերիք»:
Եւ լիանում էր Լաթար քաղաքը ամէն բարեբով,
Զըգւում շէնացած Խաչուայ լըճի կանաչ ափերով:

Բայց ինչ կայ արդեօք յաւիտենական այս աշխարհի մէջ—
Պռօշ թագաւորի գլուխն էլ սպիտակ մազով ծածկւեց.
Այն հըզօր աջը, որ դողացնում էր ամբողջ աշխարհը,
Ձէր կարում վերցնել այլ ևս յաղթական Հաւուհի թուրը:
Ընկաւ Պռօշը, ընկաւ ուժաւատ մահուան մահիճը,
Գիտէր՝ պիտ' չողէր շուտով նրա առաջ մահուան հրեշտակը:
Նա մըտածում էր. «Ահա մօտեցաւ իմ մահուան օրը,
Ո՞վ է իմ ժառանգ, ո՞ւմ պիտի յանձնեմ Հաւուհի թուրը»:
Եօթ որդի ունէր եօթ սարի գլխին՝ եօթ բերդի իշխան,
Իրարից վատթար ծարաւի եղբայր իր եղբօր արեան:
«Որքն տամ արդեօք, ո՛չ ոք սոցանից չէ սրբիս արժան:
Ո՛հ, իմ մահից յետ արեան հեղեղներ պիտի ընթանան,
Պիտի վեց անգէն եղբայրներ գլխներ կտրած թրպրտան
Հաւուհի թուրը պիտ' դառնայ պատճառ եղբայրսպանութեան:
Ո՛չ, այս չի լինի, ո՛չ, մինչև այժմ նա չար չի եղել,
Չպիտի լինի նա չարի պատճառ մահիցս յետոյ էլ.
Մօտեցաւ ժամը. շուտ թողնելու եմ ցաւոտ աշխարհը,
Շուտ կ'անհետանայ երկրիս երեսից Հաւուհի թուրը»:
Հրամայեց կանչել իրա մեծ որդուն: Շտապեց որդին
Բլէշանու բերդից՝ լսելու իր «Հօր կտակը վերջին:
«Ո՛րդի, մեռնում եմ, վերջին կտակս յանձնում եմ ես քեզ.
Բայց այն դեռ ևս իմ մահից առաջ պիտի կատարես»:
—Հայրիկ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու.
Տո՛ւր ինձ, թէ կ'ուզես, Հաւուհի թուրը՝ աշխարհ քանդելու:—
«Այո՛, քեզ կը տամ Հաւուհի թուրը, աշխարհ մի՛ քանդիր,
Հաւուհի թուրը տո՛ւր ու Խաչուայ ծովը շարժար»:
Առաւ մեծ որդին Հաւուհի թուրը, բայց հօրը խաբեց:
Ո՛չ թէ ծով ձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թագցրեց:
«Ո՛րդի, քնչ արիւ Հաւուհի թուրը,
Ձգեցիր, ասա՛, Խաչուայ ծովը»:
—Այո՛, այո՛, Հայր, Հաւուհի թուրը»
Տարայ ձգեցի Խաչուայ ծովը:—

Տեսա՞ր՝ ի՞նչ եղաւ Խաչլուայ ծովը,
Երբ որ ձգեցիր Հաւլունի թուրը:
— Հայր, ոչինչ չեղաւ Խաչլուայ ծովը,
Բայց ես... ձգել եմ Հաւլունի թուրը:—
«Ո՛չ, սո՛ւտ ես ասում, սո՛ւտ, այդ ես գիտեմ,
Անարժան որդիս խաբում է Հօրը.
Գնա բեր շուտով, թէ չէ՝ կ'անիծեմ,
Գլխիդ կը ճաքի Հաւլունի թուրը»:

Գնաց դողալով որդին, յետ բերեց Հաւլունի թուրը,
Իր երկրորդ որդուն հրամայեց կանչել Պաօշ թագաւորը:
«Ո՛րդի, մեռնում եմ, վերջին կտակս այժմ յանձնում եմ քեզ,
Բայց այն դեռ ևս իմ մահիցս առաջ պիտի կատարես»:
— «Հայրիկ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու,
Տո՛ւր ինձ, թէ կ'ուզես, Հաւլունի թուրը՝ աշխարհք քանդելու»:
«Այո, քեզ կը տամ Հաւլունի թուրը, աշխարհ մի՛ քանդիր»
Հաւլունի թուրը տար ու Խաչլուայ ծովը շարժարի»:
Առաւ նա նոյնպէս Հաւլունի թուրը, բայց Հօրը խաբեց,
Ո՛չ թէ ծով ձգեց, այլ Հօրից ծածուկ մի տեղ թագցրեց:

«Ո՛րդի, ի՞նչ արիր Հաւլունի թուրը,
Ձգեցի՞ր ասա՛, Խաչլուայ ծովը»:
— Այո՛, այո՛, հայր, Հաւլունի թուրը
Տարայ ձգեցի Խաչլուայ ծովը:

«Տեսա՞ր, ի՞նչ եղաւ Խաչլուայ ծովը,
Երբ որ ձգեցիր Հաւլունի թուրը»:
— Հայր, ոչինչ չեղաւ Խաչլուայ ծովը,
Բայց ես ձգել եմ Հաւլունի թուրը:—

«Դու էլ ես, դու էլ, սուտ ասում, գիտեմ,
Անարժան որդիս խաբում է Հօրը.
Գնա բեր շուտով, թէ չէ՝ կ'անիծեմ
Գլխիդ կը ճաքի Հաւլունի թուրը»:

Գնաց դողալով որդին, յետ բերեց Հաւլունի թուրը:
Իր երրորդ որդուն հրամայեց կանչել Պաօշ թագաւորը:
Բայց երրորդ որդին, մնացած երեքն էլ այնպէս արեցին,
Մինչև որ հերթը հասաւ եօթ որդոց ամենից փոքրին:
Եկաւ և փոքրը. «Ո՛րդի, դու գիտե՞ս՝ ինչեր եմ արած,
Բայց այժմ մեռնում եմ եօթ որդեքերանցով, բայց անտէրա-
ցած».

Գոնէ դո՛ւ լսիր վերջին կտակս, այժմ յանձնում եմ քեզ,
Բայց այն, որդեակ իմ. դեռ մահիցս առաջ պիտի կատարես»:
— Հայրիկ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու,
Ասա՛ թէ կ'ուզես՝ պատրաստ եմ Խաչլուայ ծովը ընկնելու:—
«Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում, որդեակ, Խաչլուայ ծովը մի՛ ընկնիր,
Կը տամ Հաւլունի թուրը. առ դու այն ծովը շարժարի»:
Օրը ուրբաթ էր. առաւ նա սուրը և ծովը ձգեց,
Եկաւ, դողում էր որսորդի ձեռքից փախած քօշի պէս:

— Ո՛րդի, դողում ես, ասա՛ ի՞նչ արիր.
Ծովը ձգեցի՞ր Հաւլունի թուրը»:
«Հայրիկ, սարսում եմ, այլ մի՛ հարցնիր,
Ո՛հ, ինչե՛ր չարաւ Խաչլուայ ծովը»:

Ձէի մօտեցած դեռ ևլս ծովին,
Արևն երկրնքում իր գլուխը թագցրեց.
Սև ամպից իջաւ սատանի քամին
Խաւար ու մըռայլ աշխարհս պատեց:
Մօտեցայ ծովին, ախ, մեր սիրուն ծով
Իր նախկին գոյնը այլ ևս չունէր.
Ժանտ գեւի նման՝ պրզաոր ջրերով
Մի համեղ որսի, կարծես, սպասում էր:

«Ծովը ձգեցի Հաւլունի թուրը —
Յանկարծ մի գոռոց ծովի յատակից —
Մեծ իրարանցում ծովի խորերը.
Ահեղ արձագանգ ձայնեց երկրնքից»:

Ջրերը լեռնացան ու իրար անցան,
Երկինք էր հասնում ծովի փրփուրը:
Յանկարծ մեր Խաչում բացեց իր բերան
Դեհ պէս կլանեց Հաւուհի թուրը:

Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում...
Որին նայեցի՝ ծովին, թ'երկընթին.
Իմ ոտքերի տակ երկիրն էր դողում —
Ես էլ թուլացայ և ընկայ գետին:

Կրկին նայեցի, — ոչինչ չը տեսայ,
Գիշերուան մռայլը աշխարհս էր պատել,
Ամպեր, ալիքներ դարսած իրար վրայ,
Երկինքն էլ երկրի հետ էր միացել:

Ծովի խորքերից բերաւոր ձայներ
Խառն ի խուռն ու խուլ պտըտում էին,
Կարծես բերաւոր քաջքերի գընդեր
Ծովի յատակում մարտնչում էին:

Հայրիկ, դողում եմ, այլ մի լիշեցնիր,
Ձեմ կարող պատմել ես իմ լեզուովը,
Հայրիկ, սարսում եմ, այլ մի հարցընիր.
Ո՛հ ինչե՛ր չարաւ Խաչուայ ծովը:

— Այո՛, այդպէս է, դու կատարել ես... ա՛ռ իմ օրհնութիւն:
Հանգիստ կը մեռնեմ. Լաթար քաղաքս էլ քեզ ժառանգու-
թիւն:

Անցան տարիներ ու դարեր անհետ,
Աշխարհիս վերայ շատ բան փոխուեցաւ,
Պռօշի սերունդն էլ նորա մահից լետ
Երկրիս երեսից շուտ անհետացաւ:

Բայց ժողովրդի սրտից չէ՛ կորել
Հաւուհի թրքի վառ պատմութիւնը,
Նա ոգևորուած միշտ կարայ պատմել
Պռօշ թագաւորի աւանդութիւնը:

Նա քեզ ցոյց կը տայ մի աւեր աւան,
Կ'ասէ. «Այստեղ էր Պռօշ արքան կենում,
Այս Լաթար քաղքից առիւծի նըման
Շըրջակայ ազգաց սարսափ էր ազդում»:

Նա քեզ ցոյց կը տայ մի պըղտոր լըճակ,
Կ'ասէ. «Տես, սա է Խաչուայ ծովը.
Հէյ ճամբորդ, սա չէ մի ծով հասարակ —
Այստեղ է թաղուած Հաւուհի թուրը»:

Թէ հարցնես նորան իբրեւ կարեկից՝
— Ինչո՛ւ է պղտոր ձեր ծովի ջուրը, —
Կ'ասէ. «Այսպէս է եղած այն օրից,
Երբ այստեղ ընկաւ Հաւուհի թուրը»:

Նա քեզ կը պատմէ, թէ ամէն ուրբաթ —
Խաչուայ ծովը փրփրում է կատղում,
Իրար է զարկում ջրեր լեռնացած՝
Ծովի յատակից ձայներ են լսում...

Իսկ եթէ սորա պատճառը հարցրիր,
Նա խորագէտի դէմք է ընդունում.
«Հ'էյ օտարական, էլ մի հարցընիր —
Քաջքեր են կուռում ծովի յատակում»:

Երբ որ Պռօշի փոքրահաս որդին
Տանում էր ծովը Հաւուհի թուրը,
Դեռ չէր մօտեցել նա ծովի ափին,
Երբ իրար անցան ծովի քաջքերը:

Կռիւ ու կոտորած ընկաւ նոցա մէջ,
Սուրն ընկղմուեցաւ Խաչուայ խորը,
Ահեղ կոտորած, բայց ոչ ոք չաղթեց
Եւ անտէր մնաց Հաւուլունի թուրը:

Ահա ան օրից ամենայն ուրբաթ
Խաչուայ ծովը փրփրում է կատողում,
Իրար է զարկում ջրերը լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսում...

Այդ հին կռիւն է կրկին նորոգւում,
Ընկնում են իրար վրայ կրկին քաջքեր.
Անցան տարիներ, կուռում են կուռում,
Հաւուլունի թըրին չեն կարում տիրել:

Բայց Պըռօշ արքան սուրը կախարդեց,
Որ երբ ցամաքի մեր ծովի ջուրը,
Պիտի մի կարիճ ծնուի մէկ անգամ
Աստուծոյ հրամանով առնէ այդ թուրը:

Բայց քանի՜ Հարիւր տարիներ անցան.
Ո՛վ կարայ պատմել, Պըռօշի մահուանից—
Հիմա քեզ Հարցնեմ, ո՞վ օտարական,
Ինչո՞ւ մի կաթիլ չէ պակսել ծովից»:

Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ.

79. ՀԱՅՈՑ ՄԵՐ ՏՕՆԵՐԸ

Յունուարը տալիս է Ծընունդ,
Փետրուարը՝ Տաճար Գալուստ.
Մարտը բերում է սուրբ Զատիկ,
Հետն էլ մի մեծ նաւակատիք:

Ապրիլը տալիս Աւետում,
Մայիսը՝ երկինք Համբարձում.

Յունիսը բերում է վերուստ

Շընորհաբաշխ Հոգւոյ գալուստ:

Յուլիսը միշտ փայլուն, պայծառ

Բերում է մեզ սուրբ Վարդավառ.

Օգոստոսը վեր երկընթում

Մաքուր Կուսի Վերափոխում:

Սեպտեմբերը Կոյսի Ծընունդ,

Հոկտեմբերը չունի սընունդ.

Նոյեմբերը Կոյս Ընծայում

Երից ամաց՝ Սուրբ Տաճարում:

80. ՏԱՌԵՐԻ ԺՈՂՈՎԸ.

(Ուղղագրութիւն)

Մի անգամ մեր բոլոր տառերը Հաւաքուեցան միասին
և խօսում էին իրանց արժանաւորութեան մասին: Ի Հարկէ,
ամէն մէկը իրան էր գովում, ինչպէս սովոր են սնապարծ
մարդիկ: Երեսունումի բաղաձայնները մի կողմը նստոտեցին,
եօթը ձայնաւորները՝ միւս կողմը: Խօսքի ծայրը բաց արին բա-
ղաձայնները: Ամենից առաջ տեղից վեր կացաւ թոն և ասեց.

— Պարոններ, դուք լաւ գիտէք, որ ես բաղաձայններիդ
մէջ Հասակով ամենքիցդ բարձրն եմ: Ինձանով է կազմւում
թախթն ու թագը, թագաւորն ու կաթողիկոսը:

— Ինձ բանի տեղ չէք դնում, պարոն, ձայն տուեց
փիւրը՝ ձեռքերով մէջքը բռնած: Եթէ ես չլինեմ՝ ճրտեղից
կ'ունենաք դուք այդ փառքն ու լիողը. ես որ չլինեմ՝ ո՞վ
կարող է ուտել լիւան ու քուլիթէն:

— Ասենք թէ ես ձայն չեմ հանում, ասեց տեղից վեր
կենալով սրածայր ջէն. Հասակով եմ պակաս ձեզնից՝ թէ

խօսք ու ջուղաբով: Կամ թագաւորն ինչպէս ջարդուփշուր կ'անի թշնամու գօրքը, կամ փլաւն ու քուփթէն ինչպէս կ'եփուի, եթէ ես չտամ ջուրն ու ջերմութիւնը:

— Վայ, հողը կենայ իմ գլխին, որ ձեր չափ էլ չլինեմ, ասեց վեր, որ հպարտ հպարտ ոտքը մեկնել էր մէջտեղը: Ես որ չլինեմ, ով կը տայ թագաւորին ու կաթողիկոսին իրանց լահանն ու վեղարը: Մի փոքր համեստ խօսեցէք. եթէ ոչ՝ վերջ կը գնեմ կեանքներդ, և կը հասնի ձեզ վահաճաւ վախճանը:

— Լաւ, լաւ, բաւական է, ինչքան պարծեցաք, ասեցին միւս բաղաձայններից մի քանիսը: Բանը միայն այն չէ, որ պարծենաք ձեր շնորհքով. բանն այն է, թէ դուք ձեր շնորհքով ինչ օգուտ էք տալիս ձեր եղբայրներին ու ազգին: Դեռ մէկ տեսնենք, թէ ձեզնից ո՞րն է շատ հարկաւորուում գրքերում ու գրութիւններում, յետոյ դատաստան կ'անենք: (Այս խօսքի վրայ այլի քէֆն եկաւ ու նրա կերպարանքը զուարթացաւ): Եթէ ոչ՝ մենք երեսունութը հոգի ենք. այդպէս մեզնից ամէն մէկը որ կանգնի իրան գովի, ուր կը գնայ:

— Պարոններ, տեղից ծանր ու բարակ վեր կենալով, ասեց Ֆէն, որ մի բեռնաւորած ճանապարհորդի էր նմանում, և համեստութիւնից ու, կարելի է, երկար ճանապարհ անցնելուց յոգնած՝ ամենից վերջն էր նստած: Զեզ լաւ յայտնի է որ ես բուն հայաստանցի չեմ, այլ Յունաստանից եմ գաղթել ու ձեր եղբայրութեան մէջ ընդունուել: Շնորհակալ եմ ձեզնից, մանաւանդ նրա համար, որ ինձ աւելի ներդրութիւն չէք տալիս. այլ միայն այն ժամանակն էք գործածում, երբ օտար երկրացի բաւ էք ուզում գրել: Անցեալ օրը ես ու մեր երկրացի պարան օն խօսում էինք ձեր մասին և եթէ կամենում էք, կը յայտնենք մեր կարծիքը...

— Խնդրում ենք, խնդրում ենք, ձայն տուին զանազան աթոռներից:

— Շատ գեղեցիկ, ասեց Ֆէն և շարունակեց:

Թո՛ղ թէպէտ ամենքիցդ մեծն է ու բարձրահասակը, բայց չնեղանայ, շատ քիչ է հարկաւորուում լեզուի մէջ: Նրա արժանաւորութիւնը միայն այն է, որ ինչ բառի մէջ էլ որ գրուում է թէ սկզբում, թէ մէջտեղը ու թէ վերջը, միշտ մի ձայն է հանում: Այսպէս էլ չեն փոխում իրանց ձայնը հետեւեալ եղբայրները. — գ, Ժ, լ, խ, ծ, կ, հ, ճ, մ, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, եւ ք:

— Ներողութիւն, Ֆէ՛ եղբայր, ասեց օն. թո՛ղ տուէք լիշեցնել ձեզ, որ հո՛ն՝ թէպէտ ձայնը չէ փոխում, բայց «ար» վերջացող բառերի վերջը գրուում է՝ առանց մի ձայն հանելու (1):

— Դատարկ խօսքը բաւական չէ, օրինակներ են պէտք, ձայն տուեց ճանճանճան ճէն:

— Համեցէք, ասեց օն, ահա օրինակները. — «Աշխարհ, խոնարհ, ճանապարհ»:

Այս միջոցին ռան, որ մի այսպիսի յարմար դէպքի էր սպասում՝ իր սրտում հաւաքուած բոլոր ցաւերը յայտնելու, վեր կացաւ պառկած տեղից ու ձայն տուեց.

— Ներեցէք, պ. Ֆէ, որ ընդհատում եմ ձեր խօսքը: Խօսքս իմ անուան մասին է: Հազար չորս հարիւր տարուց աւելի է, որ իմ անունս էր ռայ: Զգիտեմ՝ ինչ պատահեցաւ, որ մօտ քսան տարի է, էլ ինձ ռայ չեն անուանում...

— Այդ ընդհանուր տարաբաղադրութիւն է, ձայն տուին միասին բէնն ու գիմը. հին ժամանակուայ բէնն ու գիմը հիմա դարձել են բը, գը:

— Բայց, պարոններ, շարունակեց իր խօսքը ռան, ես այդ բանում ամենքիցդ էլ անբաղան եմ: Զեզ գո՛նէ ասում

են բը, գը. իսկ ինձ այդ պատուին էլ չեն արժանացնում. անգադար միայն այս կը լսէք՝ կոշտ ուր, փափուկ, բը: Չը գիտեմ, մեր ըէ եղբայրը ինչո՞վ է ինձնից փափուկ. կարծեմ, եթէ բանը փափուկութեանը մնայ, ինձնից ո՞չ ոք փափուկ չէ ապրում. ամբողջ օրը փափուկ պառկած եմ:

— Ես ինքս էլ գոհ չեմ, որ մեզ այդպիսի նորահնար անուաներ են տուել, ասեց ըէն:

— Ես էլ ձեր օրումն եմ, խօսեց միւս ծայրից հիւնը (ւ): Ձգիտեմ՝ ինչ իրաւունքով մեր վեւ եղբօրը անուանում են մեծ վը, իսկ ինձ՝ փոքրը: Կարծեմ, մեծութիւնը հասակի մէջ չէ: Աստծուց մեծ ոչ ոք չկայ, և սակայն «Աստուած» բառի մէջ վը լսւում է, բայց երբէք մեր վեւը չեն գրում, այլ միայն ինձ՝ նուաստիս:

Թէպէտ գոռող վեւի սրտին շատ դիպաւ այն չնչին հիւնի նկատողութիւնը, բայց թէնչ պէտք է անէր. հիւնի աւսածներն էլ ճշմարիտ էին:

— Բայց դեռ դրանով չէ վերջանում իմ գանգատը, շարունակեց ռան այրուած սրտով. ամբողջ Վրաստանում ես միայն գրքերումն ու թղթերումը կամ. ոչ խօսելիս, ոչ կարգալիս՝ երբէք իմ սեպակաւան ձայնս չէք լսի: Վրացախօս հայոց համար միւսնոյն է՝ ես կամ, թէ չկամ:

— Բայց, ռա՛յ եղբայր, ասեց Ֆէն, այս էլ պէտք է գիտենաք, որ մեր նու եղբայրը ամենեւին չէ դիմանում, երբ իրանից առաջ կողքին ցցուած է տեսնում (ներեցէք համարձակութեանս) այդ՝ վրաստանցոց սիրելի ըէին. աչքով չէ ուզում տեսնել նրան:

— Շնորհակալ եմ, պատասխանեց ռան, ես ու նուն շատ սիրով ենք վարւում միմեանց հետ. առնելու բան լինի, թէ խառնելու կամ բռնելու, նուից առաջ միշտ ես իմ նրաստած. նրա հետ ես մինչ անգամ պատրաստ եմ մեղներու (2):

— Ես էլ, ռա՛յ եղբայր, ասեց գլուխն ուղիղ բռնած զան, պէտք է ասեմ, որ դուք մեծ պատիւ էք վայելում մեր

մէջը. դուք հազա՛րն էք. հայերէն թուականներ գրելիս միշտ առաջ ձեր անունն է յիշուում. (Ռյիւր—1893):

— Այո՛, շատ չպէտք է յուսահատուել, ձայն տուեց Ֆէն: Հիմա արդէն մօտեցել է այն ժամանակը, երբ մենք ամենքս էլ կրկին մեր առաջուայ անուններով պէտք է կանչուենք:

— Ուղիղ է, ես շատ եմ սիրում ռային, ասեց գլուխը վեր բարձրացրած նուն. բայց շատ անտանելի է, երբ մէկ ինձպէսն էլ ուղիղ կողքին է կպչում. այն ժամանակ փոխանակ երկու ձայն հանելու՝ իմ մի ձայնս էլ է խլանում ու դժուար լսւում (3):

— Կարո՞ղ էք օրինակ բերել, հարցրեց չան, որ քիթը վեր բռնած՝ ականջ էր դնում ուշադրութեամբ:

— Ի՛նչպէս չէ, ահա՛, շարունակեց նուն. — Սեղաններ, քանոններ, թռչուններ. — Աննման, աննշան, աններելի:

— Կարելի՞ է, որ մի քիչ էլ մեր մասին խօսէք, ձայն տուին ըէնը, զիմը, ռան, ծան, ջէն, ռադն ու յին:

— Մեծ ուրախութեամբ, ասեց Ֆէն: Բայց, ցաւելով պէտք է ասեմ, որ ձեզ չեմ կարող գովել. դուք շատ շուտ էք փոխում ձեր ձայնը:

— Կարծեմ, մի փոքր սխալւում էք, պ. Ֆէ, ասեց ռադը, որ գլուխը կախ, կարճ պոչը ետեւը ձգած՝ ականջ էր դնում: Ինձ թւում է թէ մեզնից ոչ ոք չէ փոխում իր ձայնը՝ ոչ բառի սկզբումը, ոչ էլ վերջը: Ահա՛ ձեզ ասածիս հաստատութիւն. — «քամբակ, ունար. գազար, թագ. դանակ, բաղ. ճաւար, բրինձ. ջուր, քաջ. Ղազար, կաղ. յատակ...»

— Ներեցէք, պ. ռադ, պատասխանեց Ֆէն. ես էլ կարող եմ այնպիսի օրինակներ բերել, որոնց մէջ ըէնը փը է լրսւում. — Երբ, սուրբ, ուրբաթ: Այնպէս որ՝ երբ ըէից յետոյ փը լսուի, փիւրի փոխանակ պէտք է գրել ըէն (4):

—Շատ ճիշդ է, ասեց շան, որ սագի պէս կանգնած լսում էր բերած օրինակները. բայց տեսնենք թէ ինչ օրինակ կը բերէք գիմի ձայնը փոխուելու մասին:

—Այս ըստ էիս, ասեց Ֆէն. մեր եղբայր գիմը սովորաբար քէ է փոխուում. ահա ձեզ օրինակներ. — «Երգ, միւրգ, կարգ»:

—Հետաքրքիր է իմանալ, ասեց մի ոտքի վրայ կանգնած հոն, թէ ինչ կ'ասէք դայի մասին:

—Ահա դայի օրինակները. — «Վարդ, մարդ, բուրդ»: Տեսա՞ք, որ երբ ըէից առաջ քը է լսուում՝ գիմ ենք գրուում. երբ թը ենք լսում՝ դայ ենք գրուում (5):

—Այ դարմանալի բան, ասեց փորը դուրս գցած հըպարտ ծան. ամենքի ձայնն էլ ըէն է փոխուում. արդեօք նա ձայի ու ջէի ձայնն էլ կարող է փոխել:

—Շատ հեշտութեամբ, պատասխանեց Ֆէն. և բերեց հետեւեալ օրինակները. — «Արծակ, բարձ, վարձ. արջ, որջ, վերջ». լետոյ շարունակեց, տեսնո՞ւմ էք որ՝ երբ ըէից լետոյ լսուում է «ցը և չը», գրուում է «ձ և ջ» (6):

Այն ժամանակ բէնը, գիմը, դան, ձան ու ջէն երեսները դարձրին գէպի նիհար ըէն. բայց ինչ կարող էին անել. բանը ոչ նիհարութեան մէջն է, ոչ պարարտութեան մէջը. Աստուած շնորհք է տուել, նա էլ բանեցնում է:

—Շատ միւր նեղանայ, ասեց այդ հնգին Ֆէն, ձեր եղբայր դադն ու լին աւելի են հալուում մաշուում ձեր միւս եղբայրների ձեռքին:

Ղաղի ձայնը ըէն չէ փոխուում, բայց էլ տառ չէ մնում, որ նրա ձայնը չփոխի: Ահա ձեզ օրինակներ. — «Աղը, եղբայր. լաղթել, գաղթել. ծաղկել, ողկոյգ. դեղձ, մաղձ. խեղճ, խիղճ, պողպատ, կողպել. աղջիկ, եղջերու. բաղտ, պղտոր. քաղցր, քաղցած. մեղք, աղքատ»: Ուրեմն, երբ բ, թ, կ, ձ, ճ, պ, ջ, տ, ց, ք — տալը տառերից առաջ լսուի «խը», պէտք է գրել «ղ» (7):

Իսկ մեր լի եղբոր մասին էլ միւր հարցնի. ջուրն եկել է՝ նրան տարել: Այդ խեղճի ձայնը միայն բառի սկզբումն է լսուում, այն էլ համարեա միշտ ձայնաւորից առաջ. այսպէս՝ «Յատակ, յատուկ, յետոյ, լիշել, Յովսէփ, Յունուար»: Բառի մէջը նա ուրիշի ձայնն է հանում. այսպէս՝ «Այո, երկայն, երկնային, հրամայել, հոյակապ»: Իսկ բառի (մանաւանդ բաղմամբանի) վերջը հօ ամենևին չէ լսուում նրա ձայնը. այնպէս որ՝ եղած, չեղած — մի և նոյն է: Բառի վերջը միայն ա-ից և ո-ից լետոյ է գրուում, կարծես, նրա համար, որ իրանից առաջ եղած տառերը վայր չընկնեն: Ահա օրինակներ. — «Երեսայ, քահանայ, շղթայ. մեծանայ, վրայ. լետոյ, ներքոյ, լոքոյ» (8):

—Խեղճ լի, ասեցին ամենքն ու լռեցին:

—Վերջապէս, ասեց վիզը երկարացրած մէնը, ինչպէս է վերջանում մեր ժողովը, ինչ իմացանք:

—Ձեզ ամենիդ կարելի է բաժանել երկու մասի, ասեց Ֆէն, հաստատածայն (գ, թ, փ, լ, խ, ծ, կ, հ, ճ, մ, ն, շ, չ, պ, ու, ս, վ, տ, ը, ց, ւ, փ, ք) և փոփոխածայն (բ, գ, դ, ձ, ջ, զ, յ):

—Բայց գիտէ՞ք, պարոններ, ասեց մատանաձև օն, որ դուք ամենքդ ոչ մի բառ չէք կարող կազմել, եթէ ձեզ հետ չմիտնայ իմ վեց եղբայրներից մէկն ու մէկը: Մենք ինչքան ուզենանք, կարող ենք երկարացնել մեր ձայնը, իսկ դուք չէք կարող: Մենք որ չլինենք, աշխարհք կը խլանայ. էլ ոչինչ չի կարելի երգել: Մեր մէջը այնպիսին էլ կայ, որ եթէ մենակ էլ լինի, էլի մի նշանակութիւն ունի, մի բառ է. իսկ ձեզնից քանիսն էլ որ շարուեն իրար կողքի, էլի ոչինչ չի դուրս գալ: Դուք համը եք. մինչև մեզնից մէկը կողքներիդ չլինի, ձեզնից ոչինչ ձայն չի լսուի:

—Այդ ով է ձեր մէջը, որ մենակ էլ մի բառ է, ասեց ծաղրելով Ռեխը բաց արած խէն, չի կարելի որ ցոյց տաք:

—Այլիս վրայ, պատասխանեց օն: Զեր պատասխանը ձեր հարցի մէջն է: Ասում էք՝ «Ո՞վ է». մեր «է» եղբայրն է, ով է. ինչ որ կայ՝ նա է: Զեր անունն էլ որ խէ է, էլի նրանով է:

—Է՛հ, ասեց խէն զարմանալով, ա՛յ քեզ պողերաւոր տառ. երևի ձեր մէջը պոչաւորն էլ կը լինի:

—Պոչաւորն էլ կայ, ինչպէս չէ, ասեց օն, և այդ տառն է ըծը, որ համեստութիւնից պոչը միշտ առաջն է պահում: Եթէ նա չլինի, ձեզնից ո՛չ ոք ձայն չի ունենայ. . ապա թող մէկը առանց ըծի ասի՝ բը, գը, դը... Այս էլ կայ, որ՝ մեր ռայ եղբոր նման՝ մեր ըծն էլ վրացախօս հայերի հետ չէ կարողանում հաշտուել:

—Հին ցաւերս միք նորոգի, պ. օ, ասեց ըծը նեղանալով: Իմ բանը ուղիղ անձրևի նման է: Քանի որ անձրևը չէ գալիս, ուզում են որ գայ. հէնց որ գալիս է, իսկոյն փախչում թագնւում են նրանից: Մեր վրացախօս հայերն էլ այդպէս են վարւում հետս.—ինչ բառի վերջը որ ես չկամ, կարդում են, կարծես, առանց ինձ չեն դիմանում. իսկ ինչ բառի վերջը որ կամ, այնտեղ փախչում են ինձնից, անունս չեն տալիս. կարծես, ես նրանց որդին ու պանել եմ: Հազար բառ կը կարգան ու ինձ կը թողնեն անտէր, բառի վերջումը ընկած:

—Գուք էլ մեր ռայ եղբոր պէս շատ չպէտք է լուսահատուէք, ասեց օն. գուք էլ մի այնպիսի լաւ պաշտօն էք կատարում, որ մեզնից ո՛չ ոք չէ կատարում: Գիտէք, ինչքան լաւ է, որ տողը վերջանալիս կամ ոտանաւորի մէջ նստում էք մեր բաղաձայն եղբայրների մօտը:

—Շնտ լաւ, ասեց ատամները բաց արած պէն. բայց ես ուզում եմ իմանալ՝ արդեօք ձեր մէջն էլ կան ձայնը փոխողներ:

—Միայն երկուսը, պատասխանեց օն՝ եչ և ո. ահա «ե»-ի օրինակները. —«Գրել, նեղ, տեղ, քարեր, գրեց, գեղեցիկ»: Միայն մարդկանց անուններում «ը»-ից առաջ «է» է գրւում. «Աբէլ, Գաբրիէլ, Միքայէլ» (9):

Երկու բան ամենախն չէ սիրում եչը. իրանից լետոյ վելին, և որ սպանէք՝ բառի վերջը չի նստի: Մի բառ չէք գտնի, որ վերջը եչ լինի գրւած. այլ էլի մեր սիրելի էն կը գայ: Իսկ եթէ ե-ից լետոյ անպատճառ հարկաւոր է վ ձայնը, այն ժամանակ մեր եչը միանում է ձեր հիւնի հետ, իրար են փաթաթւում և գուրս է գալիս մի նոր տեսակ տառ, այն է «և»: Օրինակ. «Արև, անձրև, տերև. Երևան, հարևան, անձրևային»:

—Իսկ ո-ի մասին ինչ կ'ասէք, մէջ ընկաւ քիթ ու պռուկը փաթաթած գիմը:

—Իմ սիրելի եղբայր ոն, պատասխանեց օն, ինչտեղ ես ուշ ուշ եմ երևում, իմ ձայնն է պահում, այսպէս. «Խաղող, շողալ. հացով, սովորել. խմոր, գորտ»: Առհասարակ, երբ բառի սկզբումը վօ է լսւում, միշտ ո է գրւում. օրինակ՝ «Որդի, ոսկի, ոչխար, ոտք» (10):

—Հետաքրքիր է իմանալ՝ ուն բաղաձայններէս կողմն է, թէ ձայնաւորներիդ, հարցրեց պոչը կախ ոլորած ցոն:

—Մեր խմբիցն է, պատասխանեց օն, բայց աւելի ձեզ է սիրում. բաղաձայնից լետոյ միշտ ու է գրւում, այսպէս. «Աստուած, թշուառ, զուարթ» (11):

Մի բան կայ միայն, որ՝ երբ վը ձայնից լետոյ ում է լսւում, այն ժամանակ, որ երկու ուն իրար հետ չկուռնեն, առաջին ուն իր ոն թողնում է, և գրւում է՝ «Յանւում է, տանջւում է»:

Իսկ ձայնաւորից լետոյ, երբ լսւում է վը, միշտ գործ է

ածւում «ւ», միայն «ո»-ից յետոյ՝ ոչ. որովհետեւ այն ժամանակ երկուսով ու ձայնն են հանում: Օրինակ. «Հաւ, նաւակ, զաւակ. հովիւ, ցաւ, հիւանդ» (12): Ստուգած ազատի ձեզ ամէն ցաւից ու հիւանդութիւնից, ամէն. ասեց օն և կրծկուեց ու կոլոլուեց իր ֆէ եղբօր կողքին, և յոգնած մի օ՛ֆ ասեց ու ուզում էր նիստը փակել:

Բայց այբը, որ սկզբից մինչև հիմա անանջ էր դնում բոլոր խօսակցութիւններին, ծանր ու բարակ ոտքի կանգնեց ու ասեց.

— Ի՛մ սիրելի եղբայրներ՝ թէ՛ ձայնաւորներ ու թէ՛ բաղաձայններ, թէ՛ հաստատաձայններ ու թէ՛ փոփոխաձայններ. կեզ լաւ է յայտնի, որ Ստուգած ինձ ստեղծելով՝ այնքան սիրեց, որ իր անուան առաջին տառը ինձ տուեց, և առաջին անգամ իմ ձայնը արարատից հնչեցրեց աշխարհիս բոլոր կողմերը: Բացի սրանից՝ դուք տեսնում էք, որ երբ մեզ կարգով շարում են, առաջին տեղը ինձ են տալիս ոչ միայն մեր հայերը, այլ և աշխարհիս բոլոր ազգերը: Եւ նիստը ես պէտք է բաց անէի, բայց մեր օտարազգի եղբայրներին պատուելու համար՝ նիստը բաց անել տուի ֆէին, իսկ մեր խմբի կողմից խօսելը յանձնեցի օ-ին, որոնք ամենայն քաղաքավարութեամբ կառավարեցին մեր նիստը:

Իսկ այժմ նիստը փակելուց առաջ՝ ուզում եմ մի թեթեւ նկատողութիւն անել պ. օ-ին: Եւ խօսքս սկսում եմ վերջին երկու բառից՝ «քաղաքավարութիւն» և «կառավարել»:

Եթէ չեմ սխալում, պ. օ-ն ասեց, որ ձայնաւորից լետոյ, երբ լսում է վ-ը, միշտ գրում է «ւ»: Բայց ես պէտք է ասեմ, որ՝ երբ ես երկու բառ եմ կապում իրար հետ, այն ժամանակ ես ինձնից յետոյ սիրով ընդունում եմ վեւէին, որ այս նիստում մի անգամ վիրաւորուեցաւ «ւ»-ից: Ահա խօս-

քիս հաստատութիւնը՝ «քաղաքավարութիւն, կառավարել»: Եւ չի էլ կարելի նեղացնել վեւէին՝ այդպիսի դէպքերում, որովհետեւ երկրորդ բառը հենց վեւով է սկսւում («վարք, վարել»): Այդպիսի օրինակներ էլ կարելի է բերել՝ «մսավաճառ, արագավազ, հաստավիզ» (13):

— Շնորհակալ եմ ձեր ուշադրութեան համար, ոտքի կանգնելով ասեց վեւէն և գոհ սրտով նստեց տեղը:

— Չարժէ, ասեց այբը, ես միայն իմ պարտականութիւնս կատարեցի, և շարունակեց: Դուք լաւ գիտէք նոյնպէս, որ ես առհասարակ ամենքիդ սիրում եմ հաւասարապէս, ամենքիդ հետ էլ լինում եմ. մի տողի մէջը երեք բառ չի պատահի, որ ես մէջները չլինեմ. բառ էլ կայ, որի մէջը երեք չորս տեղ եմ լինում: Ել չեմ ասում, որ Հայոց լեզուի բառերի մէջ ամենաշատ գործածուող տառը ես եմ, և Հայերէն բոլոր բառերի ութ մասից մի մասը միայն ինձանով է սկսւում: Դեռ այս ոչինչ. բառարաններում, անուանացուցակներում, թուահամարներում—առաջին տեղը միշտ ես եմ բռնում: Մի խօսք էլ ասեմ մեր յի եղբօր մասին ու վերջացնեմ:

Դուք գիտէք, որ ես երեք մատն ունեմ: Պէտք է ասեմ, որ ինձ համար բաւական անյարմար է, որ մեր յի եղբայրը, երբ ես բառի վերջն եմ լինում նստած, գալիս է ու առաջս է նստում: Յանկալի էր, որ երբեմն էլ ինձ մենակ թողնէր, որովհետեւ իմ եղբայրներին ես շատ անգամ վերջին ծայրից էլ եմ ուզում նայել:

Այս խօսքերի վրայ չին, որ մի ժամ առաջ, քիչ մնաց խայտառակուելուց գետինը մտաւ, սրովհետեւ ֆէն ասել էր որ նա բառի վերջը ամենևին ձայն չէ հանում,—էլ չգիմացաւ, թողեց ժողովն ու իր աթոռը մի կողմը դնելով՝ դուրս գնաց:

— Այդքան նեղանալն ինչ հարկաւոր էր, ասեցին չիի կողքին նստած տառերը. ամէն լեզուի մէջ էլ կայ այնպիսի

տառ, որին միայն շնորհքի համար են գործ ածում: Ինչ է ռուսաց լեզուի մէջ «Ծ»-ն. ով է լսել երբ և իցէ նրա ձայնը:

— Դեռ «Ծ»-ը ոչ մի բառի առաջն էլ չէ գրւում, ասեց ետեւի նստողներից մէկը:

— Այդպէս որ լինէր, ռուսաց տառը վաղուց պէտք է ջուրն ընկած, խեղդուած լինէր, աւելացրին երրորդ կարգի ամուսնները:

Սրանից յետոյ այբը շարունակեց իր խօսքերը: «Ես կը- խնդրէի մեր եղբայր լինի, որ առաջին՝ մարդկանց, քաղաք- ների, գիւղերի, սարերի, ձորերի անուններից յետոյ (որոնցից աշխարհումս միայն մի հատ կայ), չնստի ինձնից յետոյ, վեր- ջին ծայրին: Վերջապէս անպատուութիւն է, որ այդպիսի պա- տուական բառերի վերջը նստի մի այնպիսի տառ, որի ձայնը ամենեւին չէ լսւում (ահա այդպիսի բառեր՝ «Աննա, Ովսան- նա, Ասիա, Մոսկուա»: Երկրորդ՝ մի քանի կարճ բառերի վերջը, որոնցով ես ուզում եմ առաջին մատն քարձրացրած՝ առարկաները ցոյց տալ (ինչպէս՝ «Սա, դա, նա. սրա, դրա, նրա»): Եւ երրորդ՝ մէկ էլ այն տեղերում, որտեղ ես միջին մատն քարձրացնելով՝ հրամաններ եմ տալիս (ինչպէս՝ «Ասմ, գնա, կարգա») (14):

Այժմ, պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ նիստը փա- կուած է:

Այս խօսքերից յետոյ՝ ամենքը շտապով վեր կացան ի- րանց տեղերից ու դուրս գնացին՝ դրսի մաքուր օդը ծծելու և զովանալու համար:

Իսկ նեղացած յին մի քանիսի հետ խորհուրդ արեց, որ մեծ մեծ խօսող այբին մի քիչ խելքի բերեն, ու նրան խո- նարհեցնեն իր բարձրութիւնից: Յին լիշեցրեց իր ընկերնե- րին այբի այս հպարտ խօսքերը, թէ՛ «Մի տողի մէջ երեք բառ չի պատահի, որ ես մէջները չլինեմ»: Մի քանիսը այդ

խօսքերից նոյնպէս նեղանալով՝ նստեցին ու այնտեղեւթ մի առակ գրեցին «Մըջիւնի և Թռչնիկի» մասին, և հետեւեալ առաւօտը այդ գրուածքը լին վեր առաւ, ու լուռ ու մունջ, ինչպէս իրան վայել էր, տարաւ դրեց այբի գրասեղանի վրայ, ու ինքը դուրս եկաւ:

ՄԻՋԻՆ Ե ԹՐՉՆԻԿ.

Մի խեղճ փոքրիկ մըջիւն՝ մի ծուռ ու մուռ կոճղի վրէն զգոյշ չգրօսնելու միջոցին, գլորուեց դէպի գետը. և փոքր էր մնում, որ խեղդուէր: Ողորմելի զեռունը երբեք յոյս չունէր, թէ մի որ և իցէ տեղից օգնութիւն կը լինի: Նոյն ըոպէին մի սիրուն թռչնիկ՝ որ նստել էր եկեղեցու գմբէթի գլխին, տեսնելով մըջիւնի նեղ դրութիւնը, շփո- թուեց, մորմոքուեց իր քնքոյշ սիրտը և վճռեց օգնել խեղ- դուողին. մի տերև ձգեց ջուրը, և փրկեց խեղճ զեռունին:

Մէկ օր էլ մի որսորդ տեսնելով մեր մըջիւնին փրկող թռչնիկին, որ կտուցը փետուրների մէջ կոխել՝ քնել էր իր բնի մօտ, ուզեց մեռցնել խղճուկին: Վերջը մեր խենթ որսորդը հէնց որ հրձիգը վերցրեց և ուղղեց, որ գլորի խեղ- ճին, իսկոյն, որտեղից որ էր, մեր մըջիւնը մէկ էնպէս պինդ կծեց որսորդի ձեռքը, որ վերջինս կսկծից դէն ձգեց հրձիգը, և էսպիսով միջոց տուեց մեր սիրուն թռչնիկին թռչելու հեռու, խիստ հեռու:—

Այբը այս գրուածքը կարդալով ինչ պէտք է մտածէր: Այն պատճառով լին նրա սեռեակից դուրս գալով ասեց. «Թող կարգայ, ու որտեղ իրն ասի, այնտեղ էլ իմն ասի»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեծ—փոքր, աւագ—կրտսեր, ծանր—թեթեւ, երկայն—կարճ, հաստ—բարակ, լայն—նեղ, կոշտ—կակուղ, կարծր—հեղուկ, խոշոր—մանր, չոր—թաց, թանձր—նոսր, խոր—երես, բարձր—ցած, սուր—բութ, հին—նոր, լիք—դատարկ, փակ—բաց, քաղցր—դառը, տաք—սառը, պարզ—պղտոր:

Բարի—չար, հպարտ—խոնարհ, պարկեշտ—լիբբ, երջանիկ—թշուառ, արդար—մեղաւոր, ժիր—դանդաղ, հարուստ—աղքատ, առողջ—հիւանդ, աշխատասէր—ծուլ, խելօք—չիմար, քաջ—երկչոտ:

Սրու—էգ, ծնող—զաւակ, տէր—ծառայ, տիկին—աղայիին, հսկայ—թզուկ, բարեկամ—թշնամի, պարտապան—պարտատէր, հոգի—մարմին, ուսուցիչ—ուսանող, ամբողջ—մասն, սկիզբ—վերջ, առաստաղ—յատակ, կեանք—մահ, Արարիչ—արարած, օգուտ—վնաս, սէր—ատելութիւն, լաց—ծիծաղ:

ՀԱՄԱՐՈՍ ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

I.

Ուսումնարան, վառարան—գիւղացի, քաղաքացի—ուսուցիչ, նկարիչ—հիւանդանոց, աղքատանոց—ձիւղոր, զօրաւոր—տնակ, նաւակ—որսորդ, ճանապարհորդ—հայրիկ, մայրիկ—Հայաստան, Վրաստան—ուտելիք, խմելիք—ուսումնական, հոգեւորական—ոսկեղէն, կանաչեղէն—ուժեղ, համեղ—փայլուն, սողուն—համաձայն, համակարծիք—արծաթեայ, պղնձեայ—բրդոտ, մազոտ—տգէտ, տհաս—տարաբաղ, տարազնայ—անտուն, անտէր—երկրագործ, ձեռագործ—օրական, ամսական—բարեկամաբար, քաղցրաբար—մեծա, ցաւ, գլխացաւ—երգող, գրող—արտորայք, դիւղորայք—դասատուն, աղօթատուն—երկարատեւ, կարճատեւ—վերադառնալ, վերաքննել, — դժգոյն, դժբաղտ—հասակակից, ընկե-

րակից—կիրականամուտ, ամսամուտ—սառցապատ, ցողապատ—տանձենի, խնձորենի—մանուկ, պատանի—աւագ, կրտսեր—աւագ եղբայր, աւագ քահանայ—երջանիկ, ապերջանիկ—թէպէտ, բայց—որովհետեւ, ուստի—ինչո՞ւ, որովհետեւ—սար ու ձոր—մեծ ու փոքր—նստել, կանգնել—նոր շոր, նոր հասկացայ—գլուխ—կատար—մայր—գործ, գործել—գիր, գրել—ջուր, ջրել—շէն, շինել—լոյս, լուսանալ—կտրել, կտրտել—ձագեր, հօտեր: Ն ո յ ն ա ն ի շ և Հ ա կ ա ն ի շ բառեր:

II.

(ա) Աննա, Ուսաննա.—Սա, դա.—Գնա՛, ասա՛.

(բ) Սուրբ, երբ.—Հինգշաբթի, շաբաթ. Ամբողջ, ամբար.

(գ) Երգ, միրգ.

(դ) Մարդ, վարդ.

(ե) Բերան, դերձակ.—Մեղր, տեղ.—սենեակ, Գրիգորեանց.—Հացեր, քարեր—սեղաններ, թռչուններ.—Նաւապետ, խմբապետ.

(զ) Զգալ, զգեստ.

(է) Բոպէ, Հեղինէ.—Աղուէս, հանգէս, այսպէս.—Միքայէլ, Սամուէլ.

(ծ) Կանգնած, նստած.

(հ) Նանապարհ, աշխարհ.—Արհեստ, օրհնել.—Հինգ, հարիւր.

(ձ) Արձակ, բարձ.

(ղ) Եղբայր, կողք.

(յ) Երեխայ, երկաթեայ.—Նայել, հրամայել.—զգայարանք, վկայական.—զգայուն, ծառայութիւն.—յանկարծ, յառաջադէմ.

(ո) Որդի, ոսկի.—խոշոր, մորեխ.—գող, տող.—բրդոտ, մազոտ—կով, գրելով.—Պետրոս, օգոստոս.

(ջ) Վերջ, արջ.

(ռ) Բռնել, խառնել.

(վ) Արագավազ, նաւավար.

- (ը) Երրորդ, Հինգերորդ.
 (ը, ու) Կրկնալ, մրմռալ.
 (ւ) Խաւար, հաւ.—Հիւանդ, հաշիւ.—արիւն, եղբայր.
 (ու) Դժուար, Աստուած.
 (ոյ) Երեկոյ, յետոյ.—քոյր, լոյս.
 (և) Արև, տերև.
 (այ) Հալը, սալլ.
 (օ) Արօտ, կարօտ—Տօն, սլաշտօն. Հետ, յետ.—Բաղտ, բախտ.—Հարիկ, յարիկ.



Յ Ա Ն Կ

Ա. ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴ

	Երես
1. Հինգ մատը (Ս. Ստիպարեանց)	5
2. Մարդուս անդամների գանգատը	6
3. Առաւօտ (Գ. վ. Սրուանձտեանց)	7 +
4. Առաւօտեան աշխատանք (Րաֆֆի)	9
5. Կոյրը և կաթը (Տոլստոյ)	11
6. Մայիս (Հ. Ղ. Ալիշան)	12
7. Գարուն	13
8. Արձագանք	14
9. Մայր	15
10. Մայրիկս (Մ. Մամուրեան)	16
11. Սողոմոնի դատաստանը	17
12. Երկու խօսակցութիւն	19
13. Գարնան աշիւն առաւօտ (Րաֆֆի)	20
14. Ագահութեան հետեանքը (Ս. Նազարեանց)	21 +
15. Հօր ու Մօր ու Մ (Սամուէլ Գիւլաղեանց)	22
16. Մօր աչքերը	25
17. Բանը ասելը Հ. բանը անելն է	26
18. Էշը դադի, ձին ու տի (Ա. Արարատեանց)	28
19. «Ինչ կը ցանես, էն կը հնձես»	30 +
20. Որդիական սէր.	31
21. Ամպեր (Կ. Մ. Շահնազարեանց)	33
22. Յուլիսի շոգը (Րաֆֆի)	—
23. Պարտիզական (Ղ. Աղայեանց)	34
24. Ամարային միջօրէ (Շահվերդեանց)	35
25. Ամարային գիշեր (Գ. վ. Սրուանձտեանց)	36
26. Ստահակ որդին (Մ. Մամուրեան)	—
27. Գաշտը (Սրինգ)	37

28. «Ագռաւի ձէնը թէ որ Աստօծ լսէր, Վարդավառին ձուն կը դար»	38
29. Հղօրի առաջ թէ և յանդաւոր— Անդօր արդարն է լինում մեղաւոր. (Գ. եպ. Այվազեան)	39
30. Ծերացած գայլը (Գ. Բալասեանց)	41
31. Հ ո վ ու ի երգը (Րաֆֆի)	44
32. Երկու ապտակ (Ս. Էթմեքճեան)	45
33. «Ուրիշի ձեռքով փուշ քաղի»	47
34. Մի հոգի երկու մարմնի մէջ	49
35. Աստուած ամէն բան տեսնում է	50
36. Հ ի ն զ Ե յ Ե (Ղ. Աղայեանց)	—
37. Երջանիկ մարդը	53
38. Աշուն (Ա. Արարատեանց)	55
39. Անան պատկերը (Պ. Պոռնեանց)	—
40. Ա շ ն ա ն տ եր և ն եր (Կ. Մ. Շահնազարեանց)	56
41. Փոթորիկ (Ս. Արովեանց)	57
42. «Խեղճ մարդը իր խելքի խեղճն է»	58
43. Չ մ ե ո (Գ. Բալասեանց)	59
44. Չմեռը գիւղում (Ա. Արարատեանց)	60
45. Չմերային առաւօտ (Ս. Արովեանց)	61
46. Չ ի ն (Գամառ-Քաթիպայ)	—
47. Չմերային գիշեր (Ս. Սափարեանց)	62
48. Վեհանձնութիւն	63
49. Տ ա ր ու ա յ չ ո Ր ս ե ղ ա ն ա կ ն եր ը (Րաֆֆի)	64

Բ. ՏՈՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

50. Օջաղ (Ա. Արարատեանց)	67
51. Երկրագործութիւն (Գ. Բալասեանց)	68
52. Երկրագործ (Կ. Մ. Շահնազարեանց)	73
53. Կալոցը (Յ. Գեղամեանց)	74
54. Կ ա լ ի երգ (Ա. Արարատեանց)	75

55. Բարեկիրթ հայ աղջիկ (Ս. Արովեանց)	76
56. Բրուտն ու երկրագործը (Ա. Արարատեանց)	77
57. Չկնքի մասին (Նղ. Պ...եանց)	79
58. Հ ա ց թ ու խ Մ Ր տ ո ն (Յ. Գեղամեանց)	80
59. Ճաշի սովորութիւն (Ս. Արովեանց)	81
60. Պապն ու թռուները (Պ. Պոռնեանց)	82
61. Ա ս տ ղ եր (Գ. Բարխուդարեանց)	86
62. Փողի նշանակութիւնը (Ս. Արովեանց)	88
63. Գ ի լ ղ ա ց ի ն ք ա ղ ա ք ա ց ու ն	89
64. Գիւղն ու քաղաքը (Րաֆֆի)	90
65. Բառախաղ և շուտասելուկ (Գ. Յովհաննիսեան)	91
66. Ա շ ը Ղ Ղ ա Ր ի Բ ի հ ա ն ե լ ու կ ը (Աշըղ-Ջիւանի)	94
67. Ջ ի Ր ի տ (Պ. Պոռնեանց)	95
68. Ջիրիգ գցող Աղասին (Ս. Արովեանց)	96
69. Ա Ր տ աւ ա ղ դ (Րաֆֆի)	98
70. Ժրաջան պառաւը (Ա. Արարատեանց)	100
71. Մ շ ա կ (Րաֆֆի)	101
72. Բիւրապատիկ (Գ. վ. Սրուանձտեանց)	102
73. Օ Ր ո Ր (Պ. Պոռնեանց)	107
74. Օ Ր ո Ր	108
75. Իմաստուն ջուհակը (Գ. վ. Սրուանձտեանց)	—
76. Կեղծ կախարդը (Գ. Տ. Աղեքսադրեանց)	110
77. Ուղտը մի գրող (Յոնյ)	113
78. Խ ա չ լ ու ա յ լ ի ճ ը (Գ. Աստուածատրեանց)	114
79. Հ ա յ ո ց մ ե ծ տ ո ն եր ը (Եօրինող)	122
80. Տառերի Ժողովը (Եօրինող)	123

ՅՈՐԻՆՈՂԻ ԳՐԱԽՈՐ ՎԵՍՏԱԿՆԵՐԸ

Ա. Դ ա ս ա գ ը ք ե ը ը.

Ռ. Կ.

1. «ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ» ա. մասն—Արձակ, երրորդ տիպ, 1889 1 25
2. «ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ» բ. մասն—Բանաստեղծութիւններ, 1884 1 25
3. «ՀԱՅՈՅ ԱԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» 2որրորդ տարի, չորրորդ տիպ, 1892 » 60
4. «ՀԱՅՈՅ ԱԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» երրորդ տարի, չորրորդ տիպ, 1892 » 40
5. «ՀԱՅՈՅ ԱԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» երկրորդ տարի, երկրորդ տիպ, 1888 » 35
6. «ՀԱՄԱՌՈՍ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» աշխարհիկ լեզուի, 1887 » 20

Բ. Մ ի ւ ս ե ը կ ե ը ը.

1. «ՀԱՅՈՅ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾ ԳԼՏԱՐՈՒԹԻՒՆԸ, 1883 » 50
2. «ԱՆԵԿԴՕՏՆԵՐ», հատոր ա., 1876 » 50
3. «ԱՆԵԿԴՕՏՆԵՐ», հատոր բ., 1877 » 50
4. «ԱՆԵԿԴՕՏՆԵՐ», հատոր գ., 1883 » 50
5. «ՆԱԽԱԳԱՀԱՐՄՈՒՆԲ», 1877 » 50
6. «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ», 1882 » 20
7. «ՊՕԼՈՒԻՄՊԵՐԻԱԼ», 1877 » 20
8. «ՕՐԱՅՈՅ», Հինգերորդ տարի (Ընդարձակ Յաւելուածով), 1892 » 20



5m

2013

4081

«Ազգային գրադարան»



NL0060783

